



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

B 1,211,561









63319

ԳԵՐԵԳԻՆ Վ. ՅՈՒ. ԽԵՂԵԿԵՆ.

ԽՈԱՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻԶ

(Հ. ԴԱՐ)

— 0 —

Պ. Ա. Տ. Ա. Կ. Ա. Ն. - Մ. Ա. Տ. Ե. Կ. Բ. Կ. Կ. Ե.

ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹԻՒՆ.

I.

Արտասպած «ԱՐԱՐԱՏ» ամսագրից

ՎԱՐԱՐԴԱՐ

ՏՊԱՐԱՆ, ՄԱՅՐ ԱԹ. Ա. Լ. Զ. Մ. Ի. Ա. Ն. Ի.


1899

3319

Hovsepyan, Garegin
Khosrovik Targmanich...
ԳԱՐԵԳԻՆ ԿՐԴ. ՅՈՒՆԻՓԵԱՆ

ԽՈՎՍԵՊՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

- Հ. Դար -



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

1899

Տպարան Մայր Աթոռոյ Ս.

Է ՀՄԻՒԹԵՆԻ

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

GIAU

EREN


734

BUHR

CEAN
TET
SIS
O. 43

ԽՈՍՔՈՎՀԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ

(L. 1947).



8

ԽՈՍՐՈՎՀԻԿ Թարգմանիչը Հ. դարու սա-
կաւաթիւ և անդիմ մատենագիրներից մէկն
է և նորա երկը մեր եկեղեցու պատմութեան և
գաւանաբանութեան կարեւոր մի յիշատակա-
րան։ Ծառ ժամանակ չէ անցել նորա յայտնու-
թեան օրից, որի առիթն եղաւ մեր շնորհու-
նակ միաբանակից Գալուստ Տ. Մկրտչեան։
1892 թ. «Արարատ»-ի Դ. Համարի մէջ նա-
մի Հատուած հրատարակեց «Արտասանու-
թիւն Խոսրովկայ թարգմանչի ի մենամարտիլն
Դաւթիւ և Դոփիադու վերնագրով, Համա-
րելով այն Ղազար Փարպեցու յիշած» Խոս-
րովիկ Թարգմանի գործ։ Բայց ոչ այլ ինչ էր

* Բուղթ առ Վահան 1873. էր 609.

այն, եթէ ոչ Պիտոյից գլուխը * Այս
գրութեան յառաջարանի մէջ Միտրանը մէջ է
բերում և մի ուրիշ հատուած «Խոսրովկայ-
թարզմանչի հայոց» Առ այնուիկ, որ ասեն քնու-
թեամբ անձեւ եւ անոկիզմն ընկալեալ զմարդ-
կութիւն Աստուած բան ի կուսէն» վերնագրով
դարձեալ նոյն հեղինակի գործ համարելով:

Սակայն Տ. Գիւտ Աղանեան, որ ունէր
Խոսրովիկ թարզմանչի երկի ամբողջութիւ-
նը ** և Հ. Բ. Սարգսեան, վենեակի Միկ-
թարեաններից *** , հեղինեցին այս կարծիքը:
Հ. Աղանեան Խոսրովիկին է. գարու հեղինակ
էր համարում և ժամանակակից Եղի կտթու-
ղիկոսի, իսկ Հ. Սարգսեան Է. գարու: Ի վեր-
ջոյ Վիճնայի Միկթարեաններից Հ. Յ. Տա-
շեան մի գեղեցիկ յօդուածով ամփոփեց թեր-
և՝ դէմ վիճարանութիւնները յայտնելով և
իւր կարծիքը Խոսրովիկ ժամանակի մասին:
Հ. Տաշեան ևս նորան Է. գարու և Օձնեցու

* Ավագիսի Խորենացւոյ մատենագրութիւնք-
Վենեարկ 1843. եր. 537.

** Ցարարազգապար չկարողացանք ձեռք բե-
րել Հ. Աղանեանցի յօդուածը: Որ տպուած է Ար-
ձագանը № 64, 1892, Բովանդակութիւնը մեզ
յայտնի է Հ. Ցաշեանի յօդուածից:

*** Խոսրովիկ թարզմանչին և Միտրանի
ըրած մի նոր գիւտի առթիւ. Բազմավեպ. 1892-
Այլիս:

Ժամանակակից անձն է համարում: Մենք
յանձնարարում ենք այդ զրուածքը այն ըն-
թերցողներին, որոնք լնդհանուր գաղափար
ստանալ կկամենային: Խոսրովիկի քննտկան
գրականութեան և ձեռագիրների մասին: *
Ի պութիւն չ. Տաշեանի յօղուածի աւելաց-
նում՝ ենք, որ Մայր Աթոռի Ձեռագրատանը
Խոսրովիկի երկու ձեռագիր ունինք № 518 (մ. ց.
505) և № 56 Դ. ց. բացի այն պատառիկը, որ
№ 655 (641) Մ. ց. ձեռագրից հրատարակել
է Միաբանը: Մեր ուսումնասիրութիւնը կա-
տարել ենք այդ երկու ձեռագիրների վերայ: **

Բ.

Ուսումնասիրութեան բուն գործին անց-
նելուց առաջ, անհրաժեշտ է մի քանի տե-
ղեկութիւն տալ Խոսրովիկի երկի բովանդակու-

* Մատենագրական մանր ուսումնասիրու-
թինք. — Ազգային մատենագրարան Ծ.Զ. 1895. Եր. 49.

** № 518 մի նստագիր ձեռագիր է,
թուական անյայտ, բայց հնագրական տեսակետից
կարող է ժԷ. — ԺԼ. գարում գրուած լինել: Ստա-
ցողն է ուն Սահակ, որ երկար ժամանակ մաքառել
է Հայոց եկեղեցու հակառակորդների դէմ: Նոտրա-
դիր է նոյնպէս № 56-ը. որ գրուած է 1850
թ. Տ. Պունկիանոս Տ. Յտեփանեանի ձեռքով, Վը-
րաստանի և Տայոց գաղթականների կառավարիչ
Կարապետ եղիսկոպոսի հրամանով: Երկու ձեռա-
գիրների մէջ միմեանց հետեւմ են ա) Անանիա

թեան մասին, մանաւանգ որ տպագրուած չլինելու պատճառով անյայտ է բանասէր հասարակութեան։ Խոսրովիկ թարգմանչի գիրքը հինգ մասից կամ զլուխներից է բաղկացած հետեալ վերնագիրներով։

- ա. Խոսրովկայ թարգմանչի Հայոց Առ այնոսիկ, որ ասեն քնութեամբ անձեւ անսկիզբն ընկալելայլ զմարդկութիւն Աստուած զան ի կուսէն։
- բ. Յաղագս, թէ պարտ է զմարմինն Տէրունական համագոյ ասել Աստուածն բանի, կամ մարմնոյն եւ բան ի մի քնութիւն ասել, թէ ոչ։
- գ. Առ այնոսիկ, որ յերկուս զմարդկայինքն անջատեն քնութիւն, այլ գոլ ասեն յառաջ քան զյանցանոն եւ այլ զկնի յանցանաց։
- դ. Առ այնոսիկ, որ տարակուսին ի վերայ վրկչական կրից մարդկայնոց, թէ քնական պարտ է ասել թէ անքնական։ Այս մասը մի թուղթ է ուղղուած Անտիոքի Աթանաս պատրիարքին։

Վարդապետի Հայոց—Բան հականառութեան ընդդէմ երկարնակաց բ) Խոսրովիկ բարգմանի երկերը և գ) Յովհաննու յահանայի դաւանաբանական մի երկը—Յաղագս նշանակ հաւատոյ նիկեականն Յօն, իցն

Ե. Նորուն Խոսքովու թուղթ առ Տէր Սար-
զիս Եպիսկոպոս Գերաղիկոլայ:

Առաջին մասից, որ մի ամբողջութիւն
է իւր համար: տեղեկանում ենք, թէ մի ինչ
որ ժողով է եղել գումարուած միութիւն
հաստատելու նպատակով: Բայց ժողովը երկու
կուսակցութեան է բաժանուած: Հեղինակն
այս գրուածքն ուղղում է հակառակ կու-
սակցութեան պարագլիմին, որ նոյն գերն է
կատարում հեղինակի և իւրայինների վերա-
բերութեամբ, ինչ որ Յուդան Քրիստոսի և
Նորա աշակերտների համար: Հակառակորդն
ինքն է յորդորել միութեան նպատակով ժո-
ղով գումարել: Խոստանալով «ցածուցանել
ի ժողովոյ անտի զօտարափառութեան իւրոյ
ջերմութիւն եւ զանշափագիւան ի բաց թո-
ղուլ նորաձեւութիւն կարգաց, կրօնից եւ
պաշտամնանց», նոյնպէս «յանձն առնոյր ընդ
մեզ միաձայնել մի բնութիւն ըստ գերահրաշ
միաւորութեանն Աստուածն բանի մարմնա-
ցեալ», բայց ոչ միայն դրժել է իւր խոստումը,
այլ և մեծ խռովութիւն է ձգել ժողովական-
ների մէջ: Նա պայման էր դրել «ոչ մեզ զժո-
ղովն Քաղկեդոնի յիշել և ոչ իւր»: ինչպէս և
«զանուաննեալն իւր մեծ եւ զորս ընդ նովաւ,
ընդ մերոյ ի ձեռին կարգեալ խոստանայր իշ-

Խանութեամբ»։ Սակայն միութեան փոխանակ
կուսակցական պայքար է սկսւում ժողովի
մէջ։ Հակառակ կուսակցութեան գլուխը իւր
խոստման դէմ «գժողովոյն Քաղկեդոնի յայտ-
նէր զհամաձայնութիւն»։ Հակառակորդը խո-
րամանկութեամբ կամեցիլ է հեղինակին և
նորայիններին «ի պարտութիւն արկանել»։
Ժաղովրդի բազմութեան մէջ մեծ շփոթութիւն
է ընկնում առանց գործի ելքին սպասելու։
«Ոի զոմանս հոմակամութեան կարծիք բար-
կութեամբ զինեին, տեսանելով զմեր առ նա
խաղաղասիրելն»։ Իսկ այլք զօրանակ հակառա-
կամարտին և իւրեանցն տկարանալ զլինոյ եր-
կուցեալք և այսոքիկ մերա[յ]ոցն»։ Իսկ նո-
րայինները քաջալերւում էին յաղթութիւն
սպասելով։ Սակայն Ասառուծոյ զօրութեամբ
ընդհակառակն է պատահում։ Թեր և դէմ
եղած խօսակցութիւնից տեղեկանում ենք,
որ հակառակորդը մի բարձր անձնաւորութիւն
է և որոշ պահանջներ ունի ժողովից։ «Տիե-
զերաց աշք յիս հային և ինձ ամօթ մեծ է
ի միաբանելոցն քակիլ և ընդ անմիաբանից
լինել. և դարձեալ զի դուք և զմի ոչինչ յի-
մոց անախ կատարեցէք ինդրոց»։ * Ապա Խոս-

* Մի ուրիշ տեղ Խռարովիկ հետեւալ խօս-
քերն է ուղղում հակառակորդին. «և ոչ վայելեիր
ի փառս վեհագունի պնուանդ»։

Հոպիկ բացատրաւմ է այս խօսքերի խմասաը.
«Զի՞ յառաջ քոն զայս տսէր ձեռնադրութիւ-
նըս աալ ու խափ մանկանց և ի քառա՞ և հինգն
զեկաեմթիկի ծնունդ տռնել և զերեցրեանն
արջնութիւնն ի վերայ Նրգորդութեանն և
ոչ ի վերայ Որդուզ միայն նուագեալ, ի բաց
հանեկով անկուստ զիւշեցարն»: Այս խնդիր-
ների վերաբերութեամբ վէճ է ծագում երկու-
սի մէջ: Հակառակութիւն է լնկնելով զբաւոր
խոստովանութիւն է պահանջում Խոսրովից,
որպէս զի ինքն էլ զբաւոր սկատասխանէ: Պա-
հուած է Խոսրավի թաւղթը * և հակառա-
կորդի պատասխանը: **

* . . . Բայց արդ եթէ տացէ քեզ Աստու-
ած. շնորհս բարեպաշտութեան և խնդրես Ճշմար-
տութեանն ի ինել ընդ մեզ խոստովանակից, ասասցես
որպէս ընտութիւն մարդկային ընդնմին և դէմ մարդ-
կային առնուլ բանին ի կուսէն, և որպէս զդէմ բա-
նին և մարմնոյն իւրց ընդ ձեռն միաւորութեանն
մի խոստովանելով դէմ: Այսպէս և զբնութիւնն զաս-
տուած այինն և զմարդկայինն մի դաւանել ընութիւն
յանձառ միաւորութենէն . . .

** Առ ի սրբութենէդ ձերմէ տուաւ ինձ զեր
հարկաւորութեան պահանջել ի մէնջ ասել զմարդ-
կային դէմ առնուլ բանին ի կուսէն և այս ինձ
այլ ոչ ինչ երեկի, քան թէ ասել զոմն մարդ առ-
նուլ, զի ամենայն մարդ յարմէ հետէ ձեւանայ յար-
դանդի: յայնմ հետէ իմացեալ լինի դէմ: քանզի
այսպէս ոչ այլ ինչ գիտեմ զդէմն, քան թէ
զոմն մարդ: Արդ թեպէտ և Ցեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի ոչ ուրանամ մարդկայնովս երեկի

Խոսրովիկ այս գրուածքով կամենում է ջրել հակառակորդի մոլորութիւնը և հաստատել Հայաստանեայց եկեղեցու ուղիղ վարդապետութիւնը Քրիստոսի մարդեղութեան մասին։ Հակառակորդի վարդապետութեան վերլուծութիւնից Խոսրովիկ այն եղրակացութեանն է հասնում։ որ նա, Քրիստոսի մարդեղութիւնը ոչ միայն անձեւ, այլ և անսկիզբնա, և անգեմ ընդունում։ Խմաստափրական եղանակներու վերաբերյալ առաջում է Հակառակորդի մոլորութեան հետեանքները և հաստատում թէ Քրիստոս «ի մերմէս առանձնակի իւր միացոյց մարմին հոգւով բանականաւ, ապա ուրեմն ոչ բնութիւն անզոյ եւ անդէմ զմարդկայինս լնկալեալ բանն Աստուծոյ»։

«Արդ կամ ասացես ըստ զրոց, որպէս զանունն, նոյնպէս և զդէմս մարդկային ի Քրիստոս, ինչպէս և Խոսրովիկ ինքն է ընդունում։ «կամ թէ ի բաց բարձցես զվիմին ասելն, ընդ նմին ի բաց բարձեալ լինիս և

մարդկան դիմաւ, այլ քանզի փոխանակ սերման զբանն ասեմ ժամանել յարգանդ կուսին, ըստ այնմ մասց մի ասեմ զդէմն. իսկ մի բնութիւն յետ շարադրութեանցն, ոչ զոք ի հարցն գիտեմ խոստովանել։ Զի թէ ոչ տեսանեկի զրոյոր խնդրեալսն հակառակ հարցն, ամենայն ուրեք համբուրէի զառ ձեզն ձայնակցութիւն, այլ զի ամենայնիւ տեսանեմ զձեզ փութացողս առանց հերձուածոյ ատեցան սուրբ ժողովոցն։

զանուանն առասութիւննաւ Խոսրովի խոս-
տովանութեամբ «հասարակական և դէմ առ-
ուանձնական և յատկական, նոյն ինքն եղե
լսու ժամանակի և մարդ հանդերձընութեամբ
և դիմաւ և առանձնաւորութեամբ»: Այլ ոչ
եթէ յաղագս սորին այսորիկ յերկուս բաժա-
նեալ բնութիւնս զՔրիստոս, և կամ երկուս
ասել զնա դէմ և երկուս անձնաւորութիւնս»
այլ մի բնութիւն, մի դէմ և մի անձնաւո-
րութիւն: Բայց նա «մի բնութիւն և մի
դէմ ասելով ի Քրիստոս, դաւանում է ոչ
լսու համագոյութեան բանին և մարմնոյն»:
«այլ լսու անձառ միաւորութեան»: Ապա շա-
րունակութեան մէջ թուում է մարդեղու-
թեան խորհրդի բաղմատեսակ սխալ ըմբռո-
նութերը, ի միջի այլոց և «ըստ բնութեամբ
միաւորութիւնն, եթէ արտաքոյ դիցէ դիմի և
անձնաւորութեան, ըստ այժմուցս հաւասա-
րեսցի նորագոյն բուսեալ անպարշտութեանս»:

Երկրորդ և երրորդ գլուխները կակ ու-
նին միմեանց հետ: Խոսրովիկ այս երկու գլուխ-
ների մէջ մաքառումէ այն մալորութեան դէմ,
որի հակառակ զինուած էր և Յովհանն Օձ-
նեցին Երևութականաց ճառի մէջ: Խոսրով-

* Եյս վարդապետութեան դէմ նա մաքա-
ռում է Բ. և Գ. գլուխներում:

կե այս երկու գլուխների ինչպէս և Օճեռ-
ցաւ Եղանոթակնեաց ճառքի մանրանմասն քըն-
նդակմիւնք ցոյց է ասպիս, որ երկու հեղինակ-
ներն էլ մաքառում են Յուշիոս Աղիկառնա-
ցու հետեղների դէմ:

Չորրորդ գրախը ինչպէս միշեցինք, մի
բխուղթ է ուղրուած Անտիոքի Աթանաս
պատրիարքին: «Թյուլի աստուածացին ժողո-
վրդեան, հովիւ քրիստոսեան, բանաւոր հօտի,
Հայր մեծ ի մեծագունի աթոսն նստեալ
առաքելոցն Պետրոսի, Աստուածապատիւ Տէք
Աթանաս պատրիարքյակ Անտիոքու մեծի: Խոս-
քովի նուաստ ծառոյից, Տէք իմ: Տէք»:

Այս հատուածն ևս ինչպէս առաջինը
պատմական կարեոր նշանակութիւն ունեցող
մի յիշատակարան է: Թղթի սկզբին կցուած
է մի յառաջաբան «Նախադիթը բանից առ
Աթանաս Անտիոքացի», «րից աեղեկանում
ենք, թէ գրաւած է Աթանասի խնդրանօք»:
Այս թուղթն ևս կապ ունի մի ժողովի հետ,
որի պատճառն եղել է նոյն ինքն Աթա-
նաս, որովհետեւ նախապատրիարքեան մէջ նա
կոչում է «Հայր բազմաց ի միաբանութիւն
եկեղոց առաքինասէր անձանց», իսկ թղթի
վերջում հետեւեալ տողերն է ուղղուած
նորան: «Զի զու ժառանգ գտար ճշմարտու-
թեամբ Հարանց ուղղափառաց, և նոցին

խազբասիրութեանն եզեր նախանձորդ, ըստ
կիզմն արարեք ի մնացիկ անրանել զիազտո-
ղոթիւն, զոր անկեց հոգին սուրբ ի մէջ
հաւաքացեցոց։ Պատրիարքի հրամանավ նորա-
եպիսկոպոսներից երես ար Խնադադուն Ելենա
նաև պէտք ե խօսեն Խռարոցի հետ որ դերուց-
ուալշուահաւ «վաճն հաւատայո վիթ անուս եղթիւ-
կուզուը վիճաբնութեան ժամանակ լուս։ Ե-
մասցիւ և աւահանարտկ Խռարոցի նորանցոց
վատ յան չե բարձր քայլ թնազնուոս աչ-
միոյն չի հարցնած Խռարոցինու այլ միանգա-
մեց պարզ յայտնում է իւր մատածոք մոլո-
րաթիւնը Խռարոցի այդ պարզութիւնը
շնորհաժայութեան արժանի է համարաւայն,
«զի Ալշամանութիւն յայտնեալ զրուշանալ-
հրամացիւ իսկ ընդ իւղանութեամբ մատա-
նելու յանցեաս գուանձնուն»։ Բայց սովորա-
բազզարտը սցփուս պարզ իւր մոլորութիւնը
նու չեր յայտնել ժողովի ժամանակ։ առոտ թիւ-
ու սերկացին կողմանըս իւշորի նորա աս-
արւասա զերծեալ լինէաց ոչ նու նմնոցաւ որ և
ոչ մէք նենքեալ զամանեացու Ընդհանկառակ
ժողովի մէջ լուսութեամբ առնեն ինչ «ծառծիւաց»
և ուրուշ հողոթիւ բնիւանութ ուրոցն զեղ-
ուասպ կամեցաւ Ոնքացիորոշուածի խոսքի-
ցութիւնը կատարուակ է մոդոցից յետոյ-
անտեկ է եզեր նոյնուիւ Աթանաս պատրի-

արզը, բայց ոչ մասնակից զիշարանութեան, ինչպէս տեսանք մեջ թերուծ աեղեկութիւններից: «Զի՞թ է թարգմանն առ Ժաման ոչէր դնացելայլ անդրէն ի տեղաջն իսկ կոմի ընդ քեզ խօսի յանդիման նորա դրում է Խոսրովիկ: Այս թզմով Խոսրովիկ մաքառում է Թէհովստասի մալորութեան դէմ և կամենում է Աթանաս պատրիարքին: Հասկացնելու «թէ ընդ քուսուրը պթուսիդ և քոյին ուղղափառութեանն զաւազանաւդ զտանի թագուցեալ գայլ գայլ» գառն կերպարանեավ»:

Խոսրովիկ մեջ առ մեջ թերում է Թէհովստասի խօսքերը և հերում: Այդ վկայութիւններից պարզ երեւմ է, որ Թէհովստաս Սևերոս Անտիոքացու վարդապետութեան հետեղ է կամ ուրիշ խօսքով Յակովիկ: Ասորի է: Քրիստոսի մեջ կառարելութեան երեք առաջիձանաւորութիւններ ընդգառնում: Թէհովստաս նորա առելով «անկատապ և անփառաւոր և ապականացու եկաց մեաց մարմնն Քրիստոսի ի ծննդէնէն մինչեց յարութիւննա, իսկ «յետ յարութեան շնորհէր գտանել ճմառ փառու զկատարելութիւնն և զանապականութիւննա: Խոսրովիկ նորա խօսքերի մեջ հակասութիւններ է գտնում: Ասէր յարգանցի կուսին միուորեալ զրանն Աստուած ընդ իրում մարմնոցն, յաղագս

որոյ և բնութիւն մի զՔրիստոս ասէր գոյա
քայց յետոյ բաժանում էր պղոմ առնակա-
տար և փառաւորեալ և անապահան պակավ
և զմիւսն ոչ նոյնպէսու Ասկ նորա վերջին
մօլորաթիւնն այն էր որ ասում էր աթէ
զմարդինն իւր բանն Աստուած տառեալ զնէ
առաջի Հօր և Հոգույն զինի թագմանն իրրե
զրեռն ինչ օտարութիւ և աշխատաբարձ ասե-
լավ Ծա վասն զի մէկին և ոչ իրարցի զմար-
մին իմ քննդից միաւորել և իմումն հաղորդ
առնել փառաց և զօրութեան պահեցի զայս
ձեզ առնել զի կմիին եքու Խոսրավիմ մի առ
մի ջրում է այս մոլորութիւնները և ուշաց-
րերի վկացութիւններով հասաւում իւր
խօսքը Թղթի վերջում դառնում է կրկին
Աթանակ պատրիարքին պայց դուք ով Հայր
պատուական Տիմո և Հասկատութիւն և
կեղեցւոյ մի բացցես զլսեցիս քա սոցպի-
սեաց մոլար վարդապետութեանց բանից
որովհետեւ դու ժառանգ եղար սուրբ Հարց
ուղղափառութեան և խաղաղամիրութեան
նախանձաւոր Աղւ մի զարմանաթեած շարու-
նակում է Խոսրովիկ իւր խօսքը թէ ընդ
քո սուրբ աթոռովդ և քոյին ուղղափառու-
թեանն զաւագանաւոր գտանի թագուցեալ զայլ
գառն կերպարաննելու Այս ակնարկը վերա-
բերում է Թէոդորոս Եախիկառամին և Սա-

կայն պրոբ և արժան է յայտնել և ցուցա-
նել պահեստի ըուլոր անդամնոց թե՛ նանդեղու
յառողջութեան է և մինչ միայն ի մենց էք
անգամ, ար վիրաւորեալ պատու ։ Ազատ յար
դորում է նորան. «մի լիցի քեզ թիւրեցելցին
լինի թիւրակից, որ ակսարդ լինել խնդրով
ուզգութեան և բարեպաշտութեանու թուղու
թիւր վերջացնում է թիւրեցով, որ եթէ
պատողին աքը շխամնայ «համանորդ բանիւ կտրել
եւ ի բաց ընկենու զ զնու, զնորմ բանկո են և
կամ՝ որ շոտ նուն լուցեա, զոնէ եթեպեցու
առանցութեան և սրահորդապետն հարցի. Ա
սրբոցութեան համեմայի ոչ, առ է արձանաւ
դրել ընդունելու թեան և ոչ ընդունելու թեան
մասին։

Հիմգներու պլուխը ինչպէս ան սանր վեր-
նագրից և ինչոր երեսում է սկզբանորուա-
թիւնեց, աղուանծ է Գերազիկումայ Սուրբիւ-
նոյիսկապահն. «Պատուափառ զլուխու հայիւ-
հատասէր, բարեպաշտութեան ։ Վարփակալ,
մեղձեկը, ի դուրս ուղղափառութեան, Ցեղ
Սուրբիւ եպիսկոպոս, Գերարիկուրուայ, Խուրով
յոնարժան ծառայից խնդրէ խաղաղութիւն-
քեզ յեւստուծ ցու ։ Այս խօսքեցը մի և նոյն
ժամանակ ապացոյց են, որ Սուրբիւ եպիս-
կոպոսն էլ կան ունի միութեան նարատակով
գումարուած ժողովի հետ որի մասին յի-

շատակութիւն գար Ա. և Դ. զյուխների մէջ։
Խռորովիկ փ հեռաւորաց և յանձանօթից,
մօտեցել է Սարգիս եպիսկոպոսին և նորա-
յիններին հասկացնելու նրանց օգուար, ինչ-
պէս Յովսէփ Քանահացոց երկրից Եղիպատ
էր փոխադրուած փարաւոնին և նորա երկ-
րին կերակրիչ հանգիսանալու։ Խռորովիկ յոյս
ունի, որ Սարգիս նմանող չի լինիլ և այնոցիկ, որ
զանձնահաճութեան ախորժեցին ստանալ զա-
նունս, կամ որոնք «զբարեբանիչս իւրեանց ձգեն
ի միր և ի բարձրագոյն տեղի բարեկամու-
թեան, իսկ զյանդիմանիչն ի դրունս, առեն
առելութիւն կատարեալ», այլ որպէս մադր,
ուրոյ Ֆաղիեալ են ալիք», և «զերկիւղածու-
թեան զգեցեալ ձեւ, և անոււամբ, վարդապե-
տաւթեամբ պայծառացեալ», ճշմարտութեան
հետեղ կիրի (№ 518, եր. 316)։

Այս ընդհանուր յառաջարանից յետոյ
Խռորովիկ նկարագրում է Սեերոս Անտիոքա-
ցու և Յուլիոս Աղիկարնացու հանգէս գալլ
Յուլիահիանոս կայսեր ժամանակի, նոցա վա-
խուսար Եղիպտոս, նոցա թշնամնալլ տար-
բեր վարդապետութիւնների համար և երկու
հերձուածների ցեղապեա հրատակութլը։
Աղիկառնացու հետեղները կոչւում են Յու-
լիանիաներ, իսկ Սեերոսինը Յակոբիներ,
այն եպիսկոպոսի անունով, որ ձեռնադրուե-

լով Սևերոսից՝ շրջեց Ասորոց երկրում և
ամեն տեղ լցրեց սարկաւագներով և քահանաւ-
ներով, որոնք նորա անունով Յակովիկ պէտք
է կոչուէին՝ խոստովանելով Սևերոսի հաւա-
տը։ Մեր եկեղեցու պատմութեան համար
կարեօր է մանաւանդ հետեւալը, որ ամ-
բողջապէս մէջ ենք բերում։ «Զոր ապա յետ
այսորիկ փափագեցին երկոքին կողմանքն ան-
ուամբ մեծին Գրիգորի Խոստովանողին Քրիստո-
սի՝ խառնեալ զսուրբ անուն նորա ընդ անուանս
աղանդահարցն իւրեանց, քաղցրութեան մե-
զու օձանելով զսպանող դեղս և զաղաեղի
գոյն գունեալ և պաճուծեալ գունով սպի-
տակութեան։ Եւ համայն ոչ հաւասարապէս
սրպէս անուանն ցանկացօղք հրաշալայն Գրի-
գորի ընդ նմին և խոստովանութեանն, այլ
ըստ օրինակի Շամբաւացւոցն երկիրպագանէին
աստուածոցն իւրեանց և պաշտէին զԱստուա-
ծըն Խորայելի (№ 518, եր. 320)։ Պատմական
ուրիշուցմանքներից ևս տեղեկութիւն ունինք
Ասորիների Հայոց եկեղեցու հետ կապած միու-
թեան մասին։ Բարգէնի, ներսէս Աշտարա-
կեցու, Կոմիտասի թղթերը, նոյն իսկ յետին
հեղինակներ՝ Միքայէլ Ասորին և Պօղոս Տա-
րօնեցին՝ հաստատում են այս իրողութիւնը։
Վերջին հեղինակի ասելով Ասորիների մի
մասը Հուսաւորչի անունով Գրիգորիկ էին

կոշտումն թայց և այսպէս ոյն ձեռք, ինչպէս
մեզ Խոսրովիկն և աւանդումն պատճենած գո
նորութիւն է, որ մնք առաջին անգամ ենք
լսում: Այս ինդրի լուսարանութիւնը յետոյ
հսկանենք:

Խոսրովիկ մաքառում է թէ Սկերոսի
և թէ Յաւիսի դէմ ցոյց տալով Քրիստոսի
մարդեղութեան ծմբարիտ գաւանութիւնը
նախնի հարց գրութեանց համաձայն: Երկու-
սի աարքերութիւնը և վարդապետութիւնը ա-
մի պարզ այսպէս է որոշում Խոսրովիկ:
«Յուլիանէ ասեր պարտ է զմարմինն Քրիս-
տոսի անշարժարելի ասել և անմահկանացու-
ի ծննդէնէն որ ի կուսէն մինչեւ ցյաւիտեան.
քանզի չարչարելի և մահկանացուն ասել, գա-
նի զնա ասացեալ ապականացու, ընդ ձեռն-
որոյ հարկաւոր է ապա և երկուս բնութիւն
նրո ասել: Իսկ Սկերիսո ասեր. Ոչ, այլ
պարտ է չարչարելի և մահկանացու տսել
զմարմինն Քրիստոսի ի ծննդէնէն մինչեւ ցյա-
րութիւնն, զի այսոքիկ և զկնի յարութեանն
հետեւալ լինին մարմազն Քրիստոսի, զի թէ
անշարժարելի և անմահկանացու մարմին ուներ
մինչեւ ցյարութիւնն, զտանի եղեալ սուա
մարդեղութիւնն նորա և զմարդկայինսն կա-
աւալել առ աչօք և ոչ ծմբարտութեամբ»
(№ 518, եր. 318):

Երկու աղանդապետի մոլորութիւնն ընդհանուր կերպով ցոյց տալուց յետոյ՝ խիստ խօսքերով դիմում է Խոսրովիկ նրանց հետեւողներին, մանաւանդ Յուլիանիտներին։ Ընտառ արդ՝ զի ցուցաք վասն երկուցս այս արանց, զի ոչ միայն եթէ ոչ են համաձայնք սրբոյն Դրիգորի, այսինքն առաքելական հաւատոյն, այլ և յոյժ նացին հակառակք։ Ժամ է այսուհետեւ ասել մեզ առ սոսա, զորմէ ասէրն Եղիա ցիսրայէլ։ Մինչեւ յԵրբ կաղայք յերկուս ոտս և կամ մինչեւ յԵրբ ինդրէք ծածկել ստութեամբ զջմարտութիւնն և ընդ ծշմարտութեամբ թագուցանել զստութիւնն (№ 518, եր. 324), այսինքն կամ պէտք է հետեւել պարզութեամբ Սեերոսին և Յուլիոսին, կամ հեռանալ իսպառ նորանցից։ «Ահաւասիկ վկա[յ] ունիմ զԱստուած իմումն վկայական բանիս, թէ տակաւին ևս իսպառ սիրէք զատելիսն Աստուծոյ և զթշնամիսն Աստուծոյ (Սեերոսին և Յուլիոսին) համարիք ձեզ առաջնորդս, դատելոց է ձեզ բանս իմ այս յաւուրն դատաստանի։ և ոչ կարէք պատճառել, իբր թէ ոչ ոք զայս մեզ սգացոյց և բողքեաց յականջս մեր, քանզի ոչ այլ ինչ, այլ ի վկայութիւն ձեզ առաքեաց զիս Տէր» № 518, եր. 325։

Թղթի մնացած մասը հակածառութիւն

է Աղիկառնացու գէմ, որսվհետե ընդարձակ
կերպով խօսել է արդէն Սեւերսի համար առ
Աթանաս պատրիարք գրած թղթում, ինչ-
պէս յիշում է երկու անգամ :*

Այս մասն էլ մեծ նմանութիւններ ու-
նի, թէ Օձնեցու Երեւանականաց ճառի և
թէ Բ. և Գ. գլուխների հետ, որ ինչպէս
տեսանք Յուլիանիտների գէմ էր ուզդուած :

Գ.

Նախնիթաց պրակի մէջ Խոսրովի գլքի
համառօտ բովանդակութիւնից տեսանք, որ
հեղինակը, որպէս ժամանակակից և գործին
մասնակից անձնաւորութիւն, նկարագրում
է պատմական նշանակութիւն ունեցող կա-
րեւոր երեւոյթներ։ Բայց զրական երկերի
պատմական և մատենագրական արժէքը այն
ժամանակ կարելի է գնահատել, երբ որոշ
գաղափար ունենանք տեղի, հեղինակի ան-
ժնաւորութեան, եւ ծագման ժամանակի մա-
սին։ Տարաբաղդարար այդ կէտերից և ոչ մէկի
մասին պարզ, հաստատուն գաղափար չենք

* «Զոր և յիշեցաք սակաւուք զբազմազան
նորա (Սևերեայ) հայհոյականսն ի թղթին, որ առ
պատրիարք(ը)քն Աթանաս վասն Թէոդիտեայ»։ Մի ու-
րիշ առջ. «Զի զօր ասելն պարտ էր ընդդէմ մտա-
ծութեանցն Սևերեայ, ասացաք սակաւուք ի թղթ-
թին, որ առ պատրիարք(ը)քն Աթանաս գրեցաք վասն
Թէոդիտեայ», (№ 518, եր. 323 և 326)։

ստանում Խօսրովիկի գրքից։ Մեզ մնում է քննադատական գիտութեան ցոյց տուած եղանակներով որոշել այդ կարեռը հարցերը, առանց որի, ինչպէս յիշեցինք, Խոսրովիկի արժեքը գնահատել չենք կարող։

Տեղի մասին մեր ունեցած տեղեկութիւնն այն է միայն, որ Աթանաս պատրիարքի հրամանով Խօսրովիկ խօսակցութիւն է ունեցել Աթանաս և Թէոդոտոս եպիսկոպոսների հետ «ի ղերայիղքորշտատ», և հինգերորդ իժուղթն էլ ուղղուած է Գերալիկորայ Սարգիս եպիսկոպոսին։ Վերջին թուղթը գրելիս նա շատ հեռաւ չէ Սարգիս եպիսկոպոսից, ինչպէս աեսանք Բ. պրակի մեջ յիշուած ցուցումներից։ * ընդհանուր առմամբ այս երկու վայրերը պէտք է Հայաստանից դուրս Ասորիքում լինին, թէ և հաստատ չենք կարող մատնացոյց անել իսկական աեղերը։ Հ. Սարգւեան մեզ անյայտ պատճառներով Գերալիկոր անունը նոյնացնում է Միջագետքի Գերմանիկիա անուան հետ։ Յամենայն գէպս երկու վայրերն էլ հեղինակի հայրենիքի հետ կապ չունին։

Զնշին է նոյնպէս մեր ստացած աեղեկութիւնը Խոսրովիկի անձի մասին։ Առաջին

գլխի վերնագրից գիտենք, որ հեղինակը յայտնի էր «Խոսքովիկ թարգմանիչ» անունով, գուցե և յետագաներից այդպէս կոչուած։ Նա իրեն անռանում է Խոսրով նուաստ ծառայ, կամ Խոսրով անարժան ծառայ, ինչպէս աեսանք առ Աթանաս պատրիարք և առ Սարգիս եպիսկոպոս ուղղուած թղթերի սկզբնաւորութիւնից^{*}։ Մի ուրիշ տեղ Ադլինի մէջ իւր մասին հետեւեալն է յայտնում։ ապա թողցես ինձ ասել օրպէս արժան է ասել։ զիմում է հակառակորդին, — «որ զճշմարտութիւնն սիրեցի յամենայնս իմ պատուել կեանս և ուղղափառութեան ի մանկութենէ լինել բանի սպասաւոր, այլ և հաւատամ ի նոյն ինքն ի ծառելոյն զօրանալով՝ զվասն, իւրն իմաստասիրել ինչ յաստուածարանութիւն։ Այս առղերից կարող ենք եպրակացնել, որ նա Եկեղեցական անծն էր և հմուտ աստուածարանութեան։ Վերջին կեար լաւ նկատւում է և նորա ամրողջ երկից։ Ապա մենք տեղեկատնում ենք, որ Խոսրովիկ մասնակցել է Ա. և Դ. գլուխների մէջ յիշուած ժողովին, որ նա հայոց կուսակցութեան պարագլուխն է կամ պարագլուխներից մէկը, բայց զրական, որոշ տեղեկութիւն չենք ստանում նոյն իսկ հեղինակի առաջին գէմքով իսօսած մասերից։

* Տես եր. 12 և 16։

ԽՍԱՐՈՎԿԻ գլուխց դուրս նորա անձի մասին տեղեկութիւն ենք ստանում և երկու յիշատակորանից։ Խոճուվկի երկը մինչեւ այժմ ամբողջապէս առանձին չէ գտնուած, այլ Անանիա Սանահնեցու և Յովհաննէս քահանայի վիճաբանական երկերի հետ միասին և միշտ այսպիսի գտասաւորութեամբ։ 1. Անանիա վարդապէտի բան հականառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր զրեաց հրամանաւ Տեառն Գետրոսի Հայոց վերադիտողի։ *

* Եիշեալ Պետրոս վերադիտողը Գետադարձ կաթուղիկոն է. սակայն Անանիան իւր գիրքը վերջացրել է նորա յաջորդ Խաչիկ կաթուղիկոսի օրով, որին և նուիրել է աշխատաւթիւնը. «Բայց արդ առեալ զաղքաա իմոց մաաց ընկալցիս զպտուզ, ով գերազարդ և ամէնիմաստ հանճարով առլցեալ, մեծի Ֆէր խաչիկ վերադիտող Հայոց մեծաց, փոխանորդ Լուսաւորչին պեա. թէե ոչ զյաւեւ կատարեալն, սակայն ըստ կարի մերում զյօժարութիւն լիազեսցուցեալ, յաղագո որոյ աղաչեմ ըստ աղքատատուր տրոյ տառապելապեա այբոյն այնորիկ, համարեսցին զվարձս շնորհին, ոչ ըստ արոցն, այլ միայն հարուստ յօժարութեանն ընդ քաջահաւասն գովեցաւ յամենեցունց Տեառնէն. ըստ այնմ և զմեր ընկալցիս զսակաւ տուրս երկուս լումայիցդ և եթէ սզալանք ինչ իսեն ի բանիդ ըստ տկար և հոսանուաթ թնութեան մերոյ, ուզգեսջիք սիրով հոգացյն և կորովահանճար իմաստիւք լցցի պական և սղալանքն ծածկեսցի ըստ գրոյն, եթէ սէր ծածկէ զբազմութիւն յանցանաց. Եւ այնպէս բոլորեցունց արարչին հաճոյասցուք և կամ հանդիպեացուք ի Քրիստոս Յիսուս որում փառք յաւիտեանս ամէն» (Ն 518. եր. 213—214). Այս խօսքերով ել վերջանում է Անանիա Սանահնեցու երկը։

2. Խոսրովկայ թարգմանչի հայոց եւլն։ 3. Յովհանն ն մւ քահանայի յաղազս նշանակ հաւատոյ նիկէականն ՅԺՀ-իցն իւր մասերով Վերջին հեղինակը, ինչպէս կտեսնենք, ԺԻ. Պարում ծաղկած նշանաւոր Յովհաննէս Սարկաւագ վարդապետն է։ Երեք հեղինակների գործերը խմբագրել և մի հատօր է կազմել Յովհաննէս Երգնկայեցին, որ գրքի սկզբում դրած նախադրութեան համաձայն, * գտել է զանազան տեղերում և զանազան ժամանակներում և արտագրել ալով մի գիրք կազմել։ Նախադրութեան մէջ մեզ զբաղեցնող երկի հեղինակը կռչուած է Խոսրովիկ թարգմանիչ եւ հզօր գիտնական։ Որբան և փոքր լինի այս տեղեքիութիւնը, բայց և այնպէս կարեոր է. մեզ հաշմար։ Այսպիսով մի երկրորդ վկայութիւն ունինք հեղինակի անուանակոչութեան, և նորաերկի ներկայ խմբագրութեան մասին։ Միաբանը կարծում է, որ նախադրութեան մէջ յիշուած Յովհաննէս Երգնկոյ եպիսկոպոսը ԺԻ. Պարում գործող յայտնի անձն էր, որ յիշւում է նաև Ժործորեցի կամ Պլուզ մականուամբ։ **

* Նախադրութիւնը հբատարակել են Աղանեանց։ Միաբան, Արտրատ 1892. Դ. և Հ. Տաշեան. Մատմանը. ուս. 58 եր.

** Նու մեր մատենագրութեան մէջ յայտնի է

Սակայն ոչ մի փաստ չէ յիշում այս կարծեաց հաստատութեան մասին։ Հայր Սարգիսեանի հետ մենք ևս հաւանական ենք համարում այս կարծիքը։ Որովհետեւ ուրիշ Յովհաննէս Երգնկացի, ուսումնասէր, ինչպէս նախադրութեան հեղինակն էր, յայտնի չէ մեզ։ Իբրև ապացոյց կարելի է յիշել և այն հանգամանքը, որ ԺԳ. դարուց աւելի հին ձեռագիր ներկայ խմբագրութեամբ չէ գտնուած։ Հ. Սարգսեան կարծում է մինչև իսկ, որ Վենետիկի Միիթարեանց մի ձեռագիրը այն խմբագրութեան բնագիրը լինի, որ կատարել է Յովհաննէս Երգնկացին։

Միւս յիշատակարանը գտնւում է Գիւտքահանայի ձեռագրի մէջ *, որի գրից հեղինակի մասին հետեւալն է պատմում։ «Երկ-

բազմաթիւ կանոնական, իրատական, մեկնաբանական գրուածներով։ Բազմաթիւ են նաև նորա անունով մեզ հասած տաղերն ու շարականները, որոնցից նշանաւոր է մանաւանդ Լուսաւորչի շարականը՝ «Ն. յաօր գուարճացեալ»։ Ներբողական մատենագրութեան մէջ շատ նշանաւոր տեղ է բանում նորա Լուսաւորչին նուիրած ներբողը։ Մանրամասնութիւններ աեւ Հ. Տաշիանի ցուցակ հայերէն ձեռագրաց եր. 1126 և Զարրանալեան 606—616 Գ. ապ.

* Արձագանգ. 1888. № 5 Ցաշեան մատար. ուսու. եր. 60.

բորդն է Խոսրով Թարգմանիչ մեր. զստ ոչ
կարացի իմանալ ի գլոց, որ զսակաւա ընթեր-
ցայ, այլ ի յերեւելի ի նշանաւոր և ի մեծա-
գոյն կարի ծերացեալ եպիսկոպոսէ և յիմաստ-
նապերճ վարդապետէ, յումեմնէ, լուայ՝ զոլ
ատենաղպիր Բագրատունեաց թագաւորացն
մերոց, իսկ ըստ հաւատոց և ըստ վարուցն
թէ որպիսի ոք իցէ եղեալ նա, բանք նորին
ակներե ցուցանեն զնա քեզ։ Այս ոսղերի
զրոյն է ոմն Մարտիրոս սարկաւագ, որ 1779
թ. Խւսկուգարում գրել է Աղանեանցի ձե-
ռագիրը։ Տարաբախտաբար գրիշը չէ յայտ-
նում։ Թէ ի՞նչ աղրիւրից է յայտնել ծերու-
նի եպիսկոպոսը այս տեղեկութիւնը. ուստի
և մեզ համար արժանահաւատ վկայութիւն
համարուել չի կարող։

Մեր մատենագրութեան մէջ շատ չեն
Խոսրովիկ կամ Խոսրով անունով հեղինակնե-
րը. մանաւանդ որ մեր հետախուզութիւնը
պէտք է սահմանափակուի Ե - ԺԲ. դարի սկիզբ-
ները. Խոսրովիկ ԺԲ. դարու առաջին քառոր-
դից յետոյ ապրած լինել չել կարող. այդ
մասին արդեն հաստատուն փաստ ունիք։
Ամենահինը Ղազար Փարբեցու յիշած * Խոս-
րովիկ իւարգմանն է. որը պէտք է գրած լինի

* Պատմ. և Թուղթ. 1873. Վենետիկ եր. 609.

Ս. Սահմեկի կեանքը. «ի՞րեն կընծայուի գար՝
ձեալ ջրօրհնեաց կանոնին թարգմանութիւնն
ի յունէ», և «պատառիկ մը» «վասն կարգի
կաթուղիկոսաց»:^{*} Մի ուրիշ Խոսրովիկ, որի
արձանագրութիւնը—ԾԱ Խոսրովիկ ծառայ
սուրբ Հոփիսիմելի—գտնւում էր Հոփիսիմելի
գերեզմանի մատրան որմի զերայ և Փիլիպպոս
Կաթուղիկոսի ձեռքով 1653 թ. կատարուած
Խորոգութեան ժամանակ ընդօրինակել է Առա-
քել Դաւրիմեցին.^{**} Հ. Ալիշան (Այրարատ եր.
238) կարծում է, որ կամ Ե. դարու վերոյի-
շեալ Խոսրովիկ թարգմանն է, կամ Կոմիտասի
յաջորդը, իբրև Հոփիսիմելի վանահայր:

Չամչեան ևս յիշում է Խոսրով անունավ
մէկին. Տոնտոր մականուամբ, որ աղուհացից
ճառեր պէտք է զրած լինի, մինչև իսկ մի
հատուած վկայութիւն է բերում իւր պատ-
մութեան մէջ:^{***} Այդ հատուածից երեսում
է, որ Խոսրով հռետորը ապրել է եօմներորդ
դարու առաջին կիսից յետոյ՝ որովհեաև յի-
շում է յունաց զօրապետների գոլծ դրած

* Զարբանալեան Հ. Պպր. եր. 295. երրորդ տպ.

** Պատմութիւն Առաքել վարդապետ Պաւ-
րիմեցւոյ Գ. ապ. Վաղարշապատ 1896. եր. 329.

*** Չամչեան. Պատմ. Հայոց Բ. եր. 609.
Խոսրով հռետորի անունը յիշում է նաև եր. 348.
607, 608.

բռնութիւնները կրօնական խնդիրների վերաբերութեամբ, որ կարող էր միայն Հերակլիթուն կոստանդին կայսեր ժամանակ տեղի ունենալ: Իւր ժամանակ այլ ես Հռոմեաց պիրող չեն: «Յելքեան ժամանակի յօրժամ հոռոմք տիրեալ ունեին զաշխարհս մեր և խառն բնակութիւն էր քաղկեդոնականացն ընդ մերան»:::

Հռեաոր մականուամբ մի Խոսրով շատ յայտնի անձնաւորութիւն պէտք է լինէր մեր նախնեաց մէջ, որովհետեւ կրօնական-միջաքանական պատւածքների մէջ յաճախ յիշուածենք տեսնում ուրա անունը ուղղափառ հայրերի շարքում և երկու հատուած ես կըրակընւում են: Ա. Հարց գրութիւններից մէջ բերաւած վկայութիւնների մէջ, որոնցից մէկը: արտատպել է Հ. Տաշեան իւր վիրոյիշեալ յօդուածի մէջ: * Զամեանի յիշած Խոսրով

* Տաշեան Ասա. մանր ուս. եր. 67. և ցուցակ Հայերէն Ձեռագրաց եր. 396.

№ 1538 ձեռագրից հանում ենք մի քանի ուշից հասուածներ ևս: որ նոյն Խոսրով Հռեաորին են պատկանում: Հետապրբական է նոյնպէս, որ միայնութիւնների ժողովածուի մէջ նոյն ձեռագրի 50^o մի ուրիշ հատուած կա, եռուովիկ հայոց կառուղիկոսի անուամբ: Բոլորովին անյայս է մեր կաթուղիկոսների շարքում այդ անունով անձը: Ամբողջ թղթի գիւտը գուցէ շատ մուլթ ինդիրներ պարզէր: Նոյն հատուածի և կաթուղիկոսի

Հուետորը և մեր հատուածների հեղինակը անկասկած նոյն են, թէ և դրական հատատուն փաստեր պակասում են: Երկուսն էլ նոյն մականուններով և քաղկեդոնականութեան հակառակորդ:

մասին աես Ցաշեանի ցուցակ երես 768. 41^ս ի հաւատոյ բիտեն հայոց Խուրովի հուետորի: Մարդուրիտ առանց լուսոյ ոչ ասի մարդարիտ: և ոչ աէրունականն մարմին ոչ ասի Քրիստոս Փրկիչ առանց Աստուծոյ բանին, զի ծնունդ Նօր եզե ծնունդ կուսին: Նորին յնս սակաւ: Մի՛թէ մարմինն մարդկայինքն աստուածայինք ոչ ասեն ի Քրիստոս Կիրք և ներգործութիւնք և աստուածայինքն մարդկայինք: ապա միաւորութիւն բարձեալ լինի ի միջը: արդ ընդուն լինիք ի միտո ձեր սուս և ասէք միամին: Նորին յնս սակ: Արդ որ բնութիւն անհասանելի է նորա և միաւորութիւն անքննելի է: Նորին Թոք ի մարմինն բանին հաւատացին ծանչյց նոցա զատառուածութիւնն: իսկ որ ասացին թէ մարմինն մարդոյ է և ոչ Աստուծոյ ընդ ուրացողան ելցեն ի խաւարն արտաքին: Թովմաս զշօշափեալ կողն Աստուծ խոսանզանեցաւ զնա:

Նոյն ձեռագրի 50^ս ժի հաւատոյ բորկեն խորովիկ Հայոց կարդիսի: Լորդ առանն Հարաց զարբասացութիւն սերովրէից ի վերայ որդոյ առնուն: վասն զի պատուեն զորդին որպէս զառաքիչն նորա ըսմ թէ որ զիս ընդունի զառաքիչն իմ ընդունի: իսկ եթէ անարգանք են ի սրբասացութիւնս յիշել զիսաշեցարն: որ ի վերայ որդոյ առնուն ապա ի բաց բարձէք զպատարագ խաչին: զօր գնէք ի վերայ սեղանայն ի առճարին աեառն և նովաւ աւրհնեցէք զանուն Նօր և Որդոյ և Հոգւո՞ն սրբոյ: Իսկ մեզ պարծանաց անուն է խաչն ուսեալք ի հրեշտակաց: որ ասէին առ հանայան մէծաւ պարծանոք: ասէ: զիսաշելեալն խնդրէք: յարեաւ: Նաև աէրն փառօք իւր

Յիշեալներից զատ մեր մատենագրութեան մեջ Խոսրով անունով ամենից յայտնի անձնաւորութիւնը երանաշնորհ։ Գրիգոր Շարեկացու հայրն է, Անձեացեաց եպիսկոպոսը, որ պատարագի և ժամագրոց մինութիւն ունի գրած։ * Միշաբանի Անանիա Մոկացու թղթերի հրատարակութեամբ և ուսումնասիրութեամբ պարզուեցաւ այն խնդիրը, որ Գանձակեցու ** և Օրբելեանի *** յիշած և Զամչեանի կըրկնած**** Խոսրով քորեպիսկոպոսը, Անանիայի հակառակորդը՝ Անձեացին է եղել. իրրեապացոյց բաւական է—Տեսոն Անանիայի Հայոց կաթուղիկոսի պատճառ յաղագու զլոսու-

կոչեր զիսաչն և զասն խաչին ասէ չե էր հոգի, քանզի Յիսուս չե էր փառաւորեալ, այսինքն է խաչեալ. Եւ Պողոս քնարն Հոգւոյն սրբոյ և բերանն Քրիստոսի ասէ. Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչ. Եւ եթե բանն խաչին կորուսելոցն յիմարութիւն է.

* Մի այլ գրուածք ևս յայտնի է նորա անունով—Մեծին Խոսրովու ասացեալ յորդորտկ խրառական յայտ պիտանի. Աստանաւը հարկ համարիմ ապաւ ինչ ասել առ այնոսիկ, որք ասենն զի լսեմ և. ոչ առնեմ: ապա բնաւ և ոչ լսեմ: զի մի աւելի սպազեցցց . Յաշեանի ցուց. եր. 768. և Ա. Մարք. Сборники Притчъ Вардана I. եր. 289 և 315. Սակայն հաւանօրէն այդ մի հատուած է նորաՊատր. Աեկն.-ից Վենեամիկ. 1869. համ. եր. 8.

** Ասկան Յովհաննիսեանցի հրատ. եր. 47—48:

*** Շահնազարեանցի հրատ. գլ. ՄԲ.

**** Պատմ. Հայոց Բ. եր. 818:

ըով նզովելոյն զԱնծեւացեաց Եպիսկոպոսն
վերնագրով թղթից հետեւալը մէջ բերել.
«ՆԳ=954 թօւտկանութեանս և ի Դժման ա-
մի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յե-
պիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում
հաւատացեալ էր մեր նմա զիմանկն Անձեւա-
ցեացն, այր. համեստ և գիտնաւոր և ալեօք
ծերութեամբ զարգացեալ. յանկարծակի իբրե
ի գիւական հողմոյն շարժեալ, առանց իրիք
հակառակութեան սկսաւ նոխ զբարբառ գե-
լակի արձակել ըստ յունարէն լեզոյն զիման-
կէն. կիւռիակէ կոչել և զԵրուսաղէմ Ծռու-
սագէմն և որ սոցին նման է ի սոյն յառեալ
բարբառուածէն Ա. թղթի հեղինակը չէ
կարող Անձեւացին լինել, քանի որ հեղինակին
բարձրաւաստիճան հակառակորդը քաղկեդոնա-
կան է: Անանիա Մոկացին յայտնի է որպէս
Հայոց ուղղափառութեան և հայրապետական
աթոռի հեղինակութեան ախոյեան:

Սակայն Անանիա Մոկացու թօւղթը մեր
առաջ մի ուրիշ կարելիութիւն է զնումն
Գուցէ մեր Խոսրովիկը նորա ժամանակակից
Խոստորով զիտնականն է: Անանիա Մոկացու
«Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից»
երկի նկարագրած դէպքերը այնպէս յարմագ
են գալիս Խոսրովիկի Ա. թղթի հանգամանք-
ներին, որ առաջին բոպէից թուում է, թէ

երկու գրուածքներն էլ նոյն ժամանակի և
նոյն իրողութիւնների հետ են կապուած։
Անանիայի գրուածքներից տեղեկանում ենք,
որ Սիւնեաց Յակոբ մետրոպոլիտը ապստամ-
բել է Հայոց կաթուղիկոսի դէմ։ ապստամ-
բուած է և Աղուանից Սահակ անուանեալ
կաթուղիկոսը, որ հակուած էր քաղկեդոնա-
կանութեան, ինչպէս և Աղուանից Իշխանակ
թագաւորը։ Յակոբ և Սահակ «ոչ հաւանէին
գալ ի միութիւն ժողովոյն», բայց գրումէին,
«եթէ հաւանեալ եմ ես Սահակ Աղուանից
կաթուղիկոս և սա՝ Յակոբ Սիւնեաց եպիս-
կոպոս՝ զով և գուք քրիստոսապսակեալ թա-
գաւորքդ և սուրբ եպիսկոպոսունքդ ձեռնա-
զրէք յաթոռ սուրբ Հուսաւորչին՝ ծառայել»։
Յակոբը կրնում է իւր խոստումը, երբ կա-
թուղիկոսը 943 թ. Սիւնիք էր գնացել, միա-
բանութեան նպատակով։ Երրորդ անգամ կա-
թուղիկոսը գնում է 949 թ. և ժողով է
գումարում։ Ժողովի մէջ երկպառակութիւն
է ծագում Սահակի յաջորդ Գագիկի կա-
թուղիկոսութեան մասին։ (Անանիայի թղթե-
րը և Միաբանի ուսումնասիրութիւնը Արա-
րատ. 1897. փետր. մարտ և յունիս)։

Այս հանգամանքներն ինկատի առնելով՝
կարելի է կարծել, թէ Խոսրովիկի Ա. Թղթի
մէջ նկարագրած ժողովը, հէնց Անանիա Մո-

կացու ձեռքով գումարած ժողովն էր։ Մա-
նաւանդ որ Ա. և Դ. թղթերի մէջ յիշուած
ժողովները, ըստ երեսութիւն տարբեր են մի-
մեանցից։ Ուրեմն և այս ենթադրութիւնն
անելու արգելք լինել չէ կարող այն հանգա-
մանքը, որ Դ. թղթի մէջ յիշուած ժողովի
պատճառներից մէկը Անտիոքի Աթանաս պատ-
րիարքն է և ժողովին ներկայ են եղել նորա
երկու ներկայացուցիչները, այն ինչ Անանիայի
թղթում այդ մասին յիշատակութիւն չկայ։
Բայց այստեղից էլ մի նոր խնդիր է ծագում—
Խոսրովկի գրութիւնների միութեան խնդիրը։
Արգեօք բոլոր 5 թղթերն էլ մի հեղինակի
գործ ե՞ն, թէ ոչ. այս կասկածը փարատելու
համար Խոսրովկայ թարգմանչի հայոց ընդ-
հանուր վերնագիրը բաւական չէ. քննադատա-
կան միջոցներով հարկաւոր է պարզել և այս
խնդիրը։ Յիշեալ անձնաւորութիւններից ո՞րը
կարող է լինել մեր երկի հեղինակը։ Այս հար-
ցի պատասխանը կարող ենք ստանալ միայն
հետզհետէ, երբ կքննենք Խոսրովկի ծագման
ժամանակը և միւս հեղինակների հետ ունե-
ցած մատենագրական առնչութիւնը։ Այժմ
պարտաւոր ենք լուծել Խոսրովկի միութեան
խնդիրը, որովհետեւ, գրութեան ծագման ա-
մենավաղ և ամենից ուշ ժամանակի—terminus
post quem և terminus ante quem—որոշումը
մեծ կապ ունի այս խնդիրի լուծման հետ։

Դ.

Ամբողջ Գ. պրակը աւելորդ աշխատութիւն կլինէր մեզ համար, եթէ առանց այս ու այն կողմն ընկնելու հնարաւորութիւն ունենայինք որոշելու հեղինակի անձը: Մենք ստիպուած էինք նիւթեր հաւաքել յետագայ քննութիւնների համար: Նոյնը չենք կարող ասել Դ. պրակի համար. քննադատը անհրաժեշտաբար պարտաւոր է զգում պարզել գրքի միութեան խնդիրը: Խոսրովիկի անունով մեզ հասած գիրքը բաղկացած է հինգ միմեանցից անկախ մասերից. առաջին մասի վերնագրի մէջ հեղինակը յիշուած է Խոսրովիկ թարգմանիչ անունով: Դ. և Ե. գլուխներում հեղինակն իրեն Խոսրով է անուանում, վերջին անունը կրկնուած է և Ե. գլխի վերնագրի մէջ, * իսկ Բ. և Գ. գլուխներում հեղինակի մասին ոչ մի յիշատակութիւն չկայ: Խոսրովիկ թարգմանիչը նոյն է Դ. և Ե. գլուխների հեղինակ Խոսրովի հետ, և եթէ նոյնն է, նորա գործերն են արդեօք Բ. և Գ. գրալուխները: Ահա հարցեր, որոնց պարտաւոր ենք պատասխանել այս պրակի մէջ: Հասկանալի է, որ ի զուր կլինէին մեր ջանքերը ամբողջ գործի հեղինակն ու ժամանակը որոշե-

* Տես այս գրքի մէջ եր. Դ. 12 և 16

լու, եթէ նախապէս չհաստատենք, թէ հինգ
գլուխն էլ մի հեղինակի գործ է. թերի կլի-
նէր մեր գործը և այն ժամանակ, եթէ այս
կամ այն գլխի ծագման ժամանակը որոշելով՝
եզրակացութիւն անէինք և միւս գլուխների
համար։ Ժամանակի որոշման ինդրում այս
ընթացքն են բռնել մեր նախորդները. մեզ
մնում է ինչդիրը աւելի հաստատուն հողի
վերայ գնել և որոշել, թէ հինգ գլուխն էլ
մի հեղինակի գործ է, թէ ոչ։ Եթէ նոյն
հեղինակինն է, ուրեմն մի կամ երկու մասի
ծագման որոշումը բաւական կլինի և միւս-
ների ժամանակը պարզելու։ Մեր հաւաքած
փաստերը այս խնդրի լուծման համար տա-
րաբաղդարար շատ չեն. բայց մեր ունեցածն
էլ կարծում ենք միանդամայն բաւական է
հաստատուն եզրակացութիւն անելու Խոս-
րովկի գործի միութեան մասին։

Ա) Մենք տեսանք Գ. պրակի մէջ, որ
Յովհաննէս Երզնկայեցին՝ Անանիայի, Խոսրովիկի
և Յովհաննէս քահանայի երկերի խմբագրովը,
հինգ գլուխներն էլ մի անձի, Խոսրովիկ թարգ-
մանչի գործ է համարում իւր ձեռքով գրած
նախադրութեան մէջ։ * Մեզ համար մի և նոյն

* Խուաստ և ակարոգի Յովհաննէս Երզնկա-
յեցի սպասաւոր բանի և իմաստից գրոց սրբոց ծա-
բաւի. յոլով ժամանակաք և աշխատութեամբ բազ-

է, յիշեալ Յովհաննէս Երզնկայեցին յայտնի
մատենագիր Ժործորեցին է, թէ ոչ Բաւա-
կան է յիշել, որ մօտաւորապէս ԺԳ. դարից
Ներկայ Խմբագրութեամբ ձեռագիր ունինք:

Բ) Խոսրովկի միութեան համար շատ աւե-
լի կարեոր փաստ է այն հանգամանքը, որ
Յովհաննէս քահանայի երկի ԺԶ. գլուխը—
Շորին յայտարարութիւն զանազան հերծուա-
ծոց յայլ եւ յայլ ժամանակս յարանց ողջա-
խոհաց—վերնագրով ամբողջապէս համառօ-
տութիւն կամ բանագրութիւն է Խոսրովկի
Ա. Դ. և Ե. գլուխներից: Աւելորդ ենք հա-
մարում երկար ու բարակ համեմատութիւն-
ներ անել Յովհաննէս քահանայի բանագր-
զութիւնը հաստատելու համար: այն ժամա-
նակ հարկաւոր կիրնել արտագրել ամբողջա-
պէս այդ գլուխն և նորա դէմը դնել Խոս-

մաւ սաացա զերեգ գիրքս, որ են հիմունք հաւա-
սայ ուղղափառութեան, և թէ զմին կ սոցանէ
դաւանէ ոք՝ բարեբախառութիւն մեծ և փարթամու-
թիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշտկ
քաղցրութեանն գիտողի: զոր և գտի ես յայլ և
յայլ աեզի և ժամանակի և ստացա զերիս գիրսն
և ի նոցունց գարձեալ ետու գրել և առ միմեանս
եղի և արարի մի գիրք: Առաջին զԱնանիային զՀա-
յոց վարդապետի, երկրորդ զԽոսրովկայ Թարգմանչի
և զՀզօր գիտնականի, երրորդ զարկաւագ վարդա-
պետին և զմեծ իմաստասիրի զՀաղբասեցւոյ: №
518, եր. 1.

բովկի երկի համապատասխան մասերը։ Բաւական ենք համարում մի քանի հատուած միայն մէջ բերել։ Յովհաննէս քահանան ԺԶ. զլիսի մէջ մաքառում է Սևերեանների և Յուլիանիտների դէմ, ուստի և մեծ մասով Խոսրովկի գրքի Դ. և Յ. զլուխներն է արտագրում, միայն անցողակի կերպով խօսում է բնութեան խնդրի մասին, այդտեղ էլ յարմար տեղում օգտուելով Ա. զլիսից։ Խոսրովկի գրքի մասերի դասաւորութեան համեմատ բաքանչիւր զլիսից մի հատուած բերենք մեր ասածները ընթերցողներին շօշափելի անելու համար։ ՄԵՐ վկայութիւններն ու համեմատութիւնները մէջ ենք բերում միշտ № 518. ձեռագրի համաձայն։

Խոսրովկի Ա. զլ. եր. 245-246, Յովկ. յահ. եր. 533-534։

Եթէ ոք զմի բնութիւն Եթէ ոք զմին ըստ բը-
րստ բնութեան, այլ ոչ նութեան, այլ ոչ ըստ
ըստ միաւորութեան աւ միաւորութեան ասացէ
սասցէ գոլ ի Քրիստոս, ի Քրիստոս, կամ Արիո-
կամ եղիցի Արիոսի հա- սի եղիցի դաւանակից,
մաձայնել, ըստացական որ զբանն Աստուած ա-
ասելով զբանն և զմար- րարած ըստ մարմնոյ ա-
մին բանին, հարկաւորե- սէ, և վասն այսորիկ ըստ
ցաւ ասել մի բնութիւն միոյ գոլ բնութեան զբա-
զմարդկայինս, զիապակ- նըն և զիւրն մարմին
ցութիւն հոգւոյ և մարմ- զմարդկային կազմածն,
նոյ յօրինակ առնելով, և որ ի հնգւոյ և մարմնոյ

Խոսրովիկ

Յովհան յահ.

Կամ և տքենիտ և մանի-
քեցի, որ անստացական
ասելով զբանն և զմար-
մին բանին, յանդգնեցաւ
ասել մի բնութիւն բա-
նին և մարմնոյն։

բերեալ ապացոյց, կամ
և տիքիանիտ և մանիքեցի
կոչեսցի, քանզի և տիքես
թէպէտ և անստացական
զբանն խոստովանի, սա-
կայն առ աջօք զմարդե-
ղութիւնն ասէ և ոչ
ծշմարտութեամբ և վասն
այնորիկ միոյ բնութեան
զՔրիստոս գոլ, զնոյն և
մանիքեցիք։

Դարձեալ գերկուս բը-
նութիւնսն. եթէ ոչ ըստ
բնութեան և յորոց եղեն
նշանակելով՝ և միայն
մտածութեամբ, այլ ի
միաւ որութեանն զայն ա-
սելով և բարժանարար,
գտանի ասացեալ ընդ
Պօղոսի Սամոստացոյ և
ընդ Դիոդորի Տարսոնացոյ
մարդ տկար զՔրիստոս,
միայն մերձաւորութիւն
առ բանն ունելով և յա-
րելութիւն։

Դարձեալ երկուս ա-
սելով բնութիւնսի Քրիս-
տոս, եթէ ըստ միաւո-
րութեանն և ոչ ըստ բը-
նութեանցն, ուստի եղեն
միաւորութիւնն ասասցե,
այլ անջատումն և որո-
շումն ի միաւորութիւնն
և ոչ ըստ մտածութեան
մուծանելով միայն Պօղո-
սի Սամաստացիոյ և Դի-
ոդորի Տարսացիոյ և Թէու-
գորիտեա եղեւ համակոչ,
որք մարդ դուզնաքեա
զՔրիստոս կարծելով, մի-
այն յարակցութիւն և
մերձաւորութիւն առ բա-
նըն ունել ասացին, ոչ
ուսեալք ի Յոհաննէ
զբանին լինել մարմին
անշփռթաբար և առանց

Խուրովիկ

Յովիս յան.

Խառնակութեանն և այ-
լայլութեան.

Սապէս և վասն կրկին
ասելցյն ի Քրիստոս կամն
և ներգործութիւնս. եթէ
ըստ բնութեան ոք զայն
ասիցէ դոլ ոչ արտաքոյ
ճշմարտութեան գտանի
ասացեալ, զի մի ընդ Գա-
յիոսի և Թէոդոսի ամ-
րարշտելով անսգա, ան-
ներգործական և անկրա-
կան զմարմինն աէրունա-
կան, զոր ի կուսէն առ-
եալ, դժոխարանիցէ:

Իսկ վասն երկուց կա-
մաց և ներգործութեանց
զնոյն է իմանալ և ասել
ոչ ի միաւորութեան,
այլ ըստ բնութեան զկըր-
կնականսն, որպէս զի մի
ընդ Գայիոսի՝ ուստի Գա-
անիտք, և մի ընդ Թէո-
դոսի ոք գլորեսցի, որք
անզգա և անկրական ու-
նել մարմին Քրիստոսի և
առանցներգործութեան,
զոր ի կուսէն ընկալեալ,
յանդգնեցան ասել.

Իսկ թէ ըստ միաւո-
րութեան և նմին ինքեան
միաւորեցելումն ժպըր-
հեսցի տալ երկու կամն
և երկուս ներգործութիւ-
նըս, ամենենին հեռի ի
ճշմարտութենէն և Մաք-
սիմոսի ի ներքոյ անկեալ
սղալանօքն դատապար-
տեսցի:

Ապա թէ ոք միաւո-
րեցելումն և մի եղե-
լումն նմին ինքեան Ցեա-
ռըն մերոյ Յիսուսի Քը-
րիստոսի իշխեսցէ տալ
երկուս կամն և երկուս
ներգործութիւնս ըստ
յատկութեան և առանձ-
նաւորութեան, օտար է
ճշմարտութեանն և ան-
ծանօթ բնաւին, և դա-
տապարտեալ է ընդ Մաք-
սիմոսի չարափառի, որ
զայնոսիկ ընդալաւ ասել:
Քանզի եթէ ...

Քանզի ուր ապա...

Յավշաննէս քայանան խօսելով Քրիս-
տոսի մարմի անապականութեան հակառա-
կորդների Սեւերեանների գէմ՝ հետեւելն է
յայտնում. «Իսկ սօքա յետ յարութեան ի
կառարութն եւ ի փառս և յանապականութիւն
փոխադրել ասեն, զոր և Թէ՛ղողորողոս (ուրիշ
տեղ միշտ Թէ՛ղողորոցոս) ոմն յաւուրս յետինս՝
բաղում ամօք զինի ժաղավոյն Քաղկեդոնի,
այլ և Կաստանդինուպոլսի Հինգերորդին ա-
նուանեցելոյ, առ Աթանասիւ պատրիարքու
Անտիոքայ յայտնապէս յօդէր անամօխարար.
Քանզի ըստ երից ժամանակաց փոփոխութն
ընդունել Քրիստոսի ասէր, որպէս իւէ ի ծնըն-
դենէն մինչեւ ի մկրտութիւնն այլ ազդ ունել,
իսկ ի մկրտութենէն մինչեւ ի խաչն այլ ազդ
և ապա յետ յարութեանն զկատարելագոյնն
առնուլ զփառս, զկատարելութիւն և զանա-
պականութիւն»։ Պարզ է, որ մէջ բերուած
տողերը վերաբերում են Խոսրովիի Դ. թղթի
բովանդակութեան։ Աթանաս պատրիարքի և
Թէ՛ղողոտոս եպիսկոպոսի անունները և վերջ-
նիս վարդապետութեան նմանութիւնը* ակ-
ներեւ ապացոյցներ են մեր կարծեաց ճշշ-
մարտութեան։ № 56 Ձեռագրի լուսանցքում՝
(Գ. 8.) մէջ բերուած հատուածի դիմաց՝

* Տես այս գրի մեջ եր. 12—15.

նշանակուած է աղբիւրը—Խոսրո՛ Դ. 3—
այսինքն առնուած է Խոսրովի Դ. գլխի 3
հատուածից։ Ո՞վ է այս նկատողութեան հե-
ղինակը։ Հաւանօրէն յետագայ գրիչներից
մէկը, որ նկատել է երկուսի մէջ եղած ա-
կընյայնի առնչութիւնը։ Համեմատութիւնը
դրականապէս համոզում է ընթերցողին, որ
Յովհաննէս քահանան քաղում է վերոյիշեալ
աղբիւրից։

Խոսր. Դ. եր. 292.

Յովհ. յահ. եր. 528.

Եւ գարձեալ զինի յա-
րութեանն ի բաց բար-
ձեալ եղեն (ի) փրկչական
մարմնոյն անուանք մարդ-
կային բնութեան։ Ընդէր
ասա փախչի ի Յովհիո-
մեայ Ափկանացոյ։ զի
երկոքին զմի կարծիս ու-
նին վասն մարմնոյն Քրիս-
տոսի։ Նա ի ծննդեան ոչ
խոստովանելով զայսորիկ
զանուանս, պարտաւորե-
ցաւ առ աջք ասել զմար-
մինն Քրիստոսի և սա
զինի յարութեանն զայ-
սոսիկ ի բաց բառնալով
ի մարմնոյն Քրիստոսի
զանուանս, զնոյն խորհին
վասն Քրիստոսի ոմն յա-

Ասէ և զայս, որ զինո-
տորնական վարդապետէ-
(Թէոգոռոս), թէ զինի
յարութեան ի բաց բար-
ձեալ եղեն ի փրկչական
մարմնոյն անուանք մարդ-
կային բնութեանս։ Բայց
տես ինձ աստանօրելզինար-
դախութիւն կեղծաւորու-
թեանն։ պարսաւէ, որ-
պէս երեինենգութեամբ,
զՅովհիոս Աղիկանացի։
որ ի ծննդենէ Փրկչին
ուրանայր զմարդկաբին ա-
նուանս ի վերայ Նորա,
վասն որոյ խոտեալ ա-
նարգեցաւ, որպէս առ ա-
զօք ասող զմարդեղու-
թիւնն Ցեառն և ինքն-

ռաջ և ոմն յետոյ՝ հա-
մաձայն լինելով կրերաց,
նոյնպէս երկոքին առ ա-
չօք գտանին ասացեալ
զմարմինն Քրիստոսի և
կամ յերկնից բերեալ, եւ
դարձեալ թէ. որպէս ա-
սեն զկնի յարութեանն
լինել բանին աստուծոյ և
մարմնոյնիւրոյմիաւորու-
թիւն, և ի միաւորութե-
նէ անտի մի ասել ի վե-
րայ Քրիստոսի բնութիւն,
ոչ կարէ հեռանալի նհս-
տորի մոլորութենէն զի և
զնոյնդ ասէր:

Եթ հատուած էլ Խոսրովիկի Ե. զլիից
համեմատենք:

Խոսր. Ե. զլ. եր. 318-319. Յովի. յահ. եր. 538-539:

Այսպէս երկոքին սո-
քա, երկուք այսոքիւք
բանիւք մարտուցեալք
ընդ միմեանս, ոչ մեր-
ձենային (յ)աստուա-
ծոյին գիրս իբրև յաղ-
թիւրս լուսոյ, որ լու-
սաւորելն կարէ զմտացն
աշու, առնուլ ի նոցանէ
այր ընդերի իւրոյ զնպա-

Այսպէս երկոքին սո-
քա այսպիսի բանիւք
մարտուցեալընդ միմեա-
նըս՝ ոչ և Ցշմարտու-
թեան հուանեցան. վասն
զի ոչ կամեցան յառել
ի գիրս աստուածախնս,
առնուլլոյս մտաց աչացն,
զի մի ընդ խաւար գնայ-
ցեն. Այլ իւրաքանչիւք

տակ յաղթութեան, այլ ոք ի նոցանէ յանձնա-
իւրաքանչիւր ոք յանձնա-
հաճութեամբ համբար-
ձեալք կառս, զոր կոր-
ծանի ի միմեանց, սաստել
սաստեցին անձանց իւ-
րեանց և ճշմարտութեա-
նըն և սասանեալք եղեն
յուղղափառութենէն ա-
ռաքելական հաւատոյն և
միանգամայն ասել, եր-
կոքին ի ձեռն իրերաց
զանկանգնելին գլորեցան
դլորումն:

Եւ կացին մնացին յայս
գրի Մ. ամ սակաւ կամ
աւելի, ի նմին կործան-
ման եղեալք անբժշկելիք
և անողջանալիք: Եւ նըս-
տեալիւրաքանչիւր ոք ա-
ռանձինն՝ ազգածինք և
ցեղապետք՝ յիւրեանց ա-
նուն զանունն Քրիստոսի
փոխեցին, անուանելով
զհաւանեալսն իւրեանց
Յուլիանիստ և Յակոբիկս:

Յակոբ՝ ոչ որ Մծրնայ
քաղաքին եպիսկոպոսն
էր, այլ հանձարեղ և կո-

հաճութեան ամբարձեալ
կառս, գտան անգեալք
ի ճշմարիտ խոստովա-
նութենէ ուղղափառ հա-
ւատոյ:

Եւ զնահապետական
կամեցեալք առնուլ պա-
տիւ և անուն, յիւրեանց
զհաւանելոցն փոխադրե-
ցին անուն կոչման, Յուլ-
իանիստ և Յասովիտո
(այսպէս է մեր երկու
ձեռագրի մէջ) փօխանակ
քրիստոնեայ անուան: Եւ
այսու անուանակոչու-
թեամբ յոկովս անցու-
ցին ժամանակ, գրեթէ
սուղ ինչ նուազ քան
զերկերիւր ամ:

Բայց զՅակոբիկն ա-
նուն դարձեալ զի եղին
սոցա, մի կարծեր զպա-

բախրան. որ է կենդա-
նամթեռն իւրաւմ զբա-
զաւմ հերետիսոս էիից
զբերան և կողեւող հոյ-
հոյի լեզու. և զի՞ն
վախճանին էթող յիշո-
սակորան անձնը բազում
դրեան իմաստութեամբ
զորդորեալը և ծաղկես-
լը: Այլ և սո ոյն է,
զօր Յակոբ կոչեն, որ ոչ
եթէ ի պէսս եկեղեց-
ւոյ եղէ ձեռնոդրեալ է-
պիսկոպոս, ոյլ միաբա-
նեալ ընդ Սևերեա ձեռ-
նադրեցաւ ի նմանէ...
այլ առաջանաւթիւն...

Այսքան օրինակներից յետոյ յոյս ու-
նինք, որ մեր ընթերցողների համար այլ ևս
կասկածի տեղիք չէ մնացել, թէ Յովհաննէս
քահանան իւր գրքի Ժ. գլուխը գրելիս օդ-
տուել է Խոսրովի երկերից: Այս իրաղու-
թիւնը միենոյն ժամանակ մեզ համար ապա-
ցոյց է, թէ Յովհաննէս քահանան իւր աղ-
բիւրները աշքի առաջ է ունեցել իսրեւ մի
ժողովածու գիրք և ոչ այստեղ այնտեղ
յրուած: Հակառակը մտածել, այսինքն թէ
Յովհաննէս քահանան այլ և այլ մատեան-
ներից է քաղել Ժ. գլխի բովանդակութիւնը,
շատ զարմանալի զուգագիպութիւն կը լինէր,

որ նորա բոլոր աղքիւրներն այսօր մի գիրք են
կազմում Խոսրովի անունով։ Յովհաննէս
Եղնկայ եպիսկոպոսի նախադրութեան խօսքերն
էլ հաստատում են, որ նա երեք հեղինակի՝
Անանիայի, Խոսրովի և Յովհաննէս քահանացի՝
Գրքերն է միացրել և մի հասոր կազմել և ոչ
նոցա զանազան մասերը *:

Մեզ շփոթել կարող էր միայն մի հան-
գամանք. ԺԶ. զլիի վերնագրին նայելով հե-
ղինակը պէտք է իւր նիւթը քաղած լինէր
այլ և այլ ժամանակի մատենագրներից. բայց
բովանդակութիւնը ցոյց է տալիս, թէ «յայ-
տարարութիւն զանազան հերձուածոց» խօս-
քերի տակ պէտք է հասկանալ Սևերեաններին
(Թէոդոսոս), և Յուլիանիտներին, որոնց մա-
սին քաղում է ամբողջապէս Խոսրովիկից։
Մանրամասն համեմատութիւնից յետոյ ամե-
նայն հաստատութեամբ ասել կարող ենք, որ
Յովհաննէս քահանան ԺԶ. զլիի համար
Խոսրովի յիշեալ գլուխներից զատ ոչ մի աղ-
բիւր չէ ունեցել ձեռքի տակ։ ԺԶ. զլիի բո-
վանդակութիւնը տող առ տող կարելի է գըտ-
նել Խոսրովի երկի մէջ։ Ուրեմն և առանձին
նշանակութիւն չունի վերնագրի երկրորդ մա-
սը «յարանց բղջախահաց», որից կարելի էր

* Տես եր. 37.

Եղբակացնել, թէ Խոսրովիկից զատ հեղինակը
ուրիշ աղքիւրներ ևս ձեռքի տակ է ունեցել։
Եթէ անիմաստ և առանց ուշադրութեան
գրուած խօսքեր չեն, որի օրինակներն ունինք
ժամանակ։ զլիսի մէջ, կարելի է հետեւալ կերպով
բացատրել «յարանց բղջախոհաց» բառերը։
Հաւանօրէն հեղինակը Խոսրովիկ թարգմանիչ
և Խոսրով անունները տարրեր անձնաւորու-
թիւններ է համարել, թէև բոլոր աղքիւր-
ները մի հատորի մէջ ամփոփուած։ ուստի և
«յարանց բղջախոհաց» նշանակել վերնագրում
Յամենայն գէպս մեր եղբակացութիւնների
գէմ վերնագրի խօսքերը որ և է նշանակու-
թիւնը չունին։

Գ) Խոսրովի գրքի միութեան համար վե-
րոյիշեալ արտաքին վկայութիւններից զատ
գրական ցուցումներ կան նոյն իսկ իւր գրքի
մէջ։ Եւ զլիսի կամ «առ Տէր Սարգիս ե-
պիսկոպոս Գերաղիկորսյ» ուղղած թղթի մէջ
հեղինակը երկու տեղ յիշում է Աթանաս
պատրիարքին գրած թղթի մասին *։ Դորա-
նով նախ հաստատուն վկայութիւն ունինք,
որ Դ. և Ե. զլուխները նոյն հեղինակի գոր-
ծեր են և երկրորդ, թէ Դ. զլուխը ժամա-
նակով աւելի առաջ է գրուած, քան Ե.ը։

* Տես այս գրի մէջ եր. 21

Տարաբաղտաբար այսպիսի հաստատում՝ հեղինակի խօսքերի վերայ հիմնուած՝ ապացոյցներ շունինք միւս մասերի համար. բայց նիւթերի, բացատրութեան եղանակների, և գարձուածների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Ա. Բ. և Գ. զլուխներն էլ Դ. և Ե. զլուխների հեղինակինն են: Մեզ զբաղեցնող բոլոր մասերը աչքի առաջ ունենալով՝ տեսնում ենք, որ հեղինակը մաքառում է երեք հակառակ ուղղութեան դէմ՝ քաղկեդոնականութեան (Ա. Դլ.), (իսկ թէ ոյք են այդ քաղկեդոնականները, յետոյ կտեսնենք), Յուլիանիտների (Բ. Գ. Ե. մասամբ և Ա. ու Դ. Գլ.) և Սեւերեանց (Դ. մասամբ Ե. ու Ա. Դլ.) դէմ: Առաջին զլիսի մի հատուածից էլ № 518, եր. 245—246 երեսում է, որ նա բացի յիշեալներից ուրիշ հակառակորդներ չունի: Ամենից խիստ մաքառում է հեղինակը Յուլիանիտների դէմ և ինչպէս տեսանք քիչ առաջ փակագծի մէջ առնուած նկատողութիւնից, բոլոր հինգ մասերում մեծ կամ փոքր չափերով: Այս կրկնութիւնները ցոյց են տալիս, որ հեղինակը ստիպուած էր մի քանի անգամ գրիչ առնել հակառակորդներին մանաւանդ Յուլիանիտներին հարուածելու, որոնց դէմ ինչպէս ուրիշ աղքիւրներից էլ կստուգենք խիստ մաքառումն էր սկսուած Հայաստանում:

Դորանով էլ պէտք է բացատրել օրինակ այն
մեծ տանչութիւնը, որ նկատելի է Բ. և Գ.
գլուխների և Ե.ի մէջ։ Առաջին երկու փո-
քը զլուխների բովանդակութիւնը, երբեմն
մինչեւ իսկ խօսքերի և բացատրութիւնների
մեծ նմանութեամբ, գտնում ենք Ե. զլխի
մէջ։ Միայն այստեղ հեղինակը պատմական
տեղեկութիւններ է տալիս նաև Յուլիանիտնե-
րի, ինչպէս և Սկերեանց, ծագման մասին և
ազքի առաջ ունի միութեան նպատակով զումա-
րուած մեզ յոյտնի ժողովը, այն ինչ Բ. և Գ.
զլուխներում վերլուծում է Հակառակորդների
տեսական վարդապետութեան մի քանի մասե-
րը և ցոյց տալիս նոցա սխալները։ Մենք
ցաւում ենք, որ բնագիրը ընթերցողներին
անմաշելի լինելու պատճառով, հսարաւու-
րութիւն չունինք ըստ ամենայնի թանձրաց-
նելու մեր տեսութիւնը։ Բաւ ականանում ենք
մի երկու փոքրիկ համեմատութիւններով,
ոյոնք ցոյց են տալիս, թէ ինչպէս հեղինակը
զանազան զլուխներում միմեանցից անկախ
գրուած, զբաղուում է նոյն խնդիրներով։

№ 518. Գ. զլ. եր. 276.

Ե. զլ. եր. 326.

Հակառակորդները պըն- Եւ որ գնէ յարացոյց
գում են քթէ մի և նոյն մարմնոյն Քրիստոսի զա-
բնութիւն նախաստեղծին ռաջին մարդոյն մարմին,
յերկուս բնութիւնս զա- նախ քան զանցանելն,

Նազանեալ գտաւ, այլ ասելով, առաջին մարդն՝
բնութիւն ունել նմա յա- անընդունակ էր կրից
ռաջ քան զյանցանսն և մարդկայնոց, մարմնա-
յայլ փոխել յետ յան- կանաց և հոգեկանաց ...
ցանցն, ասելով՝ յա-
ռաջ քան զյանցանսն ան-
մահ էր և անապական և
ամենայն կրից և կրեաց
մարդկայնոց անընդու-
նակ, զի այն ամենեքին
յետ մեղացն ի չար յա-
ւելեալ եղեւ»:

Խոսրովիկ թէ Գ. և թէ Ե. պլուխների
մէջ ապացուցանում է, որ Ադամ և Քրիս-
տոս մարդու հոգւոյ և մարմնոյ յատկութիւն-
ներն ունեցել են, ուրեմն և սխալ է Տիրոջ
մարմինը անշարչարելի և անմահ ասել ըստ
բնութեան: Գ. գլխի մէջ հեղինակը իւր ա-
պացուցութեան կեղրոնը նախաստեղծի, իսկ
Ե. գլխի մէջ Քրիստոսի անձնաւորութիւնն
է ընտրում: առաջնի համար ցոյց տալով, որ
նա մեղանչականութիւնից առաջ ևս նոյն
յատկութիւններն ունէր, ինչպէս և յետոյ,
իսկ մեղքը անձնիշխան կամքի հետեանք էր,
իսկ երկրորդի համար, թէ նորա մարմինն
ևս մարդկային յատկութիւններ ունէր բացի
մեղքից: Բնագիլների վերայ շատ հեշտ է
նկատել, որ երկու տեղն էլ նոյն հեղինակն է

խօսում խուսափելով նման բացատրութիւնների և օրինակների աչքի ընկնող կրկնութիւնից:

Բ. գլխի մէջ հեղինակը մաքառումէ զանի եւ մարմնոյ համազյութիւն վարդապետողների դէմ * որ Ե. գլխի մէջ «որ ասեն զբանն մարմին՝ եւ մարմինն բան» եր. 333. խօսքերով է արտայայտուած:

Բ. գլխի մէջ եր. 272. հակառակորդներն ասում են «Թէ մինչ համազյ և համարուն ոչ ասի տէրունական մարմինն և ոչ աստուածութեանն և ոչ դարձալ իսկս (¶) բնութեան և անեղութեան բանին գտանի եղեալ հաղորդ, զիարդ յարմարեսցի խոստովանել մի բնութիւն բանին մարմնացելոյց։ Ուրիշ խօսքով, հակառակորդները պնդում են. եթէ մի բնութիւն ենք ասում պէտք է մարմինն էլ անեղ և համագոյ լինի բանին։

Նոյնը տեսնում ենք և Ե. գլխի մէջ եր. 334. «Որք ասեն, թէ միանալով մարմինն ի բանն, անեղ եղեւ և ինքն, եղեւ այնուհետեւ և որ ինչ բանին, նոյն և մարմնոյն» և եր. 336. «որք ասեն, թէ յերկուց մին ասել զՔրիստոս ամբարշտութիւն է, այլ պարտ է ասել ի վերայ նորա մի բնութիւն»։ Բացատրութիւ-

* Տես այս գրքի եր. 6.

նից երեսում է, որ հակառակորդները մաղմինը
բանին համագոյ են համարում մի բնութիւն
ասելու համար:

Ինչպէս յիշեցինք նման յարաբերութիւն ունին Ա. զլսի որոշ մասերը Դ. և Ե.
գլուխների հետ: Մ'նք կարող ենք Ա. զլսի
այն մասերից, որոնք Յուլիանիաների կամ
Սևերեանց դէմ են ուղղուած, Դ. և Ե.
գլուխների բացատրութիւնների և գարձուած-
ների նմանութիւններ բերել բայց թողնում
ենք՝ լնթերցողներին ձանձրոյթ չպատճառելու-
համար, մանաւանդ որ Ա. զլսի միութիւնը
Դ. և Ե. գլուխների հետ Յովհաննէս քահա-
նոյի երկի առնչութեամբ արդէն հաստատուած
ենք համարու մ:

Ե.

Խոսրովի գրքի միութեան լուսաբանու-
թիւնը պարզեց և մի այլ խնդիր, որ Հաս-
տատուն կռուան է նորա ծագման ամենա-
ուշ ժամանակը—terminus ante quem—որո-
շելու: Յովհաննէս քահանան իւր գտաւանա-
բանական երկի Ժ.Զ. գլուխն ամբողջապէս
քաղել էր Խոսրովից, ուրեմն վերջինս ապ-
րում էր ոչ աւելի ուշ՝ քան Յովհաննէս
քահանայի գրութեան ժամանակը:

Ա՞րդ, ո՞վ է Յովհաննէս քահանան և
Ֆրի էր ապրում։ Մենք ալոցէն մի տնգամ
ակնարկել ենք, որ նո ժԱ. գարու վերջում
և ԺԲ. սկզբին ծաղկած՝ Յովհաննէս սար-
կաւագ վարդապետն է, Հաղբատի նշանաւոր
վարժապետը։ Բաղմաթիւ փաստեր ունինք այս
կարծիքը հաստատելու համար, բայց մենք
կյիշենք միայն մի քանիսը, խուսափելով այս
միջանկեալ հարցը շատ երկարացնելուց։

Ա. Յովհաննէս քահանայի գրքի մի
գլուխը։ Առ որս նլիղծ զիմս վարկանեն եւ
զանձինս ոչ արգելուն վերնագրով՝ ունինք
նաև մեր մատենագարանի № 526 (513
Մ. Ձ.) միջին երկաթագիր ձեռագրի մէջ,
որ Յովհաննէս սարկաւագ վարդապետի մի
քանի երկերի ժողովածուն է՝ սկզբից և վեր-
ջից թերի։ առաջին կիսատ հատուածը վերո-
յիշեալ գլուխն է։ Զեռագիրը չունի այնպիսի
յիշատակարան, ուր գրութեան թիւլ նշա-
նակուած լինէր, բայց հնագրութեան տե-
սակէտով ԺԲ.—ԺԳ. գարու գործ պէտք է
համարել։ Յիշեալ զիմսի վերջում գրիչը մի
յիշատակարանով վկայում է, թէ երկի հե-
ղինակը Յովհաննէս սարկաւագ վարդապետն է։

51^ս. Այս բանք քերթողականք ասացեալ
մեծի Պռուշակիոսի սարկաւագին, որ ի տիեզերահըռու-

չակ ուխտին Հաղբատ գտի ես նուաստ ոմն ի ման-
կունս եկեղեցւոյ: Արդ մի ոք յանդգնեալ իշխես-
ցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից կամ
ի տանց և յարուեստից: Զի և մեք ոչ իշխեցաք
յաւելուլ և պակասեցուցանել զոր ինքն իւրով ձե-
ռամբն գրեալ էր: և ըստ այսմ աւրինակի էր սա՝
սկիզբն և կատարածն եղծեալ: եթէ գտցես ուրեք
զբովանդակն գրեա և զմեզ յիշեա ի տեր:

Յովհաննէս քահանայի գրքի միւս զլուիւ-
ները չկան շարունակութեան մէջ, այլ այս
յիշատակարանից յետոյ արտագրու ած են Սար-
կաւագ վարդապետի ուրիշ երկեր: Խսկ նոյն
գրութեան նախընթաց գլուխներն եղել են,
թէ ոչ, ասել չենք կարող, ձեռագրի թերու-
թեան պատճառով: Գուցէ գրչի օրինակը նոյն-
չափ է թերի եղել որչափ մեր ձեռադիրը:

Բ. Մեր մատենադարանի № 540 ձե-
ռագիրը * նոյնացնում է Յովհաննէս քա-
հանայի և Սարկաւագ վարդապետի անձնա-
ւորութիւնը 91^թ. բանք մարդանաց Յովհան-
նու քահանայի որ եւ սարկաւագն առ սուրբ
և միշտ կոյսն Սարիամ Աստուածածին. սկս.
ծնունդ երկրածնին ... Այս և սորա շարու-
նակութիւնը մի քանի աղօթքներ են, ոք

* Բոլորագիր, գրուած է 21Ը (1279) թ.
աւս 197^ա. Ներսէս սարկաւագի ձեռքով աւս 287^ա.

աւրիշ ձեռագիրներում՝ Սարկաւագ վարդապետի անունով են յիշուած։ Ստուգութեան համար երկու տարբեր ձեռագիրներից մէջ բերենք նոյն աղօթքների վերնագրներից մի քանիսը։

№ 540	№ 16.*
102 ^ա . Նորին Յովհանն 1 ^ա .	Յովհաննու սրբոյ
նու (այսինքն քա-	վարդապետի մա-
հանոյի) աղաւթք.	կանուն սարկաւագ
սկս. Արարիչ իմա-	կոչի. աղաւթք առ
նալեաց..	Աստուած Հայր.
109 ^բ . Նորին Յովհանն	սկս. Արարիչ...
նու քահ. աղաւթք 35 ^ա .	Նորին աղաւթք առ
սկս. Հայր ահառն	Հայր (Նոյն աղօթքը).
մերոյ Յիսուսի	
Քրիստոսի..	

* Այս ձեռագիրը Սարկաւագ վարդապետ աղօթքների, տաղաշափական զրուաճքների, խրառների ևն. ժողովածու է, զրուած 1211 թ. ինչպէս երեսում է հետեւել յիշատակարանից 124^թ. և վեցից հարիւրից և յորեղից մի և ի տասն համարուց ի սպառել դարուց և ի նուաղիլ ժամանակաց. ի ժամանակի վերջին դրեցաւ աստուածաշունչ հոգեւոր վարդապետին, մականուն սարկաւագի՝ Յովհաննէս կոչելով ի պատճառս աղաւթից կրաւնաւորաց սրբազնից. . . . ի գաւառս և աւանի Պաղին, ի սրբափայլ լերինս Հայր Մակար կոչելոյ, յանապատս գժուարայարկ Ծիծռան քար կոչելոյ . . . (զրչի անունը չի կարդացւում։)

113^{ա.} Նորին Յովհան- 38^{ա.} Նորին յՈրդի. (Նոյն
նու քահ. աղաւթք. աղօթքը)
սկս. Որդի և բան
Հաւը, Աստուած
Ճշմարիս..

Գ. Յովհաննէս քահանայի զրքից ևս
ապացոյց ունինք, որ այդ երկը Սարկաւագ
վարդապետինն է: Վասն քահանայից և քա-
հանայութեան. վերնագրով (№ 518, եր.
370) հատուածի մեջ հեղինակը մատնացոյց
է անում նոյն նիւթի մասին իւր զրած մի
ուրիշ երկը: Յայանի է, որ Սարկաւագ վար-
դապետը մի գեղեցիկ ճառ ունի քահանա-
յութեան մասին: * Վերջապէս Զարբանա-
լեանի Սարկաւագի անունով յիշած վասն
մասանց պատույ եւ պատկերաց ընդունե-
լութեան երկը կարծում ենք, որ նոյնն է
Յովհաննէս քահանայի զրքի վասն մասանց
պատույ յորում եւ վասն պատկերաց դար-
ձեալ (եր. 381) վերնագրով հատուածի հետ:

Սորան կցուած է 125^{ա.} Երանելցյն Արբա-
նփրեմի Խորին Ասորյ ասացեալ Վասն աղաւթից
Սկս. Փրկեա զիս տէր. և 186^{թ.} Բենիկ վարդապե-
տի երկու աղօթքը. Առաջնի սկս. Անկանիմ ա-
ռաջի ամենայն գասակարգութեանց. երկրորդի Սկս.
Աղացեմ զքեզ, Քրիստոս Փրկիչ:

* Սոփերք Հայկականք Հատոր Պ.

№ 518 ձեռագրի գրչին և յայտնի էր, որ
նա Յովհաննէս քահանայի անուան տակ ար-
տադրում է Սարկաւագ վարդապետի գործը,
ուստի և վասն մատանց պատույ ելն. հա-
տուածի տակ այս խօսքերն է աւելացնում:
«Աղջեմ զասացող քանից գերանելի վարդա-
պետն զսարկաւագն եւ զհայցողն ՚ի նմանէ
յիշեց» (Եր. 391)

Մեր փաստերը չեն սպառուել. բայց
կարծում ենք բերածներս էլ բաւական
են ընթերցողներին համազելու, թէ արդարե
Յովհաննէս քահանան, Խոսրովի գրքից օդ-
տուողը՝ Յովհաննէս սարկաւագ վարդապետն
է: Նա վախճանուել է 1129թ.: * Ուրեմն
Խոսրովիկ այս ժամանակից յետոյ ապրել չեր
կարող:

Բայց մենք կարող ենք Խոսրովիկ Բարդ-
մանչի գրութեան ժամանակի վերջին սահմանը
աւելի իջեցնել: Մեր մատենագարանի № 102
(Գ. 8.) ձեռագրում մի գրութիւն ունինք Հարց-
մունք Հայրապետին Անտիոքա ընդ Խոսրով Հա-
յոց վարդապետ յաղագս ծնունդն առնելոյ. Սկս-

* Սամուէլ Անեցի. 1893 Վաղարշապատ եր.
129. ի ՇՀԸ. ամին փոխեցաւ ի Քրիստոս մա-
հուամբ վարդապետն մեծ որ Սարկաւագն կոչէր՝ ի
Հաղբատ.

«Զծնունդն Քրիստոսի» ... Մենք կարծում ենք, որ վերնադրի մէջ յիշուած Անտիռքայ Հայրապետը և Խոսրով Հայոց վարդապետը ուրիշ անձնաւորութիւններ չեն, քան մեզ հետաքրքրով երկի հեղինակ Խոսրովիկ թարգմանիչ և Դ. ու Ե. թղթերի մէջ յիշուած Աթանաս պատրիարքը: Երկու անուանց զուգաղիպութիւնն ինքը լստինքեան դրական փաստ է մեր կարծեաց հաստատութեան համար: Բայց մենք յետոյ կահեննենք, որ նոյն իսկ պատմական ցուցումներ ունինք, թէ այս գրութեան մէջ յարուցած ինդիրները միանգամայն համապատասխան են Աթանաս պատրիարքի և Խոսրովիկի ժամանակ ծագած կրօնական տարածայնութեանց: № 102 ձեռագիրը, որ մերմանտենադարանինշանաւոր ձեռագիրներից մէկն է թէ բովանդակութեամբ և թէ հնութեամբ (թղթեաց ամենահին ձեռագիրն է Հայոց բոլոր յայտնի ձեռագիրների մէջ), գրուած է միջին երկաթագրով 971 թ. Այս թիւն ուրեմն Խոսրովիկի և Աթանասի յարաբերութեանց՝ հետեւաբար և մեր քննելիք գլուխ ծագման վերջին սահմանն է:

Այժմ որոշենք Խոսրովիկի գլուխ ծագման ամենավաղ սահմանը — terminus post quem — Մենք յիշել ենք, որ Փարպե-

ցուն մի անձն է յայտնի Խոսրով Թարգման անունով։ Ամենայն հաստատութեամբ պնդել կարող ենք, որ Խոսրովիկը տարբեր անձնաւորութիւն է։ Մեր հեղինակին ծանոթ է Մաքսիմոս Խոստովանողի անունը և վարդապետութիւնը։ * Մաքսիմոս միակամութեան դէմ է զուրս գալիս 633 թուից յետոյ՝ Քրիստոսի երկու բնութեան հետ երկու կամք և ներգործութիւն քարոզելով։ բայց հռչակ է ստանում իսկապէս Ափրիկայում Հերակլ կայսեր մահից յետոյ։ Եթէ ընդունենք նոյն իսկ, թէ Խոսրովիկ Մաքսիմոսի կինդանութեան ժամանակ տեղեկացել էր նորա վարդապետութեան մասին, այդ շեր կարող 633 թ. վաղ լինել։

Մեզ մնում է Խոսրովիկի զբութեան ժամանակը 633—971 թուերի մէջ որոնել։

Զ.

Խոսրովիկի զբութեան ծագման ամենափաղ և ամենազւշ ժամանակը օրոշելուց յետոյ՝ աւելի հեշտ է շարունակել մեր քըննութիւնը ժամանակի վերաբերութեամբ՝ նոյն իսկ հեղինակի տուած ցուցումների վերայց համառօտ բովանդակութիւնից տե-

* Տես այս գրքի եր. 40։

սանք, որ Խոսրովիկի ժամանակ միութեան նպատակով մի ժողով էր գումարուած, որին մասնակցել են Անտիոքի Աթանաս պատրիարքի երկու եպիսկոպոսները՝ Աթանաս և Թէոդոտոս անունով։ Ժողովից անմիջապէս յետոյ՝ հեղինակը բողոքում է պատրիարքին Թէոդոտոս եպիսկոպոսի վարմունքի և վարդապետութեան դէմ Արդ 633—971 թուերի մէջ Անտիոքի աթոռի վերայ Աթանաս անունով չորս պատրիարք են բարձրացել։ Բայց նոցանից միայն երկուսի համար կարող է կարծիք լինել, թէ Խոսրովիկի յիշած Աթանասն է։ Աթանաս Բ. շատ կարծ ժամանակ է պատրիարքութիւն ստել (684—687) * և Անտիոքի աննշան Հայրապետներից մէկն է, իսկ Աթանաս Դ. ի մասին ոչ Գրիգոր Բարերբէոս և ոչ ուրիշները տեղիկութիւն ունին։ Թէ նա Հայոց հետ որ և է յարաբերութիւն է ունեցել։

Միայն Աթանաս Ա-ի մասին կարող ենք այդ կարծիքը տանել։ Միքայէլ Ասորին մէջ է բերում Կոմիտասի յաջորդ Քրիստափոր կաթուղիկոսին ուղղած նորա մի նամակը, որի սկզբում ախնարկ կայ և Եղիք օրով կատարուած

* Աթանաս Դ-ի մասին Assemani. Bibliotheca orientalis T. II. p. 339—340.

միութեան ժողովի մասին։ Աթանաս Ա. Անտիպի-
պէի նշանաւոր Հայրապետներից մէկն է, նորա
մասին գովասանքով են խօսում Մ'իքայէլ Ա-
սորի * և Դիրիգոր Բարերբէոս։ ** 616թ. նա
փորձել է վերջացնել Ասորի և Եղիպատացի
միարնակների տարածայնութիւնները և միու-
թիւն հաստատել ընդգէմ երկարնակների։
Հատ Թէոփանէսի և նորա հետևողների ***
նա շատ խորամանկ գեր է խաղացել Հերակլ
կայսեր կատարած միութեան փորձերի ժա-
մանակ։ ՄԵՆՔ ցոյց ենք տռել, որ այդ բա-
նակցութիւնը կատարուել է 633—634թ. և ոչ
629թ. այսինքն մօտաւորապէս այն ժամանակ-
ները, երբ գումարուեց Կարնոյ ժողովը։ Նա
վախճանուել է 644թ. ինչպէս հազորդում Ա-
սորոց Դիոնիսոսի ժամանակագիրը և ոչ 631թ.
Բարերբէոսի համաձայն։ † Ուրեմն Աթանաս
մի այնպիսի ժամանակի մարդ էր, իր Ասո-
րոց և Հայոց մաքերը յուզուած էին միակա-

* Տեան Միքայէլի պատրիարքի Ասորուց-
ժամանակագրութիւն. յԵրուսաղէմ. 1870. եր.
208—310, և 317—318:

** Assemani. Bibliotheca orientalis II. եր. 333.

*** Տես մեր շարադրութիւնը Die Entstehungs-
geschichte des Monotheletismus nach ihren Quellen ge-
prüft und dargestellt. Leipzig. 1897. եր. 18—20.

†. Կայու գիրքը եր. 26—29

մեսյց վէճերի առթիւ։ Զլինէին պատմական մի քանի դրական ցուցումներ՝ մարդ կարող էր սիալուելու փորձութեան ենթարկուել՝ կարծելով, որ Խոսրովի յիշած Աթանասն ուժողովը այս ժամանակին են վերաբերում, ինչպէս կարծել էր Տ. Գիւտ Աղանեանց։ Սակայն մենք ոչ Հայոց և ոչ Ասորոց մատենագիրներից տեղեկութիւն ունինք, որ այս Աթանաս փորձած լինէր և՝ Հայոց միացնել ընդդէմ երկաբնակների, թէև Միքայէլ յիշում է, որ նա «յոյժ սիրեցեալ եղեւ յաշխարհէն Հայոց ի մեծամեծաց և ի փոքունց» (Եր. 310)։

Ընդհանառակն Աթանաս Դոփ (724—740 թ.) համար Հայոց պատմիչներից Ասողիկ և Կիրակոս Դանձակեցին, Վարդան, Ասորիներից Միքայէլ և Բարեբրեկոս պատմում են, որ Օձնեցու օրով գումարուած Մանազկերտի ժողովում մասնակցել են և նորա ներկայացուցիչները Ասողիկ առանց յիշելու Աթանասի անուշնը, հաղորդում է, որ Մանազկերտի ժողովին մասնակցել են «վեց եպիսկոպոս յԱսորւոց՝ Յակոբիկ տանէ՝ հրամանաւ պատրիարքին իւրեանց»։ * Դանձակեցին աւելի մանրամասնութիւններ է տալիս. «կոչէ (Օձնեցի) և զԱթանաս պատրիարք Ասորւոց. և նա ա-

ռաքէ վեց եպիսկոպոս, և նզովէ զՅուլիանիտսն և զապականացու ասողս ի Քրիստոս, և զԲարչապուհ և զԴարբիէլ թանսարկուս Հայոց և Ասորոց, և կանոնական օրինադրութեամբ պայծառացոյց գեկեղեցի, ի բաց ընկեցեալ զբաւանութիւն Քաղկեդոնի, որ յաւուրցն Հերակլի կայսեր և Եզրի զայթակղոսի տւնէր անկարգութիւն զաշխարհս Հայոց Կարգեալ զընթերցուածն սրբոյն Յակոբայ և Կիւրզղի, և զամենայն տօնսն՝ որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի՝ տօնեցին ի հե գեկտեմբերի ամսոյ Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր յայլ աղքա ծննդեան Ծեառն տօնէին . . . *

Միքոյէլ Ասորին, որ ժամանակով Գանձակեցուց առաջ է (1166—1199 թ. պատր.) նման է աւելի Գանձակեցուն, բայց ունի այնպիսի կարեւոր տեղեկութիւններ, որ պակասում են վերջնի պատմութեան մէջ, Յամենայն գէպս նոքա միմեանցից անկախ են գրում: Յայսմ ժամանակի (այսինքն արարացոց խալիք Հէշմի ժամանակ 724—743 թ.) էին Աթանաս պատրիարքն Անտիոքու և Յովհաննէս իմաստասէրն Հայրապեան Հայոց. և Սիւնիք և Վասպուրական և Աղուանք և Սասանունք և Յա-

Կորիկ Ասորիք էին ի մի գաւանութեան առաքելական շիմամբ. և վասն այսորիկ ելթային Ասորիք առ Սասանօք ոռ Հայք և ասկին. Մեք սուրբ Գրիգորի գաւանութեամբն եմք, և առնուին ինոցանէ ձեռնազրութիւն, և ոչ զոյր հակառակութիւն. և վասն այսորիկ կոչեցան Թրիգորիկք»: Այս բարեկամական յարաբերութեան խանգարման պատճառն եղան Բարշապուհ երէցն ու Գարրիկ սարկաւագը, որ Հայոց մասին չարախօսում էին թէ Յուլիանիտներ են, իսկ զլասորոց ապականացու. ասկին զմարմինն Քրիստոսի այլ և պղտորում Եզրի Ֆնացեալ էր ի Հայս ի տեղիս. տեղիս առ բազումս: Օձնեցին Աթանաս պատրիարքին թուղթ է ուղարկում մի Հայ եպիսկոպոսի ձեռքով, իսկ ինքը Մանազկերտում ժողով է զումարում: որին մասնակցում են Ասորի վեց եպիսկոպոսն Ժողովը նզովում է Յուլիանիտներին և «զապականացու խոստովանողսն զՔրիստոս», վերոյիշեալ բանսարկուներին և Եզրիաներին: «Բայց սակա տօնից և արարողութեանց գտաւ զանազանութիւն ինչ, որոց ոչ արարին փոյթ և արձակեցան սիրով»: *

Օձնեցու և Աթանաս պատրիարքի օրով

գումարուած ժողովի մասին քաղուածքներ է
բերում և Ասեմանին Գրիգոր Բարեբրէոսի
Ժամանակագրութիւնից «Սա (Աթանասը) ժո-
ղով գումարելով՝ Հայոց Ասորի Յակովիկների
հետ միացրեց Յունաց 1037 (= 726) թ»:^{*}
Աւելի ընդարձակ տեղեկութիւններ ենք ստա-
նում Testimonia Auctorum վերնագրի տակ
եղած հատուածից։ Բարեբրէոսի կարծիքով
Հայերը յարել էին Յուլիոս Աղիկառնացու
վարդապետութեան։ Աթանասի և Յովհաննէս
կաթուղիկոսի օրով գումարուած ժողովի նը-
պատակն էր Հայոց յետ դարձնել այդ մոլորու-
թիւնից «Մեր պատրիարք Աթանասի և նը-
րանց (Հայոց) Յովհաննէս կաթուղիկոսի օրով
քննութիւն եղաւ այս հարցի մասին և ըն-
դունելով մեր դաւանութեան իսկական ճշշ-
մարտութիւնը՝ միացան մեզ հետ և ստորա-
գրեցին միութեան թուղթը։ Բայց և այնպէս
շատ ժամանակ չանցած՝ դարձան կրկին Յու-
լիանոսի հին վարդապետութեան»։ **

* Bibl. Orient. II, p. 338: Hic (Athanasius) congregata Synodo Armenos cum Syris Jacobitis conciliavit anno Graegorum 1037.

** ibid p. 295-296: Et sub Athanasio quedem nostro Patriarcha, et Ioanne ipsorum catholico in publica collatione disquisitionem hac de re habuerunt, nostrae—que doctrinae certam veritatem agnoscentes nobis

Յիշեալ պատմագիրներից զատ ձեռագիրների մէջ մի փոքրիկ գրութիւն ունինք «Յոհաննու հմաստափիրի Հայոց կաթուղիկոսի Սակս ժողովոց որ եղեն ի Հայս» վերնագրով։ Նկարագրուած ժողովներից վերջինը Մանագիրատի նոյն ժողովն է, որի մասին տեղեկացանք Հայոց և Ասորոց պատմիչներից։ Զամշեան առանց որ և է դրական փաստի այս ժողովը համարում է 651թ. գումարուած ոմն Յսվհաննես տեղապահի և ոչ Օձնեցու օրով։ Այն ինչ մեր յիշատակարանի համաձայն ժողովը եղել է «Ի ծՀԵ (=726) թուականին Հայոց յԵ. արէ ամսոյ»։ Սխալ համարելով Զամշեանի կարծիքը՝ մենք չենք պնդում նորա ներկայ բնագրի հարազատութեան վերայ։ Մեզ համար հետաքըրքրականն այն է, որ այստեղ յիշուած են ժողովին մասնակցող Հայ և Ասորի եպիսկոպոսների անունները։ Հայոց եպիսկոպոսներն են՝ «Ալփէոս Հարքա, Թագէոս Ոստան, Սահակ Մամիկոնեան, Յեսու Բասենոյ, Սարգիս Տայոց, Թէոդորոս Բզնունեաց, Գրիգորէս Քորեպիսկոպոս Արշարունեաց»։ Խսկ Ասորիների համար հեղինակը հետեւեալն է Հաղորդում։ «Եկին ընդ մեզ և արք ոմանք դարձեալ եպիսկոպոսք

reconciliati sunt, et libello unionis subscripsere. Nihilominus non modico post tempore ad antiquum Iuliam dogma rediere.

վեց յԱսորոց Յակոբիկ տանէ, վասն միարանութեան խոստովանութեան ընդ մեզ լինելոյ, որոց անուանք՝ առաջնոյն Կոստանդին եպիսկոպոս (փոխանորդ պատրիարքին, բ. Բասիլ) մետրապօլիտ Ուռհայ քաղաքի գ. Սիմեոն Խառանադ. Թէ՛ս Թէ՛ս Գարդմանից եպիսկոպոս. ե. Տէ՛ր Աթանաս Նփրկերաոյ եպիսկոպոս. զ. Թէ՛ս Թէ՛ս Ամասիոյ եպիսկոպոս. Սոքա ամենեցեան հրամանաւ արքեպիսկոպոսին Անտիոքա եկին առ մեզ ի միարանեալ ժողովն, և միաւորեալ ընդ միմեանս հաւատով՝ զմիութիւն խոստովանելով»: *

Այս բոլոր վկայութիւնները միաձայն հաստատում են, որ Օձնեցու և Աթանաս Գոհ օրով Հայոց և Ասորոց մէջ միութիւն հաստատելու նպատակով մի ժողով է գումարուած. բայց թէ Խոսրովի Ա. և Դ. թղթերի մէջ յիշուածը նոյն է այս ժողովի հետ. թէ ոչ, հետեւեալ պրակներից կտեսնենք:

Ե.

Հայ և Ասորի պատմիչների տուած տեղեկութիւնները Օձնեցու օրով գումարուած ժողովի մասին կարող ենք հետեւեալ կէտերի

* № 730 թ. 287. Փակագծի մէջ դրածը Աբրամյուն ենք Զամշեանից Բ. Հատոր եր. 267:

մէջ ամփոփել: Ժողովը 1) գումարուել է Անտիոքի Աթանաս պատրիարքի եպիսկոպոսների մասնակցութեամբ. 2) նզովել է Յուլիանիստներին, Քրիստոսի մարմինը ապականացու ասողներին կամ Սեւերեաններին, 3) Հերակլիօրերից Հայաստանում մնացած Եղիշտներին կամ Քաղկեդոնականներին: 4) Ժողովն զբաղուել է ծիսական եւ տօնական ինդիրներով:

Ա'րդ, Խոսրովկի գրութիւնների բովանդակութեան պարզ համեմատութիւնը ցոյց է տալիս, թէ նորա յիշած ժողովը այլ չէր քան պատմիչների նկարագրածը: Նորա գրութիւններից նոյն տեղեկութիւններն ենք ստանում այս խնդիրների մասին, ինչ որ յայտնում են պատմիչները: Խոսրովկի գրութեանց պատճառը հէնց այն տարածայնութիւններն են, որ ծագել են ժողովի մէջ: Առաջին թուղթն ուղղուած էր քաղկեդոնականութեան հակուած բարձրաստիճան մի անձի դէմ: Կրկրորդ, երրորդ և հինգերորդը Յուլիանիստների, իսկ չորրորդը Թէ՛ղոտոս եպիսկոպոսի դէմ, որ Քրիստոսի մարմինը ապականացու դաւանող կամ Սևերեան էր: Խոսրովկի յիշած ժողովը ևս գումարուել է Անտիոքի Աթանաս անունով մի պատրիարքի օրով եւ նորա եպիսկոպոսների մասնակցու-

Թեամբ. Ասորի եպիսկոպոսների վեց թիւը՝
թէև յայտնի չէ Խոսրովից, բայց նորա յիշած
Ասորի երկու եպիսկոպոսների անունները նոյն են «Սակս ժողովոց» զրութեան
ցանկի երկու անուան հետո։ *

Խոսրովի յիշած ժողովն ևս զբաղուել է
ծիսական եւ տօնական խնդիրներով։ Առաջին
թղթի մէջ յիշուած հակառակորդը՝ քաղ-
կեդոնականութեան հակուած բարձրաստիճան
անձը՝ պահանջում էր «ի քսան և ի հինգն
գեկտեմբերի ծնունդ առնել և զերեցսրբեան
օրհնութիւնն ի վերայ Երրորդութեանն՝ և
ոչ ի վերայ Որդւոյ միայն նուագեալ»։ Ժո-
ղովի մէջ յուզուած ուրիշ ծիսական խնդիր-
ների մասին, «որով ոչ այնքան յընդունելն
օգտեսցի եկեղեցի և ոչ յոչ ընդունելոյն վը-
նասեսցի», հեղինակը տեղեկութիւններ չէ հա-
զորդում, որովհետեւ նա կամենումէ դաւանա-
բանական խնդիրները պարզել և ոչ թէ ժողովի
նկարագրութիւնը տալ։ Ծիսական այս տեղե-
կութիւնը, որ քաղում ենք Խոսրովից, հա-
մապատասխան է Գանձակեցու պատմածին։ **

Միքայէլի համաձայն ծիսական խնդիր-
ների մասին հարց է եղել նաև Հայոց և

* Այս գրքի մէջ եր. 66.

** Յովհ. հրատ. եր. 39.

Ասորւոց մէջ։ Արդարեւ այդ իրողութիւնը հասաւատւում է մեր յիշած և Հարցմաւնք Հայոց բազեախն Անտիռքա ընդ Խոսրով Հայոց վարդապետ յաղագս ծնունդն առնելոյ « գրութեամբ։ Աթանասի և Խոսրովի մէջ եղած վիճաբանութեան առաջին կէտը ծննդեան տօնն էր. ի՞նչու բոլոր քրիստոնեանը դեկտ. 25-ին են կատարում։ իսկ Հայերը յունուարի 6-ին։ Խոսրովիկ բացարում է, թէ Հայերը հետեւում են մինչեւ Յուստիանոս ընդունուած նախնի սովորութեան։ փոփոխութիւնը կատարուել է յիշեալ կայսեր օրով՝ «որ բըռնացաւն ի վերայ քաղաքին Երուսաղեմի» և իւր ամբողջ տէրութեան մէջ կարգերը փոխել առւաւ։ ժողովն էլ հնագանդեց կայսեր հրամանին, այն ինչ առաջ, Յակոբոս Տեառնեղու կարգադրութեան համաձայն, բոլոր եկեղեցիները միասին էին տօնում։ Անդէասի վկայութեամբ Կոստանդիուանոս մեծի ժամանակ ծնունդը յուն։ 6-ին էր կատարում։ Կիւրեղ թէև յիշում է, որ ուրիշ քաղաքներում դեկտ. 25-ին ծնունդ են կատարում, բայց ինքը փոփոխութիւն չարաւ, այլ այն օրը Դաւթի և Յակովայ տօնը կարգեց։ Հայերը յայտնութեան և մկրտութեան տօնը միասին են կատարում նախնի սովորութեան համաձայն, որին վկայ են Յակո-

բռս Տեառնեզբայր, Կիւրեղ և Անդրէսս:
Երկրորդ խնդիրը Աւետեաց տօնի մա-
սին էր: Խոսրովիկ իւր բացատրութիւնների
ընթացքում ի միջի այլոց յայտնում է և
հետեւալը: «Բայց զաւետեացն աւր տաւ-
նեմք յետ տաւնախմբելոյ զյայտնութիւն
.Փրկչին մերոյ, զի պահք սուրբ աղհացան
մի լուծցին, զի հազիւ հազ կարացին վար-
դապետքն հայոց զաւր Խ. երորդին Տեառն
մերոյ պահաւք հաստատել»: Ընդգծած տո-
ղերի մասին մի նկատողութիւն ունինք, բայց
քիչ յետոյ:

Աթանասի և Խոսրովի վիճաբանութեան
երրորդ հարցը անապական բաժակի եւ ան-
խմոր հացի խնդիրն էր: Աթանաս յիշում է,
թէ Յակոբոս Տեառնեզբօր պատարագամա-
տոյցի համաձայն բաժակի մէջ ջուր պէտք է
խառնել: Խոսրով անվաւերական է համա-
րում յիշեալ զլուածքը: Այդ հատուածը
մէջ ենք բերում Խոսրովի խօսքերով, որով-
հետեւ պատարագամատոյցների գրականու-
թեան հնագոյն յիշատակութիւններից մէկն
է: «Ոչ ոք յաստուածային պատարագացն
յիշէ զպատարագամատոցն, ոչ երանելին Ե-
րիանոս (Irenaeus) հետեւողն առաքելոց, և
ոչ երանելին Եւսեբի, որ զպատմութիւնն ե-
կեղեցւոյ զրեաց: Քանզի Յակովոս եղբայրն

Յեառն ոչինչ եթող գրով՝ քան զբնթերցուածս և զկաթուզիկսն։ Յամենայն ժամ յիշէ Եւսեբի և ասէ. զառաքելոցն այդ ինչ ոչ գտաք. աղե, ասա, թե պատարագամատոց ունէին առաքեալքն զինքատուացն կամ զպսակադրութեանն կամ զվախճունելոյ կարգս ընդէ՞ր ոչ ունեին, ապա զայս ամենայն որ պէս կատարեին»։

Աթանասի և Խոսրովի մէջ եղած այս խօսակցութիւնը մենք վիճաբանութիւն անուանեցինք. բայց աւելի տրամախօսութիւն կարելի է անուանել, քան վիճաբանութիւն։ Որովհետեւ Աթանասիսկապէս բայցատրութիւն է խնդրում յիշեալ կէտերի մասին և ոչ հակառակել կամենում։ Գրութեան տրամախօսական այս եղանակը առիթ չպէտք է լինի կասկածելու նորավաւերականութեան վերայ։ Հին ժամանակներից ընդունուած մի ձեւ էր այդ կրօնական խնդիրներ պարզելու համար։ Հայոց և օտարեկեղեցիների մատենագրութեան մէջ բազմաթիւ օրինակներ ունինք։ Բաւական է յիշել Պիւրբոս պատրիարքի և Մաքսիմոս Խոստովանողի մէջ եղած վիճաբանութիւնը, որ Միակամեայց պատմութեան վաւերական աղբիւներից մէկն է։ Մենք համոզուած ենք, որ գրութեանս մէջ յիշուած Խոսրով հայոց վարդապետը ոչ այլ ոք է, քան Խոսրովիկ

Թարգմանիչ։ Ապացոյց սորան Աթանաս և
Խոսրով անունների զուգագիպութիւնը և
բովանդակութեան համաձայնութիւնը Մի-
քայէլ Ասորու և Գանձակեցու հետ։ Խոսրովի
և Աթանասի խօսակցութիւնը սուր, վիճա-
բանական բնաւորութիւն չունի, այլ ճիշդ
այնպէս է, ինչպէս Միքայէլ Ասորին է հաղոր-
դում։ «բայց սակա տօնից և արարողու-
թեանց գտաւ զանազանութիւն ինչ, որոց ոչ
արարին փոյժ և արձակեցան սիրով»։ Գան-
ձակեցու խօսքերն ևս «կարգեալ զընթեր-
ցուածն սրբոյն Յակոբայ առաքելոյն, զոր
յայլ ազգս ծննդեան Տեառն տօնէին» գար-
ձեալ համաձայնում է մեր գրութեան։ Թարգ-
մանիչն է այստեղ յիշուած Խոսրովը և ոչ
այլ ոք, որովհետեւ մեզ յայտնի Խոսրովներից
ոչ մէկի ժամանակը յարմար չէ գալիս Ան-
տիոքի Աթանաս անունով պատրիարքների
ժամանակին։ Խոսրով Անձեւացուն ժամանա-
կով ամենից մօտը Աթանաս Ն-ն է, որ պատ-
րիարքական աթոռի վերայ է բարձրացել
987—1004թ.^{*} այն ինչ Անձեւացին վախճա-
նուած էր 965թ. առաջ^{**} Զի կարող խօսք

* Assemani. Bibl. orient. T. II. P. 351—352.

** Միաբան. Անանիա Մոկացի. Արարատ.
1897 գետր. եր. 94.

լինել նաև Անանիա Մոկացու թղթի մէջ յիշուած Խօստրով գիտնականի մասին, որովհետեւ № 102 ձեռագիրը, ուր գտնւում է մեր յիշատակարանը, 971թ. է գրուած:

Մեզ թուում է, թէ այս վիճաբանական գրուածքը մի ուրիշ խնդրի վրայ ևս լոյս է սփռում: Մենք յիշել ենք Խոսրով հոետոք անունով մէկին, որ Զամչեանի հաղորդած տեղեկութեան համաձայն աղուհացից ճառերունի գրած, և մի փոքրիկ հատուած էլ վկայութիւն է բերում իւր պատմութեան մէջ: * Այս վիճաբանական գրուածքի ընդգծած մասը համեմատելով Զամչեանի Խոսրով հռետորից բերած հատուածի հետ՝ մեր մէջ այն միտքը ծագեց, թէ Խոսրովիկ թարգ-

* Հատոր Բ. եր. 609. Յերբեմն ժամանակի՝ յորժամ հոռոմքը տիրեալ ունէին զաշխարհս մեր, և խառն բնակութիւն էր քաղկեդոնականացն ընդ մերսն. և սկսան ոմանք շեղիլ որկրամոլութեամբ զկնի նոցա խառնակութեանն. այլ և վերակացուքն յունաց բռնաբար գայթակղեցուցին. և հարկ եղեւ վարդապետացն որ ի ժամանակին՝ հնարս ինդրել, եւ հուե անցից քանել ի նեղեղէ ամպարշուրեանն, իբրև կամուրջ ինչ արկանել զլուծումն շաբաթու և կիւրակէի, զի զայլ աւուրս սրբութեամբ պահեցն, և զատանիցին ի նոցանե. եւ այսպէս կամայ եւ ակամայ ի հարկէ խամատեցին զամուր պարիսպ պահոցն և քակեցին զցանկն առաքելական.

մանիցը նոյն պէտք է լինի Խոսրով հռետորի
հետ։ Մեր ձեռքում եղած նիւթը այնքան
չնշին է, որ մեծ համարձակութիւն կլինէր
դրական եզրակացութիւն հանել, բայց աչքի
առաջ ունենալով, որ Խոսրով հռետորը ապ-
րում էր Եւ դարու կէսերից յետոյ, * որ նա
քառասնորդական պահքի մասին գրելիս յի-
շում է Հայոց վարդապետների ջանքը, ինչ-
պէս և Աթանաս Անտիռքացու հետ վիճող
Խօսրովը, թուում է, թէ սխալ չպէտք է
լինի մեր ենթադրութիւնը։

Հ.

Խոսրովիկ Թարգմանչի և պատմիչների
յիշած ժողովի նոյնութեան հաստատութեան
վի երկրորդ փաստ է հետևեալը։ Զեռագիր-
ների մէջ տասը նզովներից բաղկացած մի
փոքրիկ գլութիւն ունինք, որ իւր վերնա-
գրով և բովանդակութեամբ միանգամայն հա-
մապատասխան է պատմիչների նկարագրած
ժողովին։ Նզովքներն ուղղուած են Յուլիա-
նիտների եւ Սեւերեանների դէմ եւ վերնա-
գրին նայելով Մանազկերտի ժողովի մէջ են
հաստատուած**։ Համեմատելով այս գրութիւ-

* Համ. այս գրքի եր. 28—29։

** № 1679 (Կար. 1637) 300^Բ նզովքն յա-
ռաջին ժողովքն Մանազկերտի։

Նը Խոսրովիկ Թարգմանչի երկերի և Օձնեցու
Երեւութականաց ճառի հետ՝ մեծ առնջու-
թիւն ենք դառնում զովանդակութեան կողմից։
Մինչեւ իսկ նզովքներից մի քանիսը մեզ հա-
մար հասկանալի են դառնում Երեւութականաց
ճառի ընթերցանութեամբ։ Օրինակ առաջին
երկու նզովքները (տես քիչ յետոյ) դաւանա-
բանական նորութիւն չեն տալիս և մենք չենք
հասկանալ առաջին անգամից, թէ նոքա Յու-
լիանիտների դէմ են ուղղուած, եթէ Երեւու-
թականաց ճառը չպարզէր մեզ այս խնդիրը։
Կարգալով Երեւութականաց ճառի մէջ Օձնեցու
հակառակորդի առարկութիւնները Երրորդու-
թեան ուղղափառ վարդապետութեան դէմ։ **
մեզ հասկանալի է դառնում, թէ ի՞նչու Մա-
նազկերտի ժողովի հայրերը անհրաժեշտ են հա-
մարել առաջին նզովքը հաստատելու երկրորդ
նզովքի լուսաբանութիւնը տես Օձ. եր. 71.
Նզովքների մէջ Յուլիանիտների դէմեղածքո-
լոր կէտերը գանում ենք Երեւութականաց ճառի
մէջ։ Այդ առնչութիւնը եթէ մի կողմից հաս-
տատում է նզովքների վաւերականութիւնը,
միւս կողմից ցոյց է տալիս Խոսրովիկի յիշած
ժողովի նոյնութիւնը Մանազկերտի ժողովի
հետ։ Խոսրովիկ իւր գրութիւններով ճիշդ

** Յովհաննու Իմաստասիրի մատենագրու-
թիւնք Վենետիկ. 1833թ. եր. 62. 63. 64

նոյն աղանդների դէմ է մաքառում, որոնց համար և գրուած են Մանազկերտի նզովք-ները։ Ըսթեցողների գիւղութեան համար մէջ ենք բերում այդ փոքրիկ գրութիւնն ամ-բողջութեամբ, թէև արդէն հրատարակուած է միանդամ։ *

ա. Եթէ ոք ոչ խոստովանի զտուրբ Եր-բորդութիւնն մի բնութիւն և մի աստուա-ծութիւն, յերիս դէմն և յերիս անձնաւո-րութիւնս կատարեալս հաւասարս, նզովեալ եղիցի,

բ. Եթէ ոք ոչ խոստովանեսցի զԲանն Աստուած մարմնացեալ ի սրբոյ կուսէն ճշշ-մարտութեամբ, այսինքն զբնութիւնս մեր առեալ ի նմանէ՝ զհոգի և զմարմին և զմիտս առանց ապականութեան, ասիցէ կարծեաւք և նմանութեամբ երևեալ զՔրիստոս, նզ.

գ. Եթէ ոք ոչ ասիցէ ի մեղանչական և ի մահկանացու մերմէ բնութենէս առնուլ մարմին Բանին Աստուծոյ, այլ յանմեղ, յան-ման եւ յանապական բնութենէն, զոր ունէր

* * * Սամուելի Քահանայի Անեցւոյ հաւաք-մունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամա-նակաց անցելոց մինչեւ ի ներկայս. Հրատ. Ս. Էջ-միածնի տպարանի, աշխատ. Արշակ Տ. Միքելեանի. Վաղարշապատ. 1893. եր. 187.

Դադրաստեղն յառաջ քանզի զյանցանսն, նզ.^{*}
Դ. Եթէ ոք ոչ խոստովանեսցի զմարմ-
նացնալ Բանն Աստուած մի բնութիւն ըստ
անձառ միաւորութեանն, որ յԱստուածու-
թեանն՝ որ յԱստուածութենէն և ի մարդ-
կութենէս, այլ է կամ ըստ ընութեան մի
ընութիւն և կամ եթէ ըստ շփոթութեան
և ըստ գոտիսն, մի բնութիւն, նզ.

Ե. Եթէ ոք ոչ խոստովանեսցի զմի և
զնոյն Աստուած և մարդ միանգամայն, այլ
զայլ ոմն Աստուած ասիցէ և զայլ ոմն
մարդ, նզ.

Գ. Եթէ ոք ոչ ասիցէ զմարմինն Քրիս-
տոսի անապական ի ծննդենէն որ ի կուսէն
մինչև ցյաւիտեան, ոչ ըստ ընութեան, այլ
ըստ անձառ միաւորութեան, այլ մինչև յայ-
րութիւնն աղականացու և անփանառոր և ան-
հապար և աղա յետ յարութիւնն ասիցէ եղլ-
անապական և գոտուառոր և կապացեալ, նզ.

Հ. Եթէ ոք ոչ ասիցէ զմարմինն տէրու-
նական չարչարելի և մահկանացու ըստ բնու-
թեան և անչարչարելի և անմահ ըստ աս-
տուածութեանն՝ բանն միաւորութեան, այլ

* Նզովքների մէջ շղագրերով ընդգծուած
նախադասութիւնները վերաբերում են Յուլիանիա-
ներին, իսկ նոորագիրները Սևերեաններին:

ասիցէ ըստ ընութեան անշարժարթի եւ անմանի և կամ ըստ անձաւ մշաւոյնութեան շարդարնելի և մանկանացու, նզ.

Ռ. Եթէ ոք ոչ ասիցէ զՔրիստոս մարդու կրեալ զամենայն կիրս մարդկայինս առանց մեղաց, այլ ըստ առարտածութեանն զնայ ամիշտալ ընդ իրեւ, և կամ անհագորդ լեալ զնայ մարդկային կրից ըստ տնաւրէնթեանն, նզ.

Թ. Եթէ ոք ոչ խոստովանեացի զՔրիստոս յետ տնձառ տնաւրէնութեանն հաւատար Հաւը և Հոգւոյն՝ Աստուած ծշմարիտ՝ նոյնարէս կատարեալ և ծշմարիտ մարդ հաւատար մօր և մեզ, բայց ի մեղաց՝ նզ.

Ժ. Եթէ ոք ոչ խոստովանեացի անապականաբար կրեալ Քրիստոսի զամենայն կիրս մարդկայինս կամաւ, այլ առականաբնեանք անէն նմայ զայսանի և կամ ենէ զնյն ինդն զիրս առականութիւն դնէն նմայ և ոչ խոստովանին ըստ առաքելոցն և մարդարէիցն և ուղղափառ վարդապետաց խոստովանութեան, նզ.

Այս նզովքներից զ.-ը Յուլիանիտների, իսկ զ.-ը Սեերեանների համար է հաստատուած. Դ. Է. ը. Թ. Ժ. երկուսի դէմ միանգամայն: Մնացածները թէև ինքնըստինքնեան այս

աղանդների գէմ չեն, բայց հասկանալի են գառնում Օձնեցու Երևութականաց ճառի և Խոսրովիկ թարգմանչի նոցա դէմ գրած երկերի ընթերցանութեամբ։ Համեմատենք միայն այն նզովքները, որ այս կամ այն աղանդին են վերաբերում։ Երբորդ նզովքի հետ խնդրում ենք համեմատել նախ Խոսրովիկց հանած մեր քաղուածքներն ու վկայութիւնները* (Ձեռ. № 518 եր. 276—272), ապա հետեւեալը (եր. 326—327 ե. թղթից)։ «Եւ որ դնէ յարացոյց մարմնոյն Քրիստոսի զառաջին մնարդոյն մարմին, նախ քան զանցանելն ասելով առաջին մնարդն անընդունակ էր կրից մարդկայնոց՝ մարմնականաց եւ հոգէկանաց։ Թէ այնպէս է, Քրիստոս ոչ ունէր զբնութիւն զառաջին մարդոյն, զի կրեաց կարգաւ և կամաւորութեամբ զամենայն կիրս մարդկայինս առանց մեղաց և ապականութեան։ Եւ եթէ ունէր զբնութիւն առաջին մարդոյն, և հաւասարեաց մեզ ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց՝ յայտ է, թէ և առաջին մարդն ընդունակ էր կրից։ և եթէ հոմարուն ունէր Քրիստոս զմարմինն առաջին մարդոյն և մարդն առաջին անընդունակ էր կրից, առ

* Այս գլուխ մէջ եր. 49—51.

աշօթ ապա պարտին լինել Քրիստոսի կիրքն
և ոչ ծամարտաւթեամբ: *

Զորրորդ նզովքը համ. Եր. 336. Ե.
Թուղթ. « Ձի՞նչ և առ նոսա, որք ասենն,
թէ յերկուց մին զՔրիստոս ամբարշտութիւն
է, այլ պարտ է ասել ի վերայ նորա մի ըզ-
նութիւնն . . . Արդ յերկուց մին ասելն առ
ձեռն պատրաստ յանդիման ցուցանէ զիմաս-
տըս, եթէ բանն, որ յԱստուծոյ Հօրէ, մար-
մին մարդկային զգեցաւ ի սուրբ Կուսէն Մա-
րիամայ և ընդ ձեռն անբաժ և մշտնջենաւոր
միութեանն մի ասի: Քանզի բանին և մարմ-
նոյն երկոցունցն իմանամք լինել զմիաւորու-
թիւն, այսինքն է յԱստուածութենէն և
ի մարդկութենէն . . . իսկ մի բնութիւն ու-
նել ասելով զՔրիստոս՝ ի վերայ ոչ բերելով
ըստ միաւորութեան բանի, ասացեալ լինի զմի
քնութիւնն ըստ համագոյութեան բանի (այս-
ինքն՝ ըստ համագոյութեան բանի և մարմնոյ,
որից և մի ընութիւն ըստ ընութեան)**) . . . և
կամ որպէս ստեղծանեն ըստ շփոթութեանն
զմիաւորութիւնն իմանայցէ . . .

Այնքան նմանութիւն կայ այս հատուա-

* Աերջին մասը համ. Բ. նզովքի հետ. Տես
Երևութականաց ճառը Եր. 71.

** Փակագծի մէջ առնուածը մերն է:

ծի և Դ. Նզովքի իմաստների մէջ, որ կարծես նոյն հեղինակն է խմբագրել:

Հ. Նզովքի «ըստ ընութեան անշարչարելի եւ անմահ» խօսքերի հետ համեմատել Աղիկառնացու վարդապետութիւնը Խոսրովի բառերով * և ապա հետեւեալը. «Արդ այսպես բանին, որ ըստ միաւորութեանն ասի չարչարելի (ուղղափառ մտքով քիչ առաջ բացատրածի համեմատ) և եթէ ոք դիցէ զայն նմա ըստ ընութեանն գոլ» համաձայն է Արիոսին, «նոյնպէս և մարմնոյ նորա զասելն ընոտ միաւորութեանն անշարչարելի, եթէ ոք դիցէ զայն նմա ըստ՝ ընութեանն գոլ, Յուլիանիս է» . . . եր. 245. Ա. Թուղթ.

Մենք կարող ենք բազմաթիւ վկայութիւններ բերել մեր հեղինակի այլ և այլ թըղթերից, որոնք համապատասխան լինեին Յուլիանիտների գէմ հաստատած նզովքների այս կամ այն կէտին: Բայց այսքանն էլ բաւական ենք համարում ցոյց տալու, որ Խոսրովիկ ծիշդ նոյն աղանդի դէմ եւ նման ծեւով է մաքառում, ինչպէս և Մանազկերտի ժողովի հայրերը (Տես և Երութականաց ճառը եր. 68, 69, 70):

Իսկ Մեերեանց դէմ հաստատուած նը-

* Այս գրքի մէջ եր. 19

զովքներից յատկապէս վլեցերորդի հետո պէտք է համեմատենք Բ. պրտկիրմէջ յիշուած թէու դրառանի կարգապետառութիւնը՝ *

«Եերին ժամանակս փրփռիտուանն ընդունել առեր (թէուդոտոս) զՔրիստոսի, և առասկաւ առկաւ յակաւ յառաջնարութեամբ և յաւելուածով զրաւանդակն յետ յարութեանն շնորհէր գտանել նմա փառսու, զիատարելութիւնն և զանապականութիւնն» եր. 286. Համ. Զ. և Դ. նզովքների հետ:

Անութիւն մի զՔրիստոս առեր (թէուդոտոս) գոլ և յառաջ մատչելով, զնոյն բարձանէր յայլանմանս և ի զանազանս, որպէս յառաջն ասացի, զոմն ամենակատար և փառաւորեալ և անապական ասելով, և զմիւսն ոչ նոյնպէս եր. 287. Համ. Դ. և Զ. նզովքների հետ:

Ասէր (թէոդոտոս) թէ, վասն զի անկատար եւ անփառաւոր եւ ապականացու եկաց մարմինն Քրիստոսի ի ծննդենէն մինչեւ ցյարութիւնն, պարտ էր ըստ այսմիկ եւ զնա չարշաթլի եւ մահկանացու ասել մինչեւ ցյարութիւնն եր. 210. Համ. Զ. Է. նզովքների հետ:

«Թէոդիտէ ասէր. ի Մարիամայ ծնեալն անփառաւոր և անկատար է և զապականու-

* Այս գրքի մէջ եր. 14—15

Թիւն զգեցեալ» եր. 296։ Համ. Զ. նզովքի հետ։
«Խոստովանեա կրել զմարդկայինսն և ի
վերայ բեր կամօք զայն կատարեալ և մի զնու-
սին՝ զկամաւոր կիրս ապականութիւն ի նմա-
իմանայր, այլ մարդասիրութեան կարեկցու-
թիւն» եր. 303—304։ Համ. Ժ. նզովքի հետ։
«Զի ամօթ արացէ զնոսա, որք տսենն,
թէ նախ քան զյարութիւնն կարօտական ու-
նէր մարմին և ընդունող մարդկայնոց կրից և
ապականութեանց, և յետ յարութեանն յան-
կարօտութիւն և յանապականութիւն փո-
խեցաւ եր. 311։ Համ. Զ. Ը. և Ժ. նզովք-
ների հետ։

Այս համեմատութիւնները հաստատում
են, որ երկու գրութիւնների մէջ որոշ շափով
առնչութիւն կայ։ Բայց մենք նկատուած նմա-
նութիւնները մատենագրական փոխառու-
թեամբ բացատրել չենք կարող և մատենա-
գրական փոխառութիւն էլ չենք համարում
նոքա հասկանալի են գառնում միայն նորա-
նով, որ Խոսրովիկ եւս Մանազկերտի ժողո-
վի շրջանին պատկանող անմն էր եւ նոյն ա-
ղանդների դէմ էր մաքառում։ Գուցէ առար-
կոզներ լինին, թէ համեմատութիւնը արդա-
րե պարզում է, որ Խոսրովիկ ևս նոյն աղանդ-
ների դէմ է մաքառում բայց դժուար է բե-

յած համեմատութիւններից ժամանակակցութեան եզրակացութիւնը հաստատել։ Արդարեւ միայն համեմատութիւններով համարձակութիւն չէինք ունենալ մեր եզրակացութեան վերայ պնդել (թէև համեմատութեան մէջ մի քանի ակնարկներով մատնացոյց ենք արել, որ երկու գրութիւնները պէտք է ժամանակակից լինին), եթէ մենք ուրիշ նախադրեալներ ևս չունենայինք։ Վերարտադրելով մեր յիշողութեան մէջ նախընթաց պրակի ապացոյցները, թէ Խոսրովիկի ժողովը եղել է Անտիոքի Աթանաս անունով մի պատրիարքի օրով, որին մասնակցել են նորա երկու ներկայացուցիչները, ժողովի մէջ վէճ է ծագել Սևերեանների և Յուլիանիտների դէմ (Ե. Թուղթ), իսկ միւս կողմից պատմիչները վկայում են, որ այդպիսի ժողով գումարուել է Օձնեցու և Աթանաս Գ. ի օրով Մանազկերտում։ և ապա բովանդակութեան սերտ առնչութիւն նկատելով Խոսրովիկի գրութեան և Մանազկերտի ժողովի նզովքների մէջ, այլ ևս անհիմն եզրակացութիւն չենք համարում։ թէ երկու ժողովները նոյն են և այդ նմանութիւնները հասկանալի են նորանով, որ Խոսրովիկ ևս նոյն ժողովին մասնակցողներից մէկն էր իւր վկայութեան համաձայն։

Բայց մի այլ ևնդիր՝ Օձնեցու և Խոսրով-

կի զբութիւնների համեմատութիւնը այլ ևս
ոչ մի կասկածի առղիք չէ թաղնաւմն թէ Խոհա-
րավիկ Խմանափասէր Հայրապետի ժամանակա-
կից եւ նրան ժաղովին մասնակցող մի անթն
էր։ Այս կետի լուսաբանութեան նուիրուած
կի՞նի հետեւալ պրակը։

ՅԹ.

Խոսրովի զբութիւնների և Մանազ-
կերտի ժողովի նզովքների համեմատութեան
ժամանակ մենք արդէն մատնացոյց ենք
արել Երեսութականաց ճառի առնչութիւ-
նը նզովքների, ուրեմն և Խոսրովի հետ։
Այս հանգամանքը այնքան ծանրակշիռ է
մեր աշքում որ աւելորդ չենք համարում
առանձին պրակով պարզել երկու հեղինակ-
ների յարաբերութեան խնդիրը։ Երեսութա-
կանաց ճառի և Խոսրովի Յուլիանիտների
դէմ գրած թղթերի մէջ այնպիսի սերտ նմա-
նութիւն կայ, որ ուշադիր ընթերցողը ոչ մի-
այն առաջին անգամից նկատել կարող է, այլ
և երբեմն կարծես Յոհան Օձնեցին է Խոս-
րովիկ անուան տակ Յուլիանիտների դէմ գրո-
վը,* ոճի, մնաքերի, բացատրութրան եղանակի,

* Այս նմանութիւնն է երեկի պատճառ, որ
Հ. Սարգսեան իւր յօդուածի մէջ (Բազմավեպ 1892:

ԵՐԲԵՑՆ ՄԻՆՉԵ իսկ նախագասութիւնների այնտքան նմանութիւններ ենք դանում երկու հեղինակների գրութեանց մէջ Խոսրովիկ թարգմանչի Բ. և Գ. զլուխները և մասամբ Պ. թղթի որոշ մասերը բռվանդակում են իրենց մէջ Երեւութականաց ճառի զլիսաւոր մաքերը հակառակորդի առարկութիւններով հանդերձ:

Այս իրողութիւնը բացատրելուց առաջ օրինակներով թանձրացնենք մեր դիտողութիւնները: Երեւութականաց ճառը երկու մեծ հատուածի կարելի է բաժանել՝ առաջինը սկըզբից մինչեւ 67 եր. երրորդ պարբերութիւնը՝ «Դարձեալ զի և որ ի մեզ բնաւորականքն» և լուսական երկրորդ՝ մնացածը: Առաջին մասի մէջ Օձնեցին մաքառում է մարմնուց եւ զանի համագյուղութիւն կամ նոյն քնութիւն վարդապետողների դէմի ինչպէս և Խոսրովիկ Բ.

(Պայիս) այս ենթադրութիւնն է անումն թէ Խոսրովիկի ճառերը կարող են Օձնեցունը լինել, որ յետագաները՝ անյայտ պատճառով, Խոսրովիկին են յատկանքը: Այս ենթադրութեան գէմէ այն հանգամանքը, որ հեղինակը իւր անունը յիշում է Պ. և Ե. թղթերի մէջ, բացի գորանից հեղինակը Պ. թղթի վերջում պարզ յայտնում է, որ եկեղեցու գլուխը այլ անձն է և ոչ ինքը: «Գլուխ բոլոր անդամոցս յառողջութեան է քեզ հանդերձ»: Այս գըքի մէջ եր. 16

և մասամբ Ե. գլխումն Հստ Օձնեցու հակառակորդները «զամենայնսն ի Քրիստոս ըստ մարմնոյն՝ ոչ առնուն յանձն ասել ըստ մարմնոյ և կամ մարմնով. զի մի երկուց ասեն, ակնարկութիւն տպայցեմք բնութեանց ի մին Քրիստոս. այլ ինքն իսկ թանն Աստուած էր, որ ընդ երկոսին անցանէր, ընդ մարդկայինսն և ընդ աստուածայինսն» եր. 49.

Նոքա խոսառվանում են «մի բնութիւն մարմնոյն եւ բանին ըստ նոյնութեան բնութեան» եր. 50. այսինքն թէ Փրկչական մարմնը այն բնութիւնն ունէր, ինչ որ աստուածայինը, որի դէմ Օձնեցին պնդում է, թէ «մի բնութիւն և մի դէմ Քրիստոսի ոչէ ըստ նոյնութեան բնութեան» «այլ ըստ անձառ միաւորութեան բանին ընդ իւրում մարմնի» եր. 52.

Հակառակորդն ասում էր «Որ ի Հօրէ գոյացեալ անձն էր, նոյն անձնաւորեալ ի սուրբ կուսէն. և որ ի Հօրէ բնութիւնն էր, նոյն բնաւորեալ եղեւ յարգանողի կուսին «եր. 53. 55. այսինքն Փրկչական մարմներ համագոյ էր բանին ըստ ամենայնի և նոյն բնութիւնն ունէր, ինչ որ թանը»:

Օձնեցին վկայութիւններով հաստատում է, թէ պէտք է «համագոյ և համարուն ասել զտէրունականն մարմինն մարդկային բնու-

թեանո» եր. 57. այն ինչ հակառակորդը
պնդում էր, թէ Փրկչական մարմինը հա-
մագոյ և համարուն է «զ մարդկային մար-
մայն», այլ Բանին Աստուծոյ:

Իսկ երկրորդ մասի մէջ Օձնեցին նախ
հաստատում է, «որ ի մեզ բնաւորականքն են
(այսինքն քաղցը, ծարաւը, աշխատութիւնը,
արտմութիւնը, հոգ, երկիւզ, ցասումն) հո-
գեկանք և մարմնականք, ոչ են ապականիչք և
կամ ապականութիւն բնութեանս մերսւմ եր.
67. Նախահայրն ունէր մարդկային այդ յատ-
կութիւնները.... ի վերջոյ եզրակացնում է,
«Արդ յայտ է, եթէ ըստ բնութեան և նախ
քան զյանցանելն այսոքիկ, և ոչ յետամտա-
կանաբար ի մեղացն ի ներքս անկեալ ի բնու-
թիւնս. որպէս և քեզ (հակառակորդին) թուե-
ցաւ ասել» եր. 68. (Օձ. ուզում է ասել,
թէ նախաստեղծը մեղանչականութիւնից ա-
ռաջ և յետոյ տարբեր յատկութիւններ չու-
նէր): Մարդն անձնիշխան է բարի կամ չար
գործելու. այդպէս էր և նախահօր մեղանչա-
կանութիւնը: Հեղինակը այս ամենը գրում է
«որպէս յընթացման ըմբռնեալ բանիս՝ քոյինն
սակս բանի» * եր. 70,

* Թէ հակառակորդը զրի է առել իւր վար-
դապետութիւնը, երևում է ճառի մէջ շատ աե-

Ապա այս բացատրութեան կցում է Փրկչի մարդկային անօքէնութիւնները՝ եզրակացնելով՝ «ուրեմն ըստ օրինի մարմնոյն իւրոյ զոր ի մէնջն ընկալաւ, զմերն կրէր կիրս, եւ ոչ ըստ աստուածութեանն»: որպէս քեզ թուի ասել եր. 70. Այսպիսով հեղինակը երկրորդ մասն էլ կապում է առաջնի հետ հաստատելով, թէ Քրիստոսի մարմինը մարդկային էր ըստ ամենայնի (բաց ի մեղաց), ուրեմն և ծըշմարիտ և իրական էին նորա բոլոր մարդկային տնօրէնութիւնները և ոչ «երեւութական տեսութիւն», որպէս առ Արրահամաւն եկեր և ընդ Յափորայ եղեւ կռուակից» եր. 71, ինչպէս օրինակ էին բերել հակառակորդները եր. 60.

Այժմ Երեւութականաց ճառի առաջին մասի հետ խնդրում ենք նախ համեմատել Դո պրակի Դ.») հատուածի մէջ լսուրովկից հանած մեր քաղուածքները, * ապա Դո նզովքի հետ համեմատած հատուածը: ** Մէջ բերուած վկայութիւններից պարզ է, որ հակառակորդները դաւանում են մի ընութիւն ըստ համագոյութեան բանի եւ մարմնոյ, այս-

զերից, բայց յառապէս եր. 55 «գրեցեր ի քույշարագրածութիւնս անդ» խօսքերից:

* Այս գլուխ մէջ եր. 49—51: ** Անդ եր. 81.

թնքն Քրիստոսի անօրէնութիւնները մարդկացին յառկութիւններ չունին, այլ միայն ասառածայիբն: Բ. գլխի վերնազրից իսկ երեսում է, որ հեղինակը տէրունական մարմնի եւ բանի համագոյութեան կամ մարմնոյ եւ բանի նոյն բնութիւն վարդապետողների դէմ է զրում: Երկրորդ գլուխն սկսում է այս բառերով: «Եթէ բանին Աստուծոյ համազոյ ասի Փրկչականն, ապա զանի եղիալ Հօր եւ Հոգոյն համագոյ, այլ եւ նորին բնութեամբ» եր.

268. Համ: Օձն. 53. 55. 57 երեսներից բերած վկայութեան հետ: Խոսրովիկ ևս, ինչպէս Օձնեցին, հաստատում է մի բնութիւն ըստ միաւորովթեան կամ մի բնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ վարդապետութիւնը:

Նմանութիւնը շատ աւելի ակներև է Երեսութականաց ճառի երկրորդ մասի և Խոսրովիկի Գ. Թղթի և Եւսի որոշ մասերի հետ: Երբորդ թղթի առաջին տողերից երեսում է, որ հակառակորդները վարդապետում են «Թէ մի եւ նոյն բնութիւն նախաստեղծին յերկուս բնութիւնս զանազանեալ գտաւ, այլ բնութիւն ունել նմա յառաջ քան զյանցանսն, եւ յայլ փոխել յետ յանցանացն», ասելով յառաջ քան զյանցանսն անմահ էր եւ անապական եւ ամենայն կրից եւ կարեաց մարդկայնոց անընդունակ, զի այնք յետ մեղացն ի նա չաք:

յաւելեալ եղեւ»։ Բայց Խոսրովիկ, ինչպէս և Օձնեցին, պնդումէ, որ նախաստեղծն ունէր հոգեկոն և մարմնական յատկութիւնները, որոնց Խոսրովիկ եւս զնաւորականք է անուանում։ Նախաստեղծի բանական և զգայական լինելը հաստատում է գրախտի պատմութեամբ ինչպէս Օձնեցին եր. 67—68։ Մեղքը մարդու անձնիշխանութեան հետևանքն էր։ Քրիստոս և «Համօրէն կիրս մարդկայինս՝ զհոգեկանս և զմարմնականս՝ յիւրում բացերեւեցոյց մարմնում, որքան կամեցաւ և երբ և ուր» եր. 281։

Ինչպէս Օձնեցու հակառակորդը Քրիստոսի տնօրէնութիւնների համար որպէս օրինակ Արրահամի մօտ կերած ճաշն էր բերում եր. 60. 71. նոյնը և Խոսրովիկի հակառակորդը։ «Եւ որք հաւասարէն՝ զկերակուրս ճաշակելոյն ընդ այնմիկ, որ առ Արրահամաւն յանմարմնութեանն», եր. 329։ Երկու հեղինակների համար ևս մէկը երեսութական (Արրահամի ժամանակինը) է, միւսը իրական։ «Այլ այնոքիկ նմանութեան և եթ առ երեսոյթս ձեւացութիւնք, իսկ սոքա բնաւորական իրողութեանց գործառնութիւնք» Խոս. եր. 330։

* Օձնեցին ևս երբեմն եզակի է խօսում հակառակորդի դէմ երբեմն յոգնակի. որից պէտք է եզրակացնել, թէ ամբողջ կուսակցութեան դէմ է գրում։

Երկու հեղինակների հակառակորդներն-էլ եղծում են ս. հարց գլքերը, ուր «մարդ-կային ինչ ուրուք ճառեալ զօրիստոսի կրիցն» Օձնեցի եր. 66 և կամ «որ յաղագս Փրկչական տնօրէնութեանն բանք» Խոս. եր. 279։ Երկու հեղինակների մոքերի մէջ տեղ տեղ ոչ միայն հնտեռդականութիւն է երեւում, այլ եւ բա-ռերի եւ պատկերների նմանութիւններ։

Օճ. 70. եր.

Խոս. № 518 եր. 276.

Եւ զայս այսպէս որ-
պէս յընթացման ըմբռ-
նեալ բանիս՝ յոյին սակա-
րանի. զի զնոցն ինքն բնա-
ւորականս՝ ապականու-
թիւն թարգմանեցեր. ոչ
միայն որ ընդ մարմնուն
յարակիւսեալ* աշխա-
տութիւնն և քաղցն և
քունն, այլ եւ որ յոգ-
որն այսորիկ (այսինքն այն,
ոչնին եռատեսակ մասունի),
ինչ որ Օձնեցին «որբընդ

Ապա ուրեմն որպէս
դուի ասից, գտանի նաև
յերիցն անրած եղեալ հո-
գեկանց մասանցն, զցան-
կականն ասեմ եւ զցանկա-
կանն եւ զնոհականն. եւ ոչ
միայն այս, այլ եւ զգայա-
կանի զօրութեանն արօադոյ-
եղեալ եւ բանականն ի մե-
ռը որն այսորիկ (այսինքն այն,
ոչնին եռատեսակ մասունի),

* Այսինքն այն ամենը, ինչ որ դիմացի հա-
տուածի մէջ Խոսրովիկ զգայական և խոհական ե-
անուանումն. Մրգէս զի աւելի պարզ երկի, թէ եր-
կու հեղինակները նոյն հակառակորդի վարդապե-
տութիւնն են ջրում, խնդրում ենք կարդալ Երկու-
թականաց ճառի 67 եր. երրորդ՝ և 68 եր. առաջին
պարբերութիւնները։

յանականն էւ ցանկականն
էւ ցանկանն . . .

մարմնումն են յարահիւ-
սեալը խօսքերով [բնաւո-
րականը] է արայայտում՝
զի ցանկական և ցանմական
զգայականին յարեանայ.
զոր օրինակ խոհականն բա-
նականին, ընդ ձեզ որոց
ոչ ելո բնաւորականացս այ-
սոցիկ. այս է ցանմական և
ցանկութեան և խոհակա-
նութեան ոչ կարեն գոլ և
այնոքիկ յորս սոքայն իցեն
բնաւորեալը զսդայականն
ասեմ և զբանականն:

Խոսրովիկ այս հասուածից յետոյ գրախո-
տի պատմութեամբ հաստատում է, որ նա-
խաստեղծը բանական էր և զգայական, այս-
ինքն նա կիրք և կրական մարմին ունէր և ոչ
«անապական և ամենայն կրից և կարեաց մարդ-
կայնոց անընդունակ», իսկ Օձնեցին նոյնը
հաստատել էր դրախտի պատմութեամբ՝ մեջ
բերուած վկայութիւնից քիչ առաջ:

Մեղքը երկուսն էլ անձնիշխանութեամբ
են բացատրում. իսկ մեղքի հետեանքը մահու-
ու ապականութիւնն է:

**Քիւները ռմանք բնական իշխանութեան Թողեալ
Են քսէ ռմանք, յետամատա- էր նմա զմեղսն, կամ հա-
կանք, յորոց մին ի նոցա- լածել, վկոյէ պատուի-
նե՛ ի մենքը նկալաւ զսկզ- րանն, «Յորումաւուր ու-
քնաւորութիւնն, այսինքն տիցն, որ զպառուիրանն ու-
սոյց արհամարնեւ, իսկ ուն յարայեն պատուիս ընդ յանցանցն ի վերայ եղաւ՝
մահն, իսկ պականու- մահն, ի մահ և
թիւն հետևանք ասեն
մահուն.**

**Օձ. 70. Մարգու հո- օրինակ զօրականն որ զիան-
գեկան և մարմնական յատկութիւնները (բնա- դիսին, ունդոն, որ զատուի-
ւորականք) «հակոռակա- րնակց լինենց յամահնեւ, քար-
շեցաւ մարդն ի մահ և
յապականութիւն. զոր
օրինակ զօրականն որ զիան-
գիսին ուներ զետի, վահան-
դնակց լինենց յամահնեւ, ի մեռն ախոյեան բջնամոյն»**

**Երկու հեղինակն էլ Քրիստոսի փրկագոր-
ծական տնօրինութիւնները նման կերպով
պարզելուց յետոյ նոյն օրինակն են բերում: Այս
նմանութիւնը մեզ համար առանձին նշանա-
կութիւն ունի. որովհետեւ Դ. թղթից է առ-
նուած:**

Օձ. 77—78 եր.

Քանզի աւելորդ եւ վայրա-

Խոս. եր. 304.

նոյնպէս զի որպէս նոցա ի

պար վարկաներ, յուրց ազա-
տելի գմեղ խորհեցեալ՝ զնոցնս
իհեան մատուցանեց, իսկ ի
պատուհասէ անտի ոչ հը-
րաժարեր. Զոր օրինակ քր-
ժիշկն արքուցանեց զդեղն
ճիւանդին հանդերձեալ՝ ա-
րացե իւրով ճաշակմամբն
հաւատալի.

Ենիսէ իշանելով հրաշագոր-
ծեաց ի մեզ զիրկուրիննե-
իննն ազա մնացեալ, ըստ
նմին օրինակի զայլ օրի-
նականսն յանձն առնելով,
և անարտ ի նոսա մնացով,
զնուա ի մեջ վկրացոյց. Օ-
րինակ իմն՝ որպէս ճարտա-
րժիշկ մտեալ առ վանգեալ-
սրեմ. ի մահարեր գեղոց-
խառնէ ընդ մահարերա-
կանսն գեզս կենդանա-
ցուցիչս, և բնդ ձնոն իւր
զնա ճաշակելոյն, ամենե-
քին....

Ի՞նչպէս պէտք է բացատրել Երեսութակա-
նաց ճառի և Խոսրովի գրութիւնների այս և
ուրիշ դեռ ևս չյիշուած բազմաթիւ նմանու-
թիւնները. Կարծում ենք ձիշդ այնպէս, ինչ-
պէս բացատրեցինք Խոսրովի գրութեանց և
Մանազկերտի նզովքների նմանութիւնները:
Խոսրովիկ որպէս Օծնեցու ժամանակակից եւ
նորա ծեռքի տակ գործող անձն, մնական էր,
որ հակառակորդին նման արտայայտութիւն-
ներով եւ պատճառաբանութիւններով ջրէր:
Նմանութիւնների մի մասն էլ, մանաւանդ
մնոքերի հնտեւողականութիւնը պէտք է բացա-
տրել նորանով, որ երկուսն էլ նոյն հակառա-
կորդի գրաւոր կամ բերանացի վարդապե-
տութեան դէմ են գրում:

Այս իրողութիւնը աւելի հաստատւում է, եթի ի նկատի ունենանք Խոսրովի յիշած ժողովի և Օձնեցու առենարանութեան մէջ երեան եկած ծիսական խնդիրնելի նոյնութիւնը: Խոսրովի Ա. Թղթի մէջ յիշուած հակառակորդը պահանջում էր՝ հայոց հաւանգ սովորութեան հահառակ՝ ծնունդը գեկտեմբերի 25-ին կատարել, և «Սուրբ Աստուածազը ի դէմս Երրորդութեան նուտել: Նորաձեռութեան հետամուտ այդ անձի պատճառով ժողովը երկպառակուած էր: Նոյն խնդիրները յուզուած են և Օձնեցու այն ժողովի մէջ, ուր ատենաբանութիւնն է արել: * Այսաեղ յիշուած հակառակորդը՝ «խանչարիչն հսրայելի», որ «ազօր և կնատ զօրեղութեամբն նկրտի խափանել՝ (ծննդեան և յայտնութեան տօնի յունուարի 6-ին կատարելը), կարծում ենք ոչ այլ ոք է, քան Խոսրովի Ա. Թղթի մէջ յիշուած քաղկեդոնականութեան և նորաձեռութեանց հակուած բարձրաստիճան տնաձը: Անապական բաժակի և անխմոր հացի խընդիրը, որ մենք տեսանք Խոսրովի և Աթա-

* Եր. 4—5. 12. «Սուրբ Աստուած»ի վերաբերեալ մասը ձեռագրի թերութեան պատճառով ատենաբանութեան մէջ պակաս է. բայց տես եր. 18 ծանօթութիւնը և նորան համապատասխան ԺԹ. Ի. կանոնները և ապա եր. 89.

նասի մէջ եղած վիճաբանութիւնից, յիշում
է Օձնեցու Ը. կանոնի մէջ:

Օձնեցու այն ժողովը, ուր ատենաբանու-
թիւնն է արել, նոյն է 726 թ. ժողովի հետ,
թէ ապրեր, ինչպէս Զամիկանն է ընդու-
նում, ներկայ խնդրի համար երկրորդական
նշանակութիւն ունի: Այս մասին կիսունք
մի այլ պրակում:

Փ.

Այժմ, երբ Խոսրովիկի և Օձնեցու ժա-
մանակակցութիւնը կամ Խոսրովիկի յիշած և
Օձնեցու ժողովների նոյնութիւնը ապացու-
ցուած ենք համարում կարող ենք մէջ բերել
մի վերջին փաստ եւս նոյն իսկ Խոսրովիկի գրու-
թիւնից, որ իսկապէս ամենից առաջ պէտք է
յիշէինք, եթէ խնդիրը պարզ լիներ և ազատ
կասկածանքի ենթարկուելուց: Խոսրովիկ Ե.
թղթի մէջ մի թիւ է յիշում: որ կարող էր հիմք
լինել գրութեան ժամանակը որոշելու համար:
Մենք այդ հատուածը միանգամ մէջ ենք բե-
րել, թէև բոլորովին այլ նպատակով: Զերկ-
րորդելու համար խնդրում ենք յետ նայել
մեր բերած վկայութիւնը * և նորա հետ կա-
պուած հատուածների բովանդակութիւնը: **

* Ել. 44:

** Ել. 17—20:

Հնթերցողը նկատումէ, որ «Եւ կացին մնացին յայս զրի Մ ամ՝ սակաւ կամ՝ աւելի», ի նմին կործանման եղեալք անբժշկելիք եւ անողջանալիք» խօսքերը կապ չունին ոչ առաջ և ոչ յետոյ եղած հատուածների հետ, եթէ «Ե կացին մնացին» բայերի ենթական Սևերոսի և Յուլիանոսի հետեւողները և «յայս գրի» նոցա վարդապետութիւնը հասկանայինք: Այդ խօսքերինախընթաց տողերը վերաբերում են Սևերոսի և Յուլիանոսի վարդապետութեան և անձին, անմիջական շարունակութիւնը դարձեալ նոյն անձնաւորութեանց և ապա Յակոբ ծանծաղոսի գործունէութեան: Մեր ներկայ բնագրի իմաստի համեմատակացին մնացին» բայերը պէտք է վերաբերէին իսկապէս Սևերոսին և Յուլիանոսին: բայց այդ էլ անմտութիւն կլինէր հեղինակի կողմից, եթէ գրէր, թէ Յուլիոս և Սևերոս 200 տարի հաւատարիմ մնացին իրենց վարդապետութեան:

«Եւ կացին մնացին . . . » շատ յարմար էր գնել «Զոր ապա յետ այսորիկ փափագեցին» հատուածից առաջ: Այս խօսքերը մեր ընթերցողներին հասկանալի կը լինին, եթէ եր. 17, «Այս ընդհանուր յառաջաբանից յետոյ» խօսքերով սկսուած պարբերութիւնը կարգալունեղութիւնն յանձըն առնեն: Եւ յիրաւի Յովհաննէս քահա-

նան կամ Սարկաւագ վարդապետը, որ իւր երկի ժամանակ գլխի նիւթը սարկօրէն քաղում է Խոսրովից, նոյն կարգով—Սևերոս Անտիոք քացու և Յուլիանոս Ազիկառնացու հանդէս գալը Յուլիանոսի օրով, Եգիպտոս փախչելը, աղանդապետ Հռչակուելը, Սևերեաների Յակոբիկ կոչուելը ծանծալսաի կործունէութեան շնորհիւ—պատմելուց յետոյ՝ աւելացնում է «Եւ այսու կոչմամբ խաղեալք» (Սևերեանք և Յուլիանիոք) վարեցան մերճ յամն երկերիւ կամ թէ եւս առաւելագոյն»: Սորան անմիջապէս կցում է այս երկու կուսակցութեան ցանկութիւնը միանալու Հայոց եկեղեցու հետ. «Ապա ըստ մեծին Գրիգորի Լուսաւորչին Հայոց նախանձեալք՝ և յօժարեալք, զի կոչեսցին յանուն նորա . . . № 518 եր. 539: Բայց մի հանգամանք դժուարացնում է գործը. նոյն Յովհաննէս քահանան, փոքր ինչ վիլը Յակոբիկ անուան ծագումը բացատրելուց առաջ՝ դարձեալ յիշում է 200 թիւը այսպիսի ձեռով. «Եւ այսու անուանակոչութեամբ» (Սևերիտ և Յուլիանիո) յոլովս անցուցեն ժամանակ զբեթէ սուղ ինչ նուազ քան զերկերիւ ամ!» Յովհաննէս քահանայի և Խոսրովիկի տարբերութիւնն այն է, որ վերջինս նախ թիւն է յիշում և ապա Սևերեանց և Յուլիանիուների անուանակոչութիւնը, որ

տրամաբանական չէ, իսկ Յովհաննես քահանան
ընդհակառակը Երկուսի խօսքերը դիմացէ դի-
մաց դլել ենք Դո. պրակի մէջ: * Այս իրողու-
թիւնն ես հաստատում է, թէ Յովհաննես
քահանան Խոսրովից օգտուելիս նկատել է
աղբիւրի մթութիւնը, ուստի և պարզել է, թէ
200 տարի է անցել Սևերեանց և Յուլիանիտ-
ների անուանակոչութիւնից, առանց ի նկա-
տի ունենալու, որ ինքը մօտ 400 տարի աղ-
բիւրի հեղինակից յետոյ է ապրում: Ահա մի
նմուշ ես, թէ ինչպէս է օգտուել Յովհան-
նես քահանան Խոսրովից:

Այս դիտողութիւնները բաւական են ցոյց
տալու, թէ քննադատը ամենայն զգուշու-
թեամբ պէտք է օգտուի յիշեալ վկայութիւ-
նից: Խոսրովի այդ խօսքերը խանգարում են
նախինթաց և յետագայ հատուածների տրա-
մաբանական միութիւնը. ընթերցողը այն
տպաւորութիւնն է ստանում: թէ այդ խօս-
քերը ներմուծուած են, որովհետեւ դուրս
հանելուց յետոյ՝ երկու հատուածները մի-
ութիւն և միմեանց հասկանալի շարունակու-
թիւն են կազմում: Սակայն այս դժուարու-
թիւնը ցոյց տալուց յետոյ՝ իրաւունք չենք
համարում պնդել թէ քննութեան առար-

* Եր. 43—44:

կայ դարձած տողերն անպատճառ ներմուծուած են կամ մեր ցոյց տուած տեղն է եղել առաջ: Իսկական փաստ չունինք ձեռքի տակ: Կարող էր հեղինակը անուշադրութեամբ այդպէս գրած լինել: մանաւանդ որ մեր երկու ձեռագիրները, չ. Սարգսեանի ձեռքն եղածը, * ինչպէս և Հ. Աղանեանի ** ձեռագիրը, որ առիթ ենք ունեցել տեսնելու, նման ընթերցուած ունին: Գուցէ Սարկաւագ վարդապետի ձեռքն եղած օրինակն էլ նման է եղել ներկայ բնագրին, ուստի և պէտք է համարել պարզել՝ փոքր ինչ փոփոխութիւններ մոցնելով:

Ահա այս բոլոր հանգամանքներն ի նկա-

* Բազմավեպ 1892 Մայիս եր. 213.

** Դեպքից օգտուելով՝ պարտք ենք համարում ուղղել մեր մի սխալը, որ մասամբ անուշադրութիւնից և մասամբ բոլոր աղքիւրների ձեռքի տակ չունենալուց է ծագել: Եթ. 3—4 այն միտքն ենք արտայայտել, թէ Խոսրովի յայտնութեան առիթը Միաբանի Արտասանութիւն Խոսրովիա թարգմանչի և լն հատուածի հրատարակութիւնն է եղել: Այն ինչ Աղանեանց մեր հեղինակին մասին տեղեկութիւն է տուել 1888 թ. Արձագանքի էջերում: Միաբանի սխալ ենթադրութիւնը, թէ Խոսրովիկ Ե. դարու հեղինակ է, եղաւ պատճառ Հ. Սարգսեանի և ապա Հ. Տաշեանի յօդուածներին:

աի ունենալով, մենք չենք վստահացել Խոս-
րովի վերոյիշեալ վկայութիւնը դրութեան
ժամանակը որոշելու հիմք ընդունել: Բայց
այժմ երբ հաստատուն հող ունինք ոտքի
տակ հեղինակի ժամանակը սահմանելու հա-
մար, մեզ համար հասկանալի են դառնում
այդ խօսքերը: Եւ կացին մնացին յայս զրի
Մ ամ ոսկաւ կամ աւելի, խօսքերը վերա-
բերումն Սեերոսի և Յուլիոսի հետեւոյնե-
րին: Հեղինակը կամենում է ասել, որ նոքա
իրենց առաջնորդների վարդապետութեան հե-
տեւեցին — մնացին յայս զրի — 200 տարի: Եւ
ապա ցանկութիւն յայտնեցին Հուստորչի
փարախը մտնելու, սակայն առանց բոլորովին
Հրաժարուելու իրենց առաջնորդների, Սեե-
րոսի և Աղիկառնացու, վարդապետութիւնից:
Այս լուսաբանութիւնից յետոյ միայն մեզ
համար հասկանալի են դառնում, թէ քննու-
թեան առարկայ գտրած խօսքերը և թէ
մանաւանդ հեղինակի խիստ յանդիմանու-
թիւնը:

Սակայն, վստահանում ենք նկատել,
թէ չ. Սարգսեանը մխալ է հասկացել Խոս-
րովի խօսքերը, յայս զրի բառերը ընդու-
նելով Յուստիանոսի հրովարտակի աեզ, «զոր
հանեց յառաջին ամի գահակալութեան իւ-
րոյ»: Հ. Սարգսեանի բացատրութեան հա-

մեմատ՝ մեր նախադասութիւնը անմիտ բան
կդառնար: Այս խօսքերը չ. Սարգսեանի
լուսաբանութեամբ կարելի է երկու կերպ
հասկանալ.

ա) Եւ կացին մնացին (Սևերոս և Յու-
լիանոս Աղիկառնացի) յայս զրի (Հրովարտա-
կի, Հրամանի) Մ ամ՝ սակաւ կամ տւելի:

բ) Եւ կացին մնացին (Սևերեանք և Յու-
լիանիաք) յայս զրի (Հրովարտակի, Հրամանի) Մ ամ՝ սակաւ կամ տւելի:

Երկուսն էլ անիմաստ նախադասութիւն-
ներ են, ինչպէս ընթերցողը նկատել կարող
է: Այն ինչ մեր բացատրութեամբ զժուա-
րութիւնը ինքնին լուծւում է. երկու հա-
րիւր տարի պէտք է հաշուել յիշեալ անձանց
անունով ծագած կուսակցութիւնների հանդէս
գալուց յետոյ՝ հեղինակի ժամանակը գտնելու
համար:

Երկու աղանդապեաններից Սևերոս ար-
դէն գործում էր Անաստաս կայսեր ժամանա-
կից և բարձրացել եր Անտիոքի Հայրապետա-
կան աթոռի վերայ 513/4թ: Բայց նորա գոր-
ծունեութեան եռանդուն շրջանն սկսւում է
այն ժամանակ, երբ Անաստասից յետոյ 518թ.
կայսերական գահը Յու ամսոս Ա-ի ձեռքն է
անցնում: Նոր կայսրը Ակիտաղիան զօրապե-
տի աղբեցութեան տակ, որ արդին Անաստա-

սի վերջին ապրիներից Քաղկեդոնականների
կողմն էր անցել, հաշտուում է Հռովմի հետ
և հալածանք սկսում միարնակների գէմ։
Սևերոս, իւր գիտութեամբ ու հեղինակու-
թեամբ միարնակների առաջին ներկայացու-
ցիչը, ստիպուած էր Եզիպտոս փախչել 519թ.
վախենալով մանաւանդ Ախաղիանից։ Նո-
րա օրինակին հետեւց Աղիկարնաս քաղաքի
Յուլիանոս Եպիսկոպոսը Կայսրը Անտիոքի
աթոռի վերայ բարձրացրեց Պօղոս անունով մէ-
կին, բայց Սևերոսի կողմնակիցներին ստիպեցին
նորան արդէն 521թ. հրաժարուելի Սևերեան
անունով նոքա սկսում են կոչուել յետոյ, երբ
արդէն նոյն իսկ միարնակների մէջ վարդապե-
տութեան տարրերութիւններ են յառաջ գտ-
լիս Եգիպտասում։ Ականքի ծագման պատճառը
Աղիկառնացու այն վարդապետութիւն էր,
որով նա Քրիստոսի մարմինը անապական
էր քարոզում՝ մարդեղութեան բոպէից։ Այս
վարդապետութեան դէմէ դուրս գալիս Սեւե-
րոս, որ Քրիստոսի մարմնի անապականու-
թիւնը ընդունում էր միայն յարութիւնից
յետոյ, իսկ ձննդից մինչեւ յարութիւն ապա-
կանացու։ Յուլիանիաները առարկում էին,
թէ Քրիստոսի մարմինը ապականացու դաւա-
նելով ստիպուած կլինինք երկու մարմին
ընդունել, մէկը ապականացու և միւսը անա-

պականն ուստի և Քրիստոսի և Հասարակ մարդու մարմնոյ համագոյութիւն ընդունում էին միայն մարդկեցութեան վայրկեանին, իսկ այնու հետեւ միաւորութիւնից յետոյ՝ անապական և աստուածային մարմին։ Նոցա մի մասը հետզհետք աւելի ծալրահեղութեան համելով այն վարդապետութիւնն ստեղծեց, թէ, Քրիստոսի մարմինը մարդկեցութեան վայրկեանից ոչ միայն անապական է, այլ և անեղ կամ անստեղծ։ Այս վերջին տեսակին են պատկանում և մեր հեղինակի հակառակորդները։ Բայց ինչպէս յիշեցինք միաբնտկների տարրեր կուսակցութիւններլթու աւտինիանս մեծի ժամանակին (527—565) են վերաբերում։ Յակոբ Ժանձալոսի կամ Բարագայի գործունեւթիւնն սկսում է 540թուից։

Այսպէս զժու ար է Ճիշտ որոշել թէ Երբ են ծագել այս կուսակցութիւնները և ո՞ր թուից մի մասը Սեւերնան, մի սր Յուլիանից կոչուել։ Բայց Հասարատութեամբ կարող ենք ասել, որ սկզբնաւորութիւննընկնում է 519—540թուերին։ Արդ [519—540]+[200]=[719—740] ուրեմն Խոսրովի գրութեան ժամանակը 719—740 թուերի մէջ պէտք որոնել։ Բայց որովհետեւ նորա երկը զրուած է ժողովից քիչ յետոյ՝ որ 726 թ. է գումարուել ուրեմն զրութեան ժամանակը կինի 726 ։ 7 թուին։

Ա Զ Գ

Խոսրովիկ Թարդմանցի ուսումնասիրութիւնը, որ իբրև յառաջաբան կցում ենք նորա երկերի հրատարակութեան, խոկապէս թերի է. մատենագրական և պատմական մի երկու խնդիր ևս ունեինք պարզելու, մեր ասելիքը նորա մասին ամբողջացնելու համար։ Սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, ոչ տարիներից ի վեր տպագոււած հրատարակութեան էր սպասում ընագիրը, իսկ մենք գուշոք պաշտօն վարելով՝ չգիտենք, թէ երբ հնարաւորութիւն կունենանք նորից մեր սիրած մատենագրութեամբ զբաղուել, աւելի օգտակար համարեցինք պատրաստը հրատարակել, քան դարձեալ անորոշ, դուցէ և երկար ժամանակով փոշիների մէջ ձգուած թողնել և կորցուի մատնել, մանաւանդ կարեւորն արդէն ասուած էր։ Թերի մնացած խնդիրները կարելի է առանձին յօդուածներով ևս պարզել Բնագրի հրատարակութիւնը կատարել ենք Կալինեանի յուցակի Ն^o 518 (531) և Գէորգեանի Ն^o 56 ձեռագիրներից.* առաջին մի քանի թերթերի համար օգտուել ենք նաև

* Այս ձիռագիրների մասին աես Յառաջաբան եր., 5:

№ 655 (669) թերի ձեռագրից *, (767^ա—776^բ) որի մի մասը հրատարակել է Միաբանը «Արտարաժ»-ի ** մէջ «Արտասանութիւն Խոսրովկայ» վերնագրով, և Հ. Տաշեանի *** հրատարակած հատուածից. № 518 մեր բնագրում նշանակել ենք Ա. տառով, № 56 Բ, № 655 Գ, Հ. Տաշեանի հատուածը Դ. Մեր ձեռքի տակ եղած վերոյիշեալ ձեռագրիներից և հատուածներից զատ, մի օրինակ գտնւում է Արմաշի վանքում, մի օրինակ Հ. Գիւտ աւագքահանոյ Աղանեանցի մօտ, երկու օրինակ Վենետիկի Միիմարեանց մատենագրաբանում։ Սակայն այս ձեռագիրները անկախ չեն միմեանցից, ինչպէս պարզել է արդէն Հ. Տաշեան. Վենետիկի թ. 504 է, զ. ձեռագրից է արտագրուած Աղանեանցինը, սորանից Արմաշինը, իսկ այս վերջինից Վենետիկի թ. 319 ձեռագիրը Մեր մատենագրաբանի № 56 (Բ) ունյայտնի

* Խոտրագիր, գրուած Դէորդ անունով մէկի ձեռքով, թիւն անյայտ 1675 թիւը, որ Միաբանը նշանակում է այս ձեռագրի համար, մեր հատուածին չէ վերաբերում, այլ նախընթաց գրութիւններին, որ բոլորովին տարբեր ձեռքով են գրուած։

** № Գ, 1892.

*** Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք—Աղդային մատենագրան Փ. 1: 95.

ցեղակցութիւն է ցոյց տալիս Հ. Տաշեանի
հրատարակած պատառիկի՝ Դ-ի հետ, որ
արտադրուած է հաւանօրէն Վենետիկի թ.
319 ձեռագություն Նը 655 (Դ) միայն հեռա-
որ ցեղակցութիւն է տալիս այս խմբի,
բայց ոչ մէկից արտագրուած չէ. իսկ Նը 518
(Ա) տարբերումէ սոյանից և արտագրուած
է մի հին ձեռագրից, ինչպէս երևում է հը-
նութեան հետքեր կրող ու զզագրութիւնից:
Բնագիրը կաղմելիս հետեւ ել ենք գլխաւորա-
պէս առաջին ձեռագրին՝ ուղղելու գէպքում
միշտ նշանակելով ընթերցուածները: Համե-
մատութեան ժամանակ նշանակել ենք նոյն
իսկ նշին տարբերութիւնները, նպատակ ու-
նենալով ձեռագիրներն իսկութեամբ գնել
բանասէրների առաջ, թէև շատերի համար
գուցէ աւելորդ ծանրութիւնները համարուի
այդ: Կէտագրութիւնը, պարբերութիւնների
բաժանումը մերն է, հետեւ լով երբեմն ձե-
ռագիրներին: Դլասակարգութիւնն առնուած
է Նը 56 ձեռագրից, թէև Նը 518 ևս ու-
նէր այս բաժանումներն ու վերնագիրները
առանց գլխակարգութեան: Նը 56-ի գլուխ-
ները բաժանուած էին պարբերութիւնների,
որոնք որոշուած էին միմեանցից թուահա-
մարներով. մենք աւելորդ համարեցինք պա-
հել այդ թուահամարները: Պահպանել ենք

ընդհանրացած ուղղագրութիւնը առնելով
երբեմն այս, երբեմն միւս ձեռագրից, սա-
կայն միշտ նշանակելով տարբերութիւնները.

«Հարցմունք Հայրապետին Անտիօքայ»
վերջին հատուածը առել ենք Պ. ց-ի №
102 ձեռագրից եր. 76^ա-79^թ. Այդ ձեռա-
գրիը նշանաւոր է ոչ միայն իւր հնաւ-
թեամբ, այլ և նիւթով. Հայոց ամենա-
հին թղթեայ ձեռագիրն է. Գուուած է 971
թ., առաջին անգամ նորոգուած ՆԼ=981
թ., իսկ երկրորդ անգամ ԲՀ=1225 թ.
Դրիչն է «Դուկաս որդի Դաւիթ քահանայի».
վերջինս ստացողն է. Դիրը հնագոյն բոլոր-
գիր է, որ գործածուած ենք տեսնում եր-
կաթագիր հին աւետարանների լուսանցք-
ներում նշանակուած ծանօթութիւնների մէջ։
Ձեռագիրը հետաքրքրական է նաև իւր
բազմազան բովանդակութեամբ։ Ի նկատի
ունենալով ձեռագրի հնութիւնը, տպագրել
ենք նոյնութեամբ, բանալով միայն սղա-
գրութիւնները. վոխել ենք նաև կէտագրու-
թիւնը, որ թէև հետաքրքրական էր հնագրա-
կան տեսակէտով, բայց անկարելի էր նոյ-
նութեամբ պահել տպագրութեան մէջ։

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ԽՈՍՔԱՎԿԱՅ ՔԱՐԴՄԱՆՁԻ



ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԴՐՈՑՍ

“Յախ քան զմտանել քո ի զլունս² ընթերց-
ման զրոցս. պարտ է մեզ յուցանել զգիւտ այս
պատուական և բարեկի դանձուց: Նշաստ և տր-
կարոգի Յոհաննէս³ Եղնկայեցի սպասաւոր բանի և
իմաստից գլոց սրբոց ծարաւի, յոլով ժամանակօք
և աշխատութեամբ բազմաւ ստացայ՝ զստ՝ զերեք
գիրքս. որ են հիմունք հաւատոյ ուղղափառու-
թեանն, և թէ զմին մի ի սոցանէ գտանէ ոք, բա-
րեբախտութիւն մեծ և փարթամութիւն անկշիռ
համարիմ նմա, մանաւանդ զաշակ քաղցրութեանն
գիտողի⁶, զոր և գտի ևս յոյլ և յայլ տեղի և ժա-
մանակի, և ստացայ⁷ զերիս զիրսն և ի նոցունց
գարձեալ եառւ զրել և առ միմեանս եղի և արարի
մի գիրք. Առաջին զԱնանիոյին զՀայոց վարդա-
պետի, երկրորդ սԽոսրովկայ Թարզմանչի և զհօր
գիտնականի, երրորդ զսարկաւադ վարդապետին
և զմեծ իմաստասիրի զՀաղբատեցոյ: Եւ թողում
զսոսա⁸ յետ իմ ժառանդէք, յոգնազան բարեաց
ճոխութիւն, յամենաւատա դանձուց փարթամութիւն.
աստուածաբանական հանճարով յերկինս թռուցե-
լոց սա թեք զօրաւոր և վերացուցիչ⁹. յաշխարհիս
ծովիս նաւելոց՝ զեկավարիչք և ուղղիչք, ի մարտս


1. Ա. գրօյս 2 Ա ի դրանս լնրեցման գրօյս. ԲԳ.
ի դրանս լնրացման գրոցս 3 Ա Յոհաննէս . . . Բ Յօհաննէս
Եղնկայ Եպիսկոպոս Գ Յօհ. Եղնկոյ Եպ. 4 Ա ստացա՛ վերեզ
ԲԳ ստացայ զսա Երեմ. 5 ԲԳ ուղղափառութեանն 6 Ա զի-
տողի 7 Ա ստացա՛ 8 Ա զսորում 9 Ա վերայցուցիչ

իսմբից հերձուածողականաց՝¹⁰ զէնք որեալք յա-
ջողակ ձեռաց քաջամարտից, ի խաղաղական ժա-
մու ժողովոց՝ սեղանք երկնաւորք և քաղցրաճաշակ
լցեալ կերակրովք¹¹. վաճառականաց հանգոյն բար-
ւոյ¹² հմտագունից մարդարիտ անդիւտ և աշխար-
հաւ ամենայնիւ գնեալ, աղքատաց անձանց և նիւ-
թականաց անձեռնհասից՝ սա ճոխութիւն երկնա-
ւոր և անհամեմատելի, իմաստութեամբ լուսաւոր
անձանց՝ արփի լուսաբուխ և բազմանշոյլ, անդի-
տութեան մթօվ պատելոց՝ ճրագ լուսատու և խա-
ւարափարատու Սա ձեզ յոլով բարեաց բղխմունո
աղբերաց և մեզ նիւթ յիշատակի և բարբառ և ձայն
առ ձեզ¹³ մաղթանաց, զի որք աւգտիք և զուար-
ձանայք, զողորմելի Յոհաննէս¹⁴ յիշեոջիք և մե-
ղուցելոյս անձին և վարդապետին իմոյ և ծնողաց
ողորմութիւն ի Քրիստոսէ հայցեսչիք¹⁵:



10 Ա հերձուածողականացն 11 ԲԳ կերակրով 12 Ա համնարոյ
13 Բ – 14 Ա Յոհաննէս ԲԳ Յօհաննէս:

* Ա.ի մէջ՝ ուրիշ բանաբով աւելացրած է. «Եւ ինձ
մեղաւցեալ գրչիս Մավսէս Քահանայի»:



ԽՈՍՔՈՎԿԱՑ¹ ԹԱՐԳՄԱՆՉԻ²

ՀՅԱՅԱ

Առ այնոսիկ որ ասեն բնութեամբ անձև անսկիզբն ընկալեալ զմարդկութիւն Աստուած Բան ի Կուսէն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Ոչ ուրուք երբէք նախ քան զվախճան առնուլ մեղացն տեսանեմք դատել զոք Աստուած³, և վկայ աստուածայինն առ ի մէնջ ասիցս գիր. չէն են, ասէ,

1 Բ Խօսքովկայ. 2 Ա Թարգմանչի.

3 Ե Կ ՊԱՍՏՈՒԱԾ.

լցեալ Ամուրհացոցն ¹ մեղք» †։ Զնոյն տեսանեմք և ի վերայ Յուգայի եղեալ ի Քրիստոսէ. զի այն որ իբրև զմերձակայ ² զհանդերձեալսն տեսանէր և զիւրագանչիւր ոք ճանաշէր նախ քան զայխարհս հիմնացուցանել, չարութեամբ ախտացելոյն ³ թոյլ տայ ընտրելոցն ⁴ հաղորդակցիլ ⁵ բարութեանցն, այլ և գտնտեսութեանն հաւատայ ⁶ նմա ⁷ զգործ, որ անհաւատ պարդեացն գտանէր պտուղ։ Նախ և այժմ աւասիկ առ մեղ այնպիսի իմն ժամանեաց փորձութիւն, ⁸ քանզի որ ⁹ յառաջ դոյզն ինչ ժամանակաւ ծածկել ¹⁰ ջանայաք ¹¹ ընդքաղցրութեամբն Աստուծոյ և մարդասիրութեամբ ոչ հրապարակելով զստահակութեանն նորա զանմարդութիւն, և ոչ միայն զխոստացեալսն ի վերայ ոչ ածելով նմա՝ իրաւասիւնչս ինչ արարաք առ անզուգաչառափառագունի միւսոյ մասին, այլ և յոլովագոյնս զսիրոյն

² Ա Ամուրհացիոց.

¹ Կ մերձեկայ.

⁵ Ա Բ Գ ախտացելոցն.

⁴ Ա ընդքելոցն.

³ Բ Դ Հ աղորդակցեալ,

⁶ Բ Դ Հ աւատալ, Ա հաւատաց.

⁷ Ա նմայ.

⁸ Կ փորցութիւն.

⁹ Բ քան զոր յաւաշ.

¹⁰ Բ և Դ ծածկեալ.

¹¹ Դ ջանացաք.

† ՄԱՆԳ. ԺԵ. 16.

մատուցանելով եղանակս՝¹, առաւելքան թէ
արժանաւորաց սիրոյն, ոչ առ այլ ինչ, այլ
ասացելոցն ակն ունելով, իբրու թէ Տէր
Աստուած կամի, զի արդարասցի և բար-
ձրացուացէ զօրհնութիւն²: Այլ վախճան
իրացն յոյժ հակառակ մերոցս երևիւր՝³
կարծեաց. զի որ ուտէրն ընդ մեզ, յաճա-
խեաց առնել ընդ մեզ խաբէութիւն⁴: Զի յոր-
դորէր զմեզ [ի] ժողով գումարել.⁴ զժողո-
վոյն պատճառս զաշխարհիս մերոյ մարդիկլ
դնէր⁵ և զմի և զնոյն իր միաբանութեան
և բաժանման կազմէր հնարա. խոստանայր
ցածուցանել ի ժողովոյ անտի զօտարա-
փառութեան իւրոյ ջերմութիւն և զանչա-
փագիւտն ի բաց թողուլ նորաձևութիւն
կարգաց, կրօնից և պաշտամանց⁶, այլ և
որ ծայրագոյն է կրծիմն ընդ մէջ⁴ մեր և
արեւմտականացն, յանձն առնոյր ընդ մեզ
միաձայնել մի բնութիւն ըստ գերահրաշ
միաւորութեանն Աստուածն Բանի մարմ-

1 ԱՐԴ յեղանակս. 2 Բ ԿԴ օրհնութիւն.

3 Ա էրիկը. 4 Պ ժողով գումարել, Ա-ի մէջ «Ի» փակազծի մէջ է առնուած, այսինքն ջնջուած է. 5 Ա «դնէր» յետոյ լուսանցքում ուրիշ գրով աւելացրած, Բ և Դ «դնէր» չունին. 6 Ա և Բ պայտմանդ.

7 Դ «ընդդէմ մեր» և ի լուսանցս «ընդ մէջ».

+ У-рж. №. 10. Генг. дт. 18.

նացելոյ¹ խոստովանել, ասելով. «Ընդէր
ոչ զասացեալմն ի սրբոց հարցն ասաւ
ցից և ես», յիշեցուցանելով յանուանէ
զԱթանաս, զԿիւրեղ, զԵփրեմ, զՅուլիոս
Հոռվմայ² և զայլս. Առ այսօքիւք³ և պայ-
մանս իմն վճռածեապէս⁴ առ միմեանս
հաստատեալ յերիւրէր, ոչ մեզ զժողովն
Քաղկեդոնի և զտոմարն Լեոնի յիշել, և
ոչ իւր, նոյնպէս և զաշխարհիս մերոյ⁵
անտի⁶ և այսր զեկեղեցեացս վերակա-
ցուս⁷. որ թէպէտ և անմարթ էր զա-
ւանդութեան հարանցն փոխել⁸ զկարգ և
ոչ կատարելապէս ատել զատեցողմն⁹ զջէր,
համայն զպատառման նորա ընդ միտ ա-
ծելով, մեծագոյն վարկեալ զմիաւորութիւնն,
զհետ տայաք զմեզ և յայսմիկ առ ի նմանէ
ասացելոցն, այլ և զանուանեալն իւր մեծ՝
և զորս ընդ նովաւ, ընդ մերոյ ի ձեռին
կարգեալ խոստանայր իշխանութեամբւ Առ
այսօքիւք և այսպիսեօքս¹⁰ առանձինն հրա-
պուրէր բանիւք, իսկ առ այլս զյաղթա-
սիրելն պարծանայր¹¹ զիւր, և զմեզ ի պար-

1 Բ և Գ մարմնացեալ. 2 Ա Հոռոմա, Բ Հոռո-
մայ, Գ Հոռոմայ 5 Բ այսօքիւկ. 4 Ա վճռայձեապէս.

5 Ա մերոյ. 6 Ա յանաի. 7 Ա վերայկացուս.

8 Բ փոխիւկ. 9 Բ և Գ զատեցողմն.

10 Բ այսպիսօքս. 11 Դ պարծենայր.

տութիւն արկանել։ Մինչ զի թէ ոչ Տեառն
օգնեալ էր, փոքր միւս ևս, լինէաք ծիծաղեւ-
լիս բազմաց, այլ և դժնդակագոյն ևս քան
զծիծաղելն ասասցէ ոք, զայնքանեաց ժու-
զովրդոց տեսանելով զշփոթութիւն, որք
ոչ նմանապէս իրերաց վախճանի ելիցն ակն
ունելով՝ տարակուտանային¹։ Զի զոմանս
հոմակամութեան կարծիք բարկութեամբ
զինէին, տեսանելով զմեր առ նա² խաղա-
զասիրելն, իսկ այլք զօրանալ հակառակա-
մարտին և իւրեանցն տկարանալ գլխոյ եր-
կուցեալք. և այսոքիկ մերաոցն³։ Իսկ նու-
րառոյքն և որ ի նորուն սուտ ստապանծ⁴
բանիցն քաջալերեալք⁵, զյաղթութիւն նմա
սպասէին բերել⁶ փառս։ Իսկ ապա յոր-
ժամ աստուածային օգնականութեամբն ի
յուսոյն զրկեալ հակառակ այսորիկ եղեն
հանդիպեալ, առ այլ իմն տեսակ խարէու-
թեան փոխեալ անկանէր⁷, իբրու թէ զհա-
կառակութեան իւրոյ բանս դրով⁸ լուծանել

¹ Ա աարակուսաննաին. ² Ա նոյ.

³ Ա և Բ այսպէս, ⁴ մերայոցն, ⁵ մերայնոցն.

⁶ Ա և Բ ստայպանծ. ⁷ Ա քաջալերեալք.

⁸ Բ բեր, Ա-ի լուսանցքում աւելացրած լայի
վերջաւորութիւնը—«ել», ⁹ բերել, ¹⁰ բիւր.

⁷ Ա և Բ անզանէր. ⁸ Ա այսպէս, Ա-ի լուսանցքում
«բանս», որով ընթերցուածը կլինի «իւրոյ բանս»,
Բ և ¹⁰ «բանս» չունին.

միանգամայն՝¹ թէ² դհայցուածոցն մերոց
կատարել փափագումն։ Իսկ յորժամ այսոքիկ
և ստութեան նորա հոլանիւր կեղծիք և պար-
զաբար զառ մեզ թշնամութեանն³ և զժողո-
վոյն Քաղկեդոնի յայտնէր զհամաձայնու-
թիւն, զի և գիրն՝ զոր խոստանայր առնել՝
զնոյն վկայէր։ Մինչ զի ապա⁴ ցասուցեալ
մեր ի վերայ այնպէս բազմաթիւր⁵ և բազ-
մայեղանակ⁶ բարոյիցն, ասացաք առ նա.
«Թէ զայդ զոր գրեցերդ և բերեր առ մեզ
զըստ սահմանին Քաղկեդոնի բանս, կար-
ծեցեր թէ⁷ մինչև ցայժմ ղդոյն ոչ էաք
լուեալ, և ոչ զիտացեալ, այսօր ի քէն
պէտք եղեն ուսանելոյ սկիզբն առնել, կամ
այնքան աւուրս առ միմեանս մեր միառ-
բանելոյն խորհուրդ զայդ երևեցոյց պը-
տուդ»։

Առ որ պատասխանեալ ասաց. «Ճիեղե-
րաց աչք յիս հային, և ինձ ամօթ մեծ է
ի միաբանելոցն քակիլ և ընդ անմիաբանիցն
լինել։ Եւ գարձեալ զի դուք և զմի ոչ ինչ
յիսոց անտի կատարեցէք խնդրոց⁸։ Զի յա-
ռաջ քան զայս ասէր ձեռնադրութիւնս տալ

¹ Բ միանգաման. 2 Կ որպէս թէ.

³ Կ զառ մեզ թշնամութիւնն. 4 Բ ապայ.

⁵ Ա բազմայթիւր. 6 Բ մազմայեղանակ, Կ լագ-
մաեղանակ. 7 Բ «թէ» չկայ. 8 Կ խնդրոցն.

ուխտի մանկանց¹, և ի քսան և հինգ²
դեկտեմբերի ծնունդ առնել, և զերեքսրբ-
թեան օրհնութիւնն ի վերայ Երրորդու-
թեանն՝ և ոչ ի վերայ Որդոյ միայն նուա-
գեալ, ի բաց հանելով անդուստ զխաչեցարն,
և որ ինչ սոյնպիսիք³:

Առ որ ասացաք. «Զանց առնելով զայ-
լովքն ամենեքտ.մք. իբրև⁴ յոյժ նուաստա-
գունիւք, որովք⁵ ոչ այնքան յընդունելն
օգտեսցի⁶ եկեղեցի, և ոչ յոչ ընդունելոյն
վխասեսցի⁷: Բայց յերեքսրբեան⁸ յիրաւի բե-
րեմք ի ներքս զխաչեցարն, զի զհասարակա-
կան անուանն ի վերայ Որդուոյ⁹ ասել, զնա-
և մարդ լեալ գոհաբանեմք մահու խաչի
համբերելով վասն մերոյ փրկութեան: Բայց
դու յառանձնական¹⁰ անուանն մրագէս ար-
դեօք յատկացուցանես զհասարակականն:

1 Ա մանգանց. 2 Ի Դ ի քսան և հինգն.

3 Ի ոչ ինչ սոյնպիսի, Դ-ի մէջ Միաբան սխալ-
մամբ կարգացել է «այնպիսիք. 4 Բ իբրու.

5 Բ և որովզ, Դ և որովք, Ա.ի մէջ «Ի» ջնջուած
6 Ա օկտեսցի, Դ օգտեսցէ.

7 Դ և ոչ յոչ ընդունելն վխասեցի.—Միաբանի
հրատարակած պատառիկը № 655 (մեր Դ ձեռադրից)
վերջանում է այստեղ. մենք շարունակում ենք հա-
մեմատութիւնը մինչև դրչի կիսատ թողած տեղը:

8 Բ յերեքսրբեանն. 9 Ա ի վիրայ յՈրդուոյ.

10 Դ յանձնառականն.

օտարացեղութեան տալով կարծիս՝ ի մի և
ի նոյն բնութիւն»։ Ընդ որ ոչ կարացեալ
ելանել։ Դարձեալ ասացաք առ նա. «Ասկ
զիմրդ գրեցեր դու երկուս բնութիւնս ու-
նել Քրիստոսի ի միում դիմի և առանձնա-
ւորութեան, աղէ, ասասցես մեզ, թէ զմի
դէմն ի Քրիստոս ըստ նոյնութեան ասես,
թէ ըստ միաւորութեան»։ Նորա զառ միա-
ւորութենէն¹ երկուցեալ ասել զմինն, թէ
գուցէ նովիմբ և մի ասել բնութիւն հար-
կաւորեսցի ի Քրիստոս, պատասխանի ետ.
«Ես բնութիւն և ոչ դէմ մարդկային խոս-
տովանիմ ընդունել Բանին ի կուսէն»։

Առ որ ասացաքն². «Զէ հնար բնութեան
առանց դիմի իմանալ կամ ասել ըստ ամե-
նայն հարկաւորութեան, յաղագս որոյ պարտ
է քեզ երկուս դէմո ասել ըստ երկուց բնու-
թեանցն, և կամ ըստ միոյ դիմին մի ա-
սել և բնութիւն, և կամ ապա և թէ ոչ
մի ոք ի դոցանէ, հարկ է զմիջինն խնդրել՝
որ բարեպաշտութեանն է, որով և ճշմար-
տութիւնն պայծառանայ»։ Իսկ նորա զկա-
պումն բանի ստիցն խնդրեալ³ զարձակումն,
և կամ թէ ընդ ձեռն ստիցն խորհեցեալ,

¹ Բ զառ զմիաւորութենէ, Դ զառ ի միաւո-
րութենէն. 2 Գ ասացաքն.

³ Բ և Դ ստիցն խնդրել, Դ սրտիցն խնդրեալ.

հանեալ զբանն ի տանէ կապանաց, ասաց.
«Զոր հարկեցուցանէքդ ղիս ասել վասն
մարդկային դիմին, գրովն զձերն առ իս
առաքեցէք խոստովանութիւն, ի ձեռն դրոյ
և զպատասխանիսն ընկալջիք յինէն զայդու-
րիկ համաձայն։ Եւ զայս ոչ ուղիղ՝ ինչ
մտօք, այլ կարծէր ի գրեցելոցն մերոց առ
նա² ընդ հնոց ուրուք չար ազանդութեամբ
զմեզ արկանել, սակայն մեք գրեցաք առ
նա³, զոր ինդրերն՝ ըստ օրինակի երկիւղա-
ծաց⁴ ծեառն, և որոց⁵ յաղագս սիրոյն զա-
մենայն ինչ վեր ի վայր⁶ մոռանալ զյանցա-
նացն օրինագրեալք, և մանաւանդ զի և
պարզեալ զնա կամեցաք ի պատասխանա-
կանացն անտի նորառյցն՝ առ մեզ դրեցե-
լոց, թէ զի՞նչ խորհիցի և ում ումեք ար-
դեօք ձայնակից դտանիցի, և էր այս †։

1 Ա ուղեղ. 2 Ա նաւայ. 3. Ա նայ.

4 Ա երկեղածաց. 5 Դ որոց. 6 Դ զէր ի վայր.

7 Ա և Բ նորառոցն.

† Հայր Յաշեան (եր. 74. ծանօթ.) էր այս
խոսքերը հարցական չէ համարում։ այլ ցուցական։
Սակայն չորս ձեռագիրներն էլ հարցական ձևն ու-
նին։ թէև Ա. Բ. և Գ. Նախընթաց հարցականները
չունին։ Մենք աւելի նիշտ ենք համարում։ հար-
ցական ձեր։ հեղինակը կամհնումէ հակառակորդի
բանած ուղղութեան պատճառը հասկանալ։

«Ոչ ինչ պէտս ունի առաջնորդի, որոյ աչք
իւր առողջապէս կարիցեն¹ նկատել, և ոչ
վարդապետի ումեք կարօտասցի, որ զանմու-
լարն սիրեսցէ գտանել հաւատոյն² բան։ Բայց
արդ, եթէ տացէ քեղ Աստուած շնորհս բարե-
պաշտութեան, և խնդրես ճշմարտութեանն
լինել³ ընդ մեզ խոստովանակից, ասասցես⁴։
որպէս բնութիւն մարդկային՝ ընդ նմին և
դէմ մարդկային առնուլ Բանին ի կուսէն,
և որպէս զգէմ Բանին և մարմնոյն իւրոյ
ընդ ձեռն միաւորութեանն⁵ մի խոստովա-
նելով դէմ, այսպէս և զբնութիւնսն՝ զաս-
տուածայինսն և զմարդկայինսն՝ մի դաւա-
նել բնութիւն յանձառ միաւորութենէն⁶, և
դկենդանարար մարմինն փրկչական խոստո-
վանել⁷ յարդանդէ կուսին մինչև յաւիսեան
չարչարելի և մահկանացու ըստ բնութեանն,
և անչարչարելի և անմահ ըստ միաւորու-
թեանն Բանի, և միանգամայն պարզաբար⁸
զաստուածայինսն մարդկայինս և զմարդ-
կայինսն⁹ անուանել աստուածայինս ըստ ան-
ձառ միաւորութեանն, որպէս և սրբոյն ու-
սուցանեն հարանցն ճառք»։

¹ Բ կամիցեն. ² Դ հաւատոյն ³ Կ լինիլ.

⁴ Բ ասասցիս. ⁵ Դ միաւորութեան.

⁶ Դ միաւորութեանն. ⁷ Բ խոստովանիլ, Կ խոս-
տովանելով հաստատել յարդանդէ. . .

⁸ Կ «պարզաբար» չունի. ⁹ Դ և զմարդկայինս.

— «Առ ի սրբութենէդ ձերմէ տուաւ ինձ
գիր հարկաւորութենան †, պահանջել ի մէնջ՝
ասել զմարդկային դէմ առնուլ Բանին ի
Կուսէն. և այս ինձ այլ ոչ ինչ երևի, քան
թէ ասել զոմն մարդ առնուլ. զի ամենայն
մարդ յորմէ հետէ ձեանայ յարդանդի,
յայնմ հետէ իմացեալ լինի դէմ; քանդի
այսպէս ոչ այլ ինչ գիտեմ դուշմն, քան թէ
զոմն մարդ։ ԱՌԴ, թէպէտ և ծեաւն մերոյ Յիւ
սուսի Քրիստոսի ոչ ուրանամ մարդկայնովս
երեխլ՝ մարդկան դիմաւ, այլ քանդի փոխա-
նակ սերման զԲանն ասեմ ժամանել յար-

† Կ և Դ Երևել.

† Հայր Յ. Վ. Ց. Ցաշեան (Եր. 74, ծան.) այս-
պէս է բաժանում Խոսրովիկի հակառակորդի Թղթի
սկզբնաւորութիւնը. Առ ի սրբութենէդ ձերմէ.
«Ցուաւ ինձ գիր հարկաւորութեան՝ պահանջեալ
ի մէնջ՝ ասիլ» ելն, բայց այս բաժանումը հակառակ
է ոչ միոյն մեր բոլոր ձեռագիրներին, այլ և այս
թղթի հետ հապակցեալ մասերի իմաստին. Հակա-
ռակորդը Խոսրովիկի թուղթը «գիր հարկաւորու-
թեան» է անուանում: Որովհետև նա պահանջել էր՝
(եթէ տացէ քեզ Աստուած շնորհս բարեպաշտու-
թեան . . աստցես) Խոստովանելու՝ «օրպէս բնու-
թիւն մարդկային» ելն. ուստի և Խոսրովիկ յի-
շում է այն իւր հակաճառութեան մէջ, իսկ
հակառակորդի թղթի միւս մասերը բառացի է մէջ
բերում:

գանգ կուսին, ըստ այնմ մտաց մի ասեմ
զդէմն, իսկ մի բնութիւն յետ շարադրու-
թեանցն՝ ոչ զոք ի հարցն գիտեմք խոստո-
վանել։ Զի թէ ոչ տեսանէի զբոլոր խնդր-
եալսն հակառակ հարցն, ամենայն ուրեք
համբուրէի զառ ձեզն ձայնակցութիւն. այլ
զի ամենայնիւ տեսանեմ զձեղ փութացողս²
առանց հերձուածոյ ատեցման սուրբ ժողո-
վոցն։ Զի՞նչ ևս այլ շատ խօսեցայց. մա-
նաւանդ թէ ի վերն յայս էր՝ երեսական
բաժանմանս, որ քան զնեստորին ևս ահա-
գին թուիր։ † Յոյժ զարմանամ նորայն։ Եւ

1 ԲԿ Գիտեմ խոստովանիլ 2 ԲԿ Գիտացողս.

5 Բ մանաւանդ զի ի վերն այս էր երեսական
բաժանմանս, 7 մանաւանդ թէ ի վերն երեսական
բաժանմանս.

† Հ. Տաշեան (եր. 77, ծան.) խնդրական է
համարում «Զինչ ևս այլ շատ խօսեցայց . . . և
մանաւանդ «յոյժ զարմանամ նորայն» նախագա-
ռութիւնները, թէ արգեօք հակառակորդի թղթի
մասնըն են, թէ ոչ. Առաջին նախադասութիւնը
հակառակորդինն է անշուշտ, թէկ եղծուած, որով-
հետեւ նոյն նախադասութեան մի մասը մէջ է բե-
րում Խոսրովիկ յետոյ և ջրում. «Այլ ասես.
երեսական բաժանումնի բան զնեստորին աեդր եւս բորի
յնելիք; Կարծում ենք, որ այստեղ էլ վերջանում է
հակառակորդի թուղթը. «Յոյժ զարմանամ նորայն»
խօսքերը Խոսրովիկինն են, ապա թէ ոչ պետք է
ենթադրել, որ հակառակորդը իւր թուղթը մէ

այսպիկ մերն առ նա՝¹ և նորայն առ մեզ
դրեցելոցն բանք²:

Բայց մեզ ժամ է այսուհետեւ զմար-
դարէականն բարբառել³ բան. «լուռ եղէ ի
սկզբանէ, միթէ միշտ լոկցեմ և⁴ 3 անսայ-
ցեմ» †: Ասացեր հարկաւորաբար ‡ ‡ խռատո-
վանել և ոչ կամաւոր զմարդկային բնու-
թեանն դէմս ի Թրիստոս, զոր ի դէպ է ըստ
այդմիկ ասել ի վերայ քո⁵, զի թէ ոչ ի ծնո-
ղաց և աղայն, քոյին կամօք թերես⁶ ոչ
զհողեկան ընտրել ծնունդ, և ոչ վայելէիր
ի փառա վեհագունի անուանդ: Ասացեր.
այս ինձ ոչ այլ ինչ երեկի⁶, քան թէ զո՞մ

1 Ա նայ. 2 ԱկԲ բարբառեալ. 3 Բ և այնսայցեմ.

4 + բոյ. 5 Բ թերես. 6 Ա էրեկ.

ուրիշ անձնաւորութեան է ուզզել և ոչ Խոսրովիին,
որի համար ոչ մի ցուցում չունինք:

* Այսաեղ վերջանում է Հ. Ցաշեանի հրա-
տարակած պատառիկը:

† Ես. ԽԲ. 14:

†† Այսաեղ Խոսրովիկ հակառակորդի թղթից
բառացի զիսյութիւն չէ բերում: Պյլ ակնար-
կում է նորա գիր հարկաւորութեան, արտպյայ-
տութիւնը: «Բարեպաշտութեան» և «Ճշմարառ-
թեան», ինչիր է «զմարդկային բնութեան դէմ»
ի Քրիստոս խռատովանելը: որ կամաւորապէս պէտք
է լինի և ոչ «հարկաւորաբար», սահպաղտիան: Համ:
եր. 13: Ճռնոթ...ը:

մարդ առնուլ։ արդարեւ այդ իսկ է և ոչ
այլ ինչ մանկքեցոցն¹ աղճատանկք։ Եւ արդ։
Եթէ ոմն ոչ էր, ապա² և ոչ էր իսկ, և
հարկ լինի կամ զանեղ բանն ըստ քեզ յե-
ղուլ ի մարմին և առ աչօք և ոչ ճշմար-
տութեամբ երեսեալ։

Եւ ասացեր. «ամենայն մարդ յորմէ
հետէ ձևանայ՝ յարդանգի, յայնմ հետէ իմա-
ցեալ լինի դէմ»։ զնոյն իսկ ասեմ և եա,
զի և այնպէս իսկ է, զի անձեն անդէմ է։
իսկ որ ոչ ունի դէմ, ոչ ունել նմա և կեր-
պարան, ուսափ յայտ է, եթէ անձեն և
անդէմն և անկերպարանն ոչ է և ոչ ի գոյէ
իմէքէ. յորմէ ապա և ոչ ինչ։ Եւ այս ոչ
այլ ինչ⁴ եթէ ոչ առ աչօք երեսումն, այլ և
մահն, ընդ նմին և թաղումն, և յարու-
թիւնն առ աչօք, ապա և փրկութիւնն⁵ մեր-
եւ ասես⁶. «այսապէս ոչ այլ ինչ գիտեմ
զգէմն, քան թէ զոմնն մարդ։ Կարծեմ՝ թէ
հաւաստի և որոշեալ ոչ ուսար զոմնն⁷ և զգէ-
մնս. զի դէմ սսվարեցաք ասել զգերակա-
ցեալն ի մարդումն և որ զբոլորն պարու-
նակէ զգայական մասունան, առանց որոյ
մարդմ՝ ոչ կենդանի և ոչ մարդ կարէ զոլ

1 Ա մանիքեցիոցն. 2 Ա ապալ. 3 Ա ձևանա.

4 Կ ոչ այլ ինչ է. 5 Բ փրկութիւն 6 Ա ասեմ.

7 Բ զոմն և զգէմնս, Կ զոմնն և զգէմնն.

կամ ասիլ։ Արդ եթէ ոմն ոչ է Քրիստոս,
յայտ է թէ և անդէմ է, իսկ անդէմ լի-
նելով, ապա¹ և ոչ մարդ և ոչ կենդանի կա-
րէ² ասիլ։ Իսկ ընդէր արդեօք ոչ եղելոյն
մարդ՝ մարդկային ասես ունել³ բնութիւն,
զի մարդկային բնութիւն ի մարդկայնում
դիմի և կերպում տեսանի, որոց ոչ եղելոյ,
և ոչ մարդկային բնութիւն կարէ⁴ կամ գոլ
կամ կոչիլ։ Այսոքիկ քոյոց իմաստիցդ⁵
առաջարկութիւնք։ Եւ ասես. «թէպէտ և
ոչ ուրանամ զծէրն Քրիստոս մարդկային
գիմով երեեալ մարդկան», թէպէտ և յա-
պաղեցեր, սակայն և այնպէս լուծեր զեր-
կունս բանիդ, շատ հեռի ընկենլով⁶ յառա-
քելական բանէն⁷, մանաւանդ թէ յոյժ հա-
կառակ նմին. զի զոր նա եղեալ և առեալ
ասաց, դու զայն երեմամբ միայն ցուցեալ
ասացեր։ Երեմամբ ապա, որպէս յառաջն
ասացաք, ամենայնք⁸ առ ի նմանէ տնտե-
սականքն, այլ և փրկութեանն մերոյ յոյս,
ստուեր և ոչ ճշմարտութիւն ըստ քեզ։ Տես,
որպիսեաց խորհրդոց առանձնակի յանդգ-
նեցար լինել գտող⁹։ Եւ ասես. «փոխանակ

4 Ա ապայ. 2 Ա կարի. 5 Բ ունիլ. 4 Ա կարի.

5 Ա քոյոց իմաստիցտ. 6 Ա Բ ընդենլով. 7 Բ յա-

ռաքելական բանին. 8 Ա ամբ=ամենայնք, Բ ա-

մենայք, 4 ամբն=ամենայնքն. 9 Բ և 4 գտող.

սերման Բանն ժամանեաց յարգանդ կու-
սին, ըստ այսմ մտաց իւր ասեմք գոլ
զգէմնա։ Իսկ արդ, եթէ փոխանակ սերման
զԲանն ասես լինել¹, Բանին փոխանակ զն
ասես գոլ. թէ մնաց, որ էրն, ոչ կարի² ա-
սիլ եղականին գոլ փոխանակ, ապա թէ
յեղականումն³ գտաւ գոյութեան, յիւրմէն
լուծեալ եղե գոյութենէ։ Դարձեալ Բանին
գէմ աներեելի⁴, զի անմարմին, իսկ մեք
զերեելին և տեսաք և՝ շօշափեցաք։ ԱՌՈ,
եթէ ըստ ինքեան ասես երեել զԲանն, ըստ
ինքեան և մարմին ասես զնա գոլ, և կամ
զանմարմնականն իւր կորուսանել և ի մար-
մին իւր փոխաբուսիլ, և կամ թէ առ աշաք
և ձեռվ մարդկայնովդ⁵ ասես զԲանն երե-
ւեալ։ Տես, որպիսի մտածութեամբ աղտե-
ղեալ ձեռնարկեցեր զանազտ լսելիս ժողո-
վըրդոց Քրիստոսի Եւ ասես. «յետ շարաւ-
դրութեանն մի բնութիւն ոչ զոք գիտեմ ի
հարանցն խոստովանելը. զհարմն առ այժմ⁶ Յ
յապաղեսցուք յիշել, զի յայլում տեղւոջ
ցուցանելոց եմք զասել նոցա և որպէս ա-
սենն։ Բայց շարաղրութիւնդ որ ասես. մեմ

¹ լինիլ. ² կարէ. ³ յեղականում գտաւ,

⁴ յեղականում գաւ. ⁴ բ անէրեելի.

⁵ և մարդկայնովտ, ⁶ մարդկայնովս.

⁶ և և ⁴ առ այժմն.

և ում ասես գոլ. բնութեանցն †¹. ոչ հաւանիմ՝ զի անհնար է, ոչ միայն թէ ստացականի և անստացականի, այլ և յարարածականացս օտար է այս. զի բնութիւն² պարունակող է³ պարունակելոյն ինմանէ և ոչ ի նոցանէ պարունակեալ. զի թէ ի բաց բարձցես⁴ դյատուկն, հանուրն ոչ լինի բաց բարձեալ, իսկ հանուրն շարաբառնալով, բառնանի ընդնմին. և ոմնն Յ, և զի ոչ են բարձողք⁶ իրերաց, ըստ սմին այսմիկ և անհակադարձելիք առ միմեանս. յաղագս որոյ ոչ ասի մարդն Պողոս, որպէս Պողոսն մարդ գոլ ասիս Արդ, եթէ հանուր առ հանուր շարաբըրեալ՝ եղն, ամենեքսւմիք⁸ է հանդերձ անհատիւքն ի շարադրութեանն, և գու որ զմարդկային դէմն ոչ ասէիր գոլ ի Քրիստոս, գտանիս ասացեալ զամենայն մարդիկ դոլ ի Քրիստոս և այնուհետև ոչ ևս իցէ Քրիստոս և եթ Քրիստոս, այլ երկոցուն հանրականացն յատուկքն Քրիստոս. վասն որոյ ոչ ասի Բանն միայն յատուածութենէն և

† Ա և ՞ գոլ բնութեանցն ոչ.

2 Ա և ՞ զբնութիւն. Յ Բ և ՞ պարունակող է.

4 ՞ բարցցեալ. Յ Բ ոմն. 6 Բ և ՞ բարձողք.

7 Ա և ՞ շարադրել. 8 Ա և ՞ ամենեքսւմիք.

† Այսպէս բաժանեցինք իմաստի համեմատ. ձեւադիրների մէջ կէտադրութիւնը շփոթ էր:

ի մարդկութենէս եղեալ մարմին և անուանել¹ Յիսուս, այլ ընդ նմին Հայր և Հոգին², և համօրէն ազգ մարդկան Յիսուս. զսրոյ գհետ գայ³, կամ ամենեքին լինել Քրիստոս և մեռանել խաչիւ, և կամ ոչ ոք լինել Քրիստոս և ոչ մեռանել⁴, որ և երկոքին անտեղիք Եւ համայն ոչ պատկառես⁵ այսպիսեօք⁶ խաւարեցուցանողօք⁷ գիւտիւք խաւարեցուցանել զլուսաւոր միտս հաւատացելոց⁸ Այլ ասես. «Եթէ երեսական բաժանումնդ⁹ քան զնեստորին անդր ևս թուփ լինելը» Արդ, տեսցուք ով իցէ Նեստորն և չարափառագոյնն ևս քան զնեստորն. մարդածին և ոչ աստուածածին խոստովանիս¹⁰ զսուրբն Կոյս¹¹. դու զԲանն ի մարմին յեղեալ ասելով, մարդածին ապարէն գտանիս ասացեալ զսուրբն Կոյս¹¹: Եւ դարձեալ զի Նեստոր ոչ կորուսանէ զգոյութիւնն և զԲանին և զմարմնոյն իւրոյ, թէպէտ և զմիաւորութեանն բան անբարէփառապէս թերաբա-

1 և անուանեալ. 2 և Հոգի. 3 և գա.

4 և մեռանիլ. 5 և պատկառիս.

6 և և այսպիսօք. 7 և և խաւարեցուցանողօք.

8 և եթէ երեսական բաժանումն.

9 և խոստովանիս. 10 և «զսուրբ Կոյսն դու», — կէտադրութիւնն էլ այսպէս է. 11 և զսուրբ Կոյսն.

նէր¹. իսկ դու ումեմն² ոչ տալով և զո՞մն
յեղլով³, զերկոցունց ուրանաս և գտանիս
եղեալ շարափառագոյն ևս քան զնեստոր
հայհոյութեամբ:

Բայց արդ, դարձցուք անդրէն յիս-
կիզբն քոց⁴ ասացուածոցն: Ասացեր⁵. «թէ
ի մարդկային զանգուածոյս դէմ նշանա-
կեալ, ոմն մարդ լինի»⁶. զի՞նչ քեզ երեկի
փրկչական⁶ բանն՝ այրն զի՞նքն անուանել⁷
և որդի մարդոյ, ոչ ապաքէն որ ի հասարա-
կացն իմեքէ առանձնացեալ իմանի, և ոչ
եթէ⁸ հասարակականք ոմանք: Դու փախչիս
զո՞մնդ յասելոյ⁹, և զի՞նչ ասեսն, ոչ գիտես,
բայց մեք և ասեմք իսկ զդոյն և ճշմար-
տեմք ոչ զայլ ոք իմանալ զո՞մնն, այլ զնոյն
ինքն Տէր Յիսուս Քրիստոս յաստուածու-
թենէն և ի մարդկութենէս անշփոթաքար¹⁰
և անքակապէս միացեալ, և այսպէս հաւա-
տամք ի միաւորութեանն գտանիլ¹¹ մեզ հան-

¹ Ա և ² թերաբաներ. ² Բ ուգեմն.

³ Գ յիշելով. ⁴ Գ դարցցուք անդրէն յսկիզբն
քոց, Ի անդրէն ի սկիզբն քոց, Ա յիսիպրն. ⁵ Բ ասացիր.

⁶ Ա զի՞նչ քեզ էրեկի փրկչական, ⁷ Բ զի՞նչ քեզ էր
և ի փրկչական. ⁸ Բ անուանիլ. ⁹ Ա էթէ. ¹⁰ Բ ասելոյ.

¹¹ Գ գտանել.

† Հեղինակը հակառակորդի խօսքերի իմաստն
է բերել և ոչ իսկական բառերը:

բական անգամոց կաթողիկէ եկեղեցայ։
Բայց զքեզ ոչ գիտեմք թէ յոյց ումանց
հսզմոց շարժեցար անկանել¹ յայսպիսի տա-
րապարտ մտածութիւնս։ Զի ասես. «ամե-
նայն մարդ յորմէ հետէ ձևանայ յարդան-
դին², յայնմ հետէ իմացեալ լինի դէմ», ուս-
տի յայտ է, թէ ոչ միայն անձեւ, այլ և ան-
սկիզբն կամիս ասել զմարդեզութիւն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ զիալդ ասի
անսկիզբն սկսանել և անժամանակն ընդ-
ժամանակաւ լինել³, այլ որ քեզ անհաւա-
տութեանգ⁴ է, մեք ի դորին իսկ վերայ⁵
հաստատեմք զմերոցս հաւատոց ճշմարտու-
թիւն։ Եւ յայնմ հետէ իսկ իմանամք զմար-
մին Բանին ձևացեալ և կերպացեալ, յար-
մէ հետէ արժանի արար Բանն Աստուած
լինակիլ յարդանգ սուրբ Կուսին։ Յազագո
սրոյ⁶ համանգամայն⁷ և ի միասին ասեմ
տնօրինել զմարմնանալոյն⁸ և զմիաւորու-
թեան խորհուրդ։ Եւ նովին ձևացելով և
կերպացելով մարմնովն ասեմ համբերեալ
զբանն Աստուած մարդկայնոցս կրից. ինն-
ամսեայ⁹ յղութեանն, ծննդեանն, աճմանն

1 Ա. և անգանել. 2 Ա. արդանդին, յայնմէ հետէ.

3 Գ լինիլ. 4 Բ անհաւատարմութեանգ.

5 Ա. վերա Գ վերա. 6 Ա. յաղագս որո համ ...

7 Գ համայնդամայն. 8 Բ զմարմնալոյն.

9 Ա. իննամսեամսեամսեայ, Կ իննամսեա.

հասակի, աշխատութեանն, քաղցի, ծարաւոյ, տրտմաւթեան, երկիւղի¹, անդիտուտեան, մահօւ, յարութեան², «Յղասցիս, հրեշտակն ասէր առ սուրբն կոյս³ և ծնցիս որդի, և կոչեցես զանուն նորա Յիսուս»⁴, Արդ, զայս եթէ բարբում դիցես մարդկային բնութեանս, կամ ոչ զոք ասես յղացեալ և ծնեալ, զի բոլոր բնութիւնս ի զօրութեան առաւել քան թէ ի ներդործութեան, և կամ ասես առ հասարակ զամենայն ազգ մարդկան յղացեալ և ծնեալ, զի ոչ յատուկ Մարիամ և եթ ի բնութենէս, զի և ամենայն ոք և ոչ դարձեալ ի նա⁵ միայն բովանդակեալ բնութեանս, զի և առ այլս և առ ամենեսին «Եւ Յիսուս աճէր և զարդանայր հասակաւ» գրեալ է⁶††. և յորժամ եղեն այս, անբաւք վախճանեալք յայնժամ ի բնութենէս, յորս նուազելն հպագոյն և ոչ աճելն և բիւլք բիւրուց⁷ մարդիկ գոլ կենդանիք և կատարելահասակք⁸, զաճելոյն ի բաց վճարեալք զիրակութիւն, և անթիւք⁹ դարձեալ լինելոցն, յորս ոչ մերձենայր աճելն, և բնութեանցս

1 Ա և Գ երկեղի. 2 Պ յարութեանն.

3 Բ առ սուրբ կոյսն. 4 Ա ի նամանայ. 5 Բ բիւրոց. 6 Կ կատարել հասակք. 7 Բ անրիւրք.

† Դուկ. Ա. 31. †† Դուկ. Բ. 51.

անուն յամենեցունց ի վերայ երթայ, զանցելոցն; և զկենդանեացն, և զշե եղելոցն։ Արդ եթէ բնութիւնն մարդկային թանց¹ անձնաւորութեան ասել գոլ ի Քրիստոս, առ ում և կամ յոյլ վերայ² զածելս և զարդանալս խնդրեսցուք, ասան, մեզ։ Տեսանես, թէ զորս, և զորպիսիս արդիւնաւորեսցեն առ ի քէն սերմանել բանքոց։

«Յիսուս աղաղակեալ ի ձայն բարձր արձակեաց զոգին, և եթէ՝ Յիսուս խոնարհեցուցեալ զգլուխն աւանդեաց զոգին»³։ Արդ՝ զայս ում ումեք համարձակիցիս⁵ տալ, աղէ, ասն ինձ, Բանին անմարմնականի,⁶ թէ հասարակականի բնութեանս մարդկայնոյ, որ ևս անմարմին գոգցես թէ ըստ ասացելումն Բանի, զի ընութիւն ոչ ունելով զնշանակիչն իւր, այս ինքն՝ որ ցուցանել և նշանակել զնա կարիցէ, աներեւոյթ է և անըմբըըունելի։ Արդ ում ումեք և տացես զայս, յանկարելեացն է, զի ոչ անմարմին Բանին ըստ ինքեան կարելի է մեռանել⁴, և ոչ հասարակականի մարդկային բնութեանս։ Ապա⁶

¹ Պարց. 2 Ա վերա (—վերայ) զամելս, ³ Վերազանելս, ⁵ «վերայ» չունի. ⁵ Գ համարձակիս. ⁴ Բ մեռանիլ. ⁵ Ա Բ Գ բնութիւնս. ⁶ Ա ապայ.

† Մատթ. ԽԵ, 50 և Յով. ՓԹ. 30:

թէ մեռաւ ճշմարտապէս վտան մեր Որդին
Աստուծոյ զմերն մահ ըստ մեղ, բայց եթէ
կայցէ ինչ առ Որդւոյ, որ մարթելի էր նմա՝
մեռանել, և այս է զոր ի մերմէս առանձ-
նակի իւր միացոյց, մարմին հոգով բանա-
կանաւ, ապա² ուրեմն ոչ բնութիւն անգոյ
և անդէմ՝ զմարդկայինս ընկալեալ Բանն
Աստուծոյ, այլ յաւէտ թէ ի հասարակական
մարդկային բնութենէս առանձնակի միացոյց
իւր մարմին անձամբ բանականաւ.³ և նովին
մարմնով յաղթեաց մեղաց, մնահու, դժու-
խոց և ապականութեան, զի մեզս ոչ արար,
և ոչ գտաւ նենգտոթիւն ի բերան նորա, և
ոչ ոգի նորա թողաւ ի դժոխս և ոչ մար-
մինն ⁴ նորա ետես զալականութիւն † :

Այս է ահա ճշմարիտ խոստովանու-
թիւն ուղղափառ ոուրբ հարանցն, յորմէ
դու զլուելիսդ կափուցանել կամելով՝ անա-
մօթաբար ասես, «թէ զդէմն ոչ այլ ինչ իւ-
մանամք քան թէ զոմն մարդ», և համայն
առաւել զոր իմանալդ ասացեր, ոչ իմացար,
զի ոչ եթէ դէմն զոմն և եթ ցուցանէ, այլ
բոլորովին իսկ և ի վերայ հանուրցն ասասցի

1 Ա. նմա նմայ. 2 Ա. և Գ. տալայ. 3 Բ. բաւակա-
նաւ. 4 Բ. մարմին.

† Ա. Պետ. Բ. 22. Սաղմ. Ժե, 10 և Գործք
առ. Բ. 31.

գոլ, զի թէ առ ումեմն իսկ իմանաս զդէմն¹,
առ միւսումն² ևս այլ ինչ և ոչ ճանաշես-
եւ դարձեալ թէ դէմն զումեմնէ և եթ ա-
սի, հնար է և բոլորին և առանց դիմի գոլ-
եւ դարձեալ՝ թէ դէմն անտի ոմն և եթ,
այլ ոչ և բոլորն³ ցուցանի. ոմն և ի հոմա-
սեռիցն հանդիպեսցի գոլ ամենայն հարկա-
ւորութեամբ, որ ոչ ասի մարդ, այլ այլ ինչ:
Եւ այս է քո զօր⁴ մեծապէսն ասացեր ի-
մանալ: Եւ արդ վասն զի ցուցաւ թէ դէմն
որ ինչ անուանն պատկանի, նոյն ասի և ի
վերայ ստորակային⁵, արդ, կամ ասացես
ըստ գրոց որպէս զանունն՝ նոյնպէս և
զդէմն մարդկային ի Քրիստոս, կամ թէ ի
բաց բարձցես զդիմին ասելն⁶, ընդ նմին
ի բաց բարձեալ լինիս և զանուանն առա-
սութիւն: Եւ արդ՝ ահա մինչդեռ փախչէիր
զանձնաւորութիւնն մարդկային ասել ի
Քրիստոս, ուրացար ընդ նմին և մարդ լեալ
զՔրիստոս:

Բայց հրաշանամ, թէ վիարդ կարդաւ-
և անվրէպ կատարին յամենատես և յամե-
նագիտակ Հոգւոյն Արբոյ ասացեալքն բերա-
նովք առաքելոցն, և պահեցար յետին ժա-

1 թ զդէմն. 2 Ա միուսումն, Գ միումն. 3 Թ այլ
և ոչ բոլորն. 4 Թ ոյ զօր. 5 Ա ստորակաին, Գ ստո-
րականին. 6 Ա զդէմին ասիլն, Բ զդիմին ասիլն

մանակացս զառաջնովքն գերազանցեալդ-
ամբարշտութեամի, որ ուրանալ ձեռնար-
կեցեր զվասն մեր ճշմարիտ¹ մարդեղութիւն
Փրկչին մերոյ Աստուծոյ։ Եւ ասես. «անձնա-
ւորութիւն մարդկային ասել ի Քրիստոս,
ոմն մարդ ասել է»², և ընդ ձեռն այդպիսի
բանից խուճապել կամիս զուղիղսն և զքեղ
ուղիղ³ երեւցուցանել, զամենելին թիւրդ-
քան զթիւրս թիւրագոյնդ⁴։ Ոմն մարդ ոչ
ապաքէն յատկացեալ⁵ ասի ի հասարակէն
այսոքիւք՝ հոգով, մարմնով, մտօք. զոյն
ոչ ապաքէն զայս ի Տէրն մեր և Փրկիչ
ուսագ ի գրոց գոլ ի մարդկայնոյա։ Արդ՝ ա-
սես զնա ընդ ձեռն այսոցիկ ոմն ի մարդ-
կանէ եղեալ է, թէ ոչ. եթէ առանձնակի⁶
իւր ինքեան Բանն ոչ ստացաւ առ. ի մէնջ
հոգի, մարմին և միտս, այլ զայլոցն իւր
վարկանի հոգի, մարմին և միտս, ոչ էր
պարտ ասել՝ թէ «մարմին իմ ճշմարիտ կե-
րակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի»⁷,
և որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ⁷ զարիւն

1 Ա ճշմարտիտ. 2 Ա ուղեղ. 3 Բ զամենելին
թիւրդ թիւրագոյնդ. 4 Ա յատկացել. 5 Բ առ անցնա-
կի. 6 Գ ընպելի. 7 Ա բմբէ.

† Հակառակորդի խօսքերի իմաստն է, և ոչ
բառացի կրկնութիւնը.

իմ, կեցցէ յաւիտեան» †, պարտ էր ասել մարմին ձեր և արիւն ձեր: Եւ դարձեալ ոչ ասել՝ «զանձն իմ դնեմ» ‡‡, զոր ⁴ ասաց վասն մարդկային հոգոյն, այլ եթէ զանձինս այս նոցիկ, որ իւրաքանչիւրոցն են, և ոչ իմ դիցեն ²: Եւ այս էր քո զօրաւոր և անվթար հակառակ ճշմարտութեան գտեալ դէն յաղթութեան:

Եւ ասես. թէպէտ և մարդկային դիմով ասեմ երևեալ զծէրն մարդկան, «այլ քանզի փոխանակ սերման, զբանն ասեմ ժամանեալ յարգանդ ³ կուսին», զբանն ասեմ զերևեալ դէմ, և ոչ զայլ ոք *:

Եթէ ⁴ զերևելին զբանն ⁵ ասես գոլ դէմն, զաներևելին, որ յԱստուծոյ Հօրէ, զնվ ասես արդեօք ⁶ գոլ: Յերկուց մինն առաջի կայ քեզ ասել. կամ ոչ ունելով նմա ի Հօրէ զկատարելութիւն անձին և զայս ի Կուսէն կարացեալ ⁷ գտանել, և կամ թէ ունէր զայն զայս, զերևելիս ունէր, և ոչ զան-

4 Բ զորս. 2 Բ իմդ իցին. 5 Դ յարգանտ. 4 Ա էթէ. 5 Բ զրան. 6 Ա արդիաւք, Բ արդիօք. 7 Ա Բ կարացել.

† Յովհ. Զ. 55 և 56.
‡‡ Յովհ. Փ. 16.

* Խոսրովիկ միայն չակերտների մէջ առնուած խօսքերն ե բառացի բերել հակառակորդի թղթից, մնացածը բովանդակութիւնն է իմաստի համեմատ:

մարմնականն¹, և զսրբուհին կոյս² ոչ մարտ-
դեղութեան, այլ երեման³ եկեալ արար
պատճառ, յաղագս որոյ ապա⁴ ասի ըստ
քեզ Մարիամ⁵ ոչ մայր Տեառն մերոյ և Ա-
րարչին, այլ կիսանձնակատարութեամբ, և
կամ երեման⁶ գոլ պատճառ։ Դու հաւա-
տաս (զանաշեան յեղել աշացուն, հարցանէր
Տէրն)⁶, յՈրդի Աստուծոյ>†. յորմէ հայցեալ
ասէր. «Ո՞վ է նա, Տէր, զի հաւատացից»††, և
Տէրն ասէր, «Ե տեսեր զնա, և որ խօսիդ-
ընդ քեզ՝ նա է»*: Արդ զայսօսիկ զցուցեալս
և զտեսեալս՝ եթէ ըստ ինքեան իմանաս
Բանին անտեսանելոյ և ոչ միաւորութեան
տնօրէնութեանն, զերկոսին գտանիս ասա-
ցեալ ոչ ճշմարտել՝ և զանտեսանելն և զտե-
սանելն⁷, զի զԱստուած ոչ ոք ետես երբէք⁸,
և զոր ոչն ոք ի մարդկանէ ետես և ոչ
տեսանել կարող է⁹, և ցՓիլիպպոս¹⁰ ասելով

1 Բ զանմարմնականսն. 2 Կ զսրբուհի կոյսն.

3 Ա էրեման. 4 Բ ապայ. 5 Ա և կամէր և

նման գոլ. 6 Գ զանաշեան հեղեալ աշացուն, հար-
ցանէր տէրն», և փակագծի մէջ առնուած.

7 Բ և զտեսանիլն և զտեսանելն. 8 Ա յերբէք

9 Բ և Կ արօղ է. 10 Ա ցՓիլիպպոս.

† Յազչ. Բ. 35.

†† Յազչ. Բ. 36:

* Յազչ. Բ. 38.

Տեսուն. «Որ ետես զիս, ետես զՀայրն իմ» †, և այս ըստ նորին մտաց, ըստ միաւորութեան տնօրէնութեանն և ոչ ըստ էութեան բնութեան Բանին յարմարեսցի տեսանելս ¹: Բայց ասացից առ այսոքիւք ² և այլ իմն հրաշալիս, զի այնոքիկ, որ քեզ յանհաւատութիւնն առաջնորդեն, նորին բարեփառս զմեզ յօրինեալ կատարենացեն:

Ի չորս քաժանի ³ որ ի վերայ էակացա առեալ լինին անուանք. ի հանուրն, ի բոլորն, յանհատն, և յիւրաքանչիւրն ⁴: Արդ, գայլովքն ժամուս զանց առնելով, յաղագս իւրաքանչիւրին դուզնաքեայ ասասցուք, որ և առաջարկելոցս ⁵ մատուցանէ բանից զօդնանկանութիւն: Նշանակեալ լինի իւրաքանչիւրն ի սոցունց յայսցանէ. ի գաւառէն, ի ծնուղաց ⁶, յորպինութենէ երևմանն, ի ներդործութենէ ⁷ և ի կրից. արդ ամեննեքեան այսոքիւք առանձնացեալ ⁸ լինի յիւրաքանչիւրսն, որոց հաւաքումն միահամուռ ի վերայ այլոյ ուրուք ոչ տեսանին: Արդ՝ ոչ ա-

1 ♫ տեսանել. 2 ♫ առ այսոքիւկ.

3 Ա և ♫ բարժանի. 4 ♫ իւրաքանչիւրն.

5 Ա առաջարկելոյցս. 6 Ա ծնողաց.

7 Ա ի ներդործութէնէ. 8 ♫ այսոքիւկ առանձ ..

Ր այսոքիւք առանցնացեալ.

† Յովհ. ԺԴ. 9:

պաքէն գտանեմք զամենեսեան զայսոսիկ
յարմարեալս ըստ մարմնոյ և ի վերայ ծեառն
մերոյ և Փրկչին. յանուանէն՝ Յիսուս Քրիս-
տոս, ի գաւառէն՝ Նազովրացի, ծնող ունե-
լով զսուրբ¹ Կոյսն, յորպիսութենէ՝ ի նմա-
նութենէ², որով իւիք ծանօթանայր և ծա-
նուցեալ լինէր, ի ներգործութենէ՝ դոր կա-
տարեաց զաքանչելիոն³ ի մարդիկ, ի կրիցն՝
ի մկրտելն՝ ի խաչելն⁴, ի թաղելն, յառնելն
երեքօրեայ⁵, վերանալն յերկինս և որ զկնի
այսոցիկ:

Արգ՝ ահա⁶ դու զյատուկն որ ի հա-
սարակէն զարհուրիս ըստ մարմնոյ ասել
ի Քրիստոս, մեք և զառանձնականս ևս
անուանս լոսուովանիմք ունել նմա ըստ
աստուածային կարգաց ի մարդկանէ, և հա-
մայն ոչ ինչ ամենենին մնասել գտանի յայս-
պիտեաց աստի անուանց և իրաց ճշմարիտ
միաւորութեանն՝ խորհուրդ մարմնացեալ
Աստուածն Բանի, այլ մնասեսցին յաւէտ
յագագս նորա՝ որք անհաւատութեամբ են
մնասեալ ախտիւք, խորհուրդք. օրինակ իմն՝

¹ Ա զսուրբ կոյս, Բ զսուրբն կոյս.

² Ա «նմանութենէ», առանց «ի», Դ նմանու-
թեանն է. Յ Անդ պանչելիսն. Կ Կ ի մկրտիլն, ի խա-
չին, ի թաղելն. Յ Ա գ. օրեա. Ե Ա և Բ ահայ.

³ Բ «միաւորութեան», և ուրիշ դրով.

մի և նոյն + երկիր հաստուն կայ մնայ՝¹ և
շարջ անցանէ ըստ զանազանապէս ունողացն
զարամակացեալ ունակութիւն, կամ որպէս
քաղցրութիւն մեղսւն ոչ նմանապէս քաղցր
թուիցի գոլ յոդունց² ճաշակելեաց, զի նո-
ցա որոց կուրացեալ է ոգոյն ակամք, ոչ ուղ-
ղապէս զմիաւորութեանն³ ի Քրիստոս նկա-
տեալ կարացեալ զօրութիւն. այնպիսեացն
ամենապէս իսկ և ամենեին ապականեալ են
խորհուրդք և միաք, ոչ միայն ի տնտեսա-
կանսն, այլ և յաստուածաբանականսն Բայց
մեք, որոց ճշմարտութիւնն է պատուեալ,
յերկոսին նմանապէս անստուեր⁴ իւրական
սովորեցաք գնալ ճանապարհաւ: Զի յորժամ
խոստովանիմք մի բնութիւն և զօրութիւն
գոլ աստուածութեան, ոչ կասկածեմք ի
միում բնութեանն զերկափանչիւրսն որոշել
զառանձնաւորական յատկութիւնսն. ասել
Հայր անսսկիզբն գոլ և պատճառ Որդւոյ և
Հոգւոյ, Որդւոյ ծննդեանն և Հոգւոյն ելողու-
թեան, և Որդի⁵ ծնունդ գոլ ի Հօրէ, և ոչ

1 Ա կամ նա—նայ.

2 Ա յոքունց. 3 Բ զմիաւորութիւնն.

4 Բ անստեր իւրական. 5 Բ զՈրդի.

+ Ա յստեղ վերջանում է մեր Գ (№ 655) ձե-
ռագիրը. այսուհետեւ համեմատութիւնը կատար-
ւում է միայն Ա և Բ ձեռագիրներով.

ելումն, և զՀոգին արտաքս առաքու մն, և ոչ
ծնունդ գոլ, զի ոչ Հայր բռնադատի յՈրդի
և ի Հոգի, և ոչ Որդի ի Հայր և ի Հոգի, և
ոչ Հոգին յերկոսին ի նոսա ի Հայր կամ յՈր-
դի փոփոխեալ, այլ առանձնաւորութեանցն
անշարժ մնալով ի միասին հասարակականի
բնութեանն և զօրութեանն։

Այսպէս և ի անօրինականոն Փրկչին
զմիաւորութեան Բանն սւղղակի դաւա-
նեալ ուսեալք յաստուածային¹ գրոց, ոչ
զանդիտեմք զմի և զնոյն Տէր մեր Յիսուս
Քրիստոս և Աստուած խոստովանեալ՝ միան-
դամայն և մարդ, Աստուած ըստ էութեան
բնութեան իւրոյ, և մարդ՝ ըստ մարմնանո-
լոյն և մարդանալոյն վասն մեր, կատարեալ
յաստուածաւորութեանն², կատարեալ նոյն և ի
մարմնաւորութեանն. և թէպէտ այսպէս
կատարեալ և կատարեալ ասեմք³ և է,
համայն ոչ երկուս կատարեալք, այլ մի կա-
տարեալ՝ մի և նոյն Տէր մեր Յիսուս Քրիս-
տոս Եւ ոչ գործեալ՝ վասն զի մի կատար-
եալ, և է, և ասեմք, անկատար զնա կամ
ըստ աստուածութեանն կամ ըստ մարդ-
կութեանն իշխեցից կամ խորհել⁴ կամ ա-

¹ Բ աստուածային. 2 Բ աստուածութեանն.

³ Բ «կատարեալ կատարեալ և ասեմք», երկրորդ
«կատարեալ»-ը ուրիշ գրչով տողի վերայ
աւելացրած. 4 Չ խորհել.

սել։ Նախ քան զամենայն յաւիտեանս ծնեալ
յԱստուծոյ Հօրէ և Որդի Աստուծոյ, յետ
ժամանակի ծնեալ նոյն և ի մօրէ ըստ մարմնոյ
և որդի մարդոյ, և սակայն ոչ երկու որդիք,
այլ մի՝ և միայն Որդի Աստուծոյ մարմնա-
ցեալ, մարդացեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս,
և այն որ ունէր ի Հօրէ անժամանակաբար
բնութիւն¹ հասարակական և դէմ առանձ-
նական և յատկական, նոյն ինքն եղեւ ըստ
ժամանակի և մարդ հանդերձ բնութեամբ
և դիմաւ և առանձնաւորութեամբ։ Այլ ոչ
եթէ յաղագս սորին այսորիկ յերկուս բա-
ժանեալ² բնութիւնս զՔրիստոս, և կամ
երկուս ասել զնա դէմ, և երկուս առանձ-
նաւորութիւնս³, այլ մի և նոյն միայն մարմ-
նացեալ Բանն Աստուած բնութեամբ, դիմաւ
և առանձնաւորութեամբ։ Եւ համայն մի
ասելով ի Քրիստոս բնութիւն, դէմ և ա-
ռանձնաւորութիւն, ոչ ուրանամ, զոր ունէրն
ի Հօրէ և զոր եղեն, կամ առն ի մարդ-
կանէ զբնութիւն⁴, զդէմ և զառանձնաւո-
րութիւն⁵։

Եւ դարձեալ ասի⁶ Տէր մեր Յիսուս
Քրիստոս⁷ և Բան Աստուծոյ Հօր. այլ ոչ եթէ

1 Բ բնութեամբ. 2 Բ բարժանեալ. 3 Բ անձնաւ
ուրաւթիւնս. 4 Բ զբնութիւնն. 5 Ա առանձնա-
ւորութիւն. 6 Ա է դրձլ ասի. 7 Ա «Քրիստոս» չունի.

յաղագս այսորիկ, զոր ի մէնջն ընկալաւ¹,
անբան ասել կարիցեմք, որպէս և ոչ առանց
իմաստութեան և զօրութեան, յաղագս գու-
լոյ նմա ըստ էութեանն Աստուծոյ զօրու-
թիւն և Աստուծոյ իմաստութիւն²: Եւ սա-
կայն թէպէտ և ասեմք և ճշմարտեմք ի
վերայ նորա զայսոսիկ և՝ ըստ աստուածու-
թեանն և՛ ըստ որում եղեն, սակայն³ ոչ
կարեմք յերկուս բաժանականս և առաջ-
նորդականս բաժանել⁴ զմի և զնոյն Տէր
մեր Յիսուս Քրիստոս, կամ երկու դնել
նմա զօրութիւնս և իմաստութիւնս Եւ ար-
դարև ըստ ինքեան Բանն՝ կերպարան Հօր
և նկարագիր էութեան նորա, էառ նոյն ին-
քըն յետ ժամանակի ճշմարտութեամբ և
գիերպարան և զնմանութիւն մարդոյ, սա-
կայն ոչ ասի մի և նոյն Տէր մեր Յիսուս
Քրիստոս երկու կերպարանք՝ երկուց ոմանց
գոլով նմանութիւն, այլ մի կերպարան⁵ և
պատկեր միոյ Աստուծոյ Հօր. և համայն մի
գոլով կերպարան և պատկեր, ոչ կարեմք
ռւրանալ զնա գոլ ըստ էութեանն պատկեր

¹ Ա ի մէջն բնգալաւ.

² Յ լուսանցքում միայն ուրիշ զրով աւելացրած
է չյաղագս գոլոյն նմա ըստ էութեանս Աստուծոյ
զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն»:

³ Ա սակայ. ⁴ Ա բարժանել. ⁵ Յ այլ ի կերպարան

Աստուծոյ, և ըստ տնտեսութեանն առնուլ, և զպատկեր ծառայի, ըստ նմին կարգի և այն ամենայն։ Կենդանի գոլով Բանն ըստ էութեանն իւրայ ի կենդանւոյ ։ Հօրէ, այլ և աղբիւր կենդանութեան և գոյացուցիչ կենդանեաց, եղի ի կնոջէ և մարդ կենդանական ահճամբ և մոռք կատարելութեամբ, և ոչ ասի երկու կենդանիք մի և նոյն Տէր մեր Յիսուս Քրիստոս, այլ մի կենդանիք Եւ սակայն թէ և մի կենդանի, և է, և ասի, այլ ոչ յանդգնիմք² կամ ի բանէն կամ ի մարմնոյն Նորին կրծատել զմասն ինչ կենդանական գորութեանն⁵. քաւ լիցի։

Եւ արդ զի այսոքիկ ամենեքեան, որ ինչ ենն՝ խոստովանեալ լինին, և որոց ոչ են՝ հրաժարեալ, զ՞ ոք ի սոցանէ ընդունելք քեզ թուիցի, հարցանեմ; կամ յումմէ իմեռքէ⁴ ի սոցանէ ի բաց կալ։ Զի թէ զմինն ճշմարտեսցես, զմիւսն ևս ոչ կարասցես ճշմարտել։ զի զերկրոսին⁵ միանդամայն ի վերայ միոյ իրի գիտել, անհնար է։ զի թէ ասես կենդանի զբանն Աստուած ըստ իւրումն էութեան, առնելով և Նորա⁶ ի կուսէն կենդանական մարմին ինքեան, և ոչ անշունչ

1 Բ ի կենդանի։ 2 Բ յանդգնիմ։

3 Բ զօրութեան։ 4 Բ իմէքէ։ 5 Բ զի երկսախն։

6 Ա և Նորայ։

և անզգայ¹, սպարտ է քեզ և երկուս խոստովանի կենդանիս. ապա թէ զայս ոչ իշխեացես տալ Քրիստոսի, հարկ լիցի քեզ կամ ի Բանէն² կամ ի մարմնոյ նորա ղկենդանականն ի բաց բառնալ զօրութիւն. թողումը բազում զայլսն մի ըստ միոջէ յիշեցեալսն, բաւական համարիմ զմինս միայն ի սոցանէ յօրինակ առնուլ։ Արդ՝ կամ ամբարշտեացես³ միով իւկը ի սոցանէ, թէ ախորժեացես⁴, կամ թէ ոչ ապա թողցես ինձ ասել, որպէս արժան է ասել, որ զճշմարտութիւն⁵ սիրեցի յամենայնս իմ պատուեալ⁶ կեանս, և ուղղափառութեան ի մանկութենէ ընտրեցի⁷ լինել բանի սպասաւոր, այլ և հաւատամ ի նոյն ինքն ի ճաւեցելոյն զօրանալով զվասն իւրն իմաստափրել ինչ յաստուածաբանութիւնն, զի և համառօտաբար ասացից, զի մի երկայնաւանդ եղեալ տաղակութիւն ի վերայ սերմանեալ արկից լսողացըն մտաց, և ի յագեցման բանին ընդդէմ եղեալ փակիցէ⁸ զախորժակացն զդրունաչութեան ինքեան Բանն որ ի Հօրէ և մարմինն

1 Ա անսպա. 2 Ա կամի բանէն.

3 Բ ամբարշտեացիս. 4 Բ ախորժեացիս.

5 Բ զճշմարտութիւնն. 6 Բ պատուիլ.

7 Ա ուղղափառութեան իմ անդութենէ ընդլիցի.

8 Բ փակեսցէ.

Իւր՝ որ առ ի մէնջ՝ ամենայն իւկը և ամենակին այսոքիւք գոլով ի կատարելութիւն, իսկ յանասելի միաւորութենէն մի՝ և ոչ երկու ասին կատարել, մի կենդանի, մի անձն, մի պատկեր, մի Որդի Աստուծոյ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Եւ արդ զի յայտնեցաք զայս, որպէս և նոյն ինքն յայտնին խորոցն Աստուծոյ Հոգին յայտնեալ մեզ առաջնորդեաց, պարտ է մեզ յիշել և որ ի վերջն՝ ¹ մնացեալ բանն եղեւ ի քոյ ասացուածոցն. զի գրեցեր ի պատասխանականին քո թղթի, «թէ զինի շարադրութեանցն ոչ ոք ի հարանցն մի առաց ² Քրիստոսի բնութիւն»: Որք ասացին, և որպէս ասացինն, գիտես գու և կարե քաջ, զի և խօստովանեալ իսկ ես յառաջ քան զայս, որոյ զնոյն պէտո ⁵ ինչ ոչ ունիմ երկրորդել, զի սուրբ հարգն որպէս մի Որդի գիտեն զջէր մեր Յիսուս Քրիստոս, ըստ նմին և մի գէմ, և մի բնութիւնառւել նման խօստովանին, և ոչ թէ ընդ ձեռն այսորիկ և այսպէս խօստովանութեանն անգոյ ⁴ ինչ կամ զիանն կամ զպատուական զիւր մարմինն քարոզէին և թանց բնութեանն ⁵. այս

1 Ա. ի վերջ. 2 Ա. մի առացաք. 5 Ա. պէտո.

4 Ա. անգոյ. 3 Ա. թանց բնութեան նայ ո՛ յանպար իմանալ ի միտորութենէն, 6 և թանց

յանպարիմանալի միաւորութենէն սւսեալք
այսգիւք մի դաւանել զ՞րիստոս Եւ զի
հաւաստեաւ¹ և յինքեան բերէր Բանն որ ի
Հօրէ զդէմն յատկական հանդերձ հասարա-
կական ընութեամբն, ըստ² նմին այսմիկ կա-
տարելաբար՝ և ոչ անկատար և զմարմինն
իւր իրաւացոյց առ ի մէնջ զգենուլ։ Եւ սուրբ
հարքն թէ գէմ յիշէին ի Քրիստոս, զայն
յիշէին, որ հասարակէն էր առանձնացեալ,
եթէ ընութիւն յիշէին ի վերայ նորա, յի-
շէին, որ զհասարակականն բոլորապէս յին-
քեան բերէր ընութիւն. մանաւանդ՝ զի և
չէ իսկ հնար զհասարակականն գտանել ու-
մեք³ ուրեք, եթէ ոչ յառանձնականումն
սա երեւել⁴ ճանաչի. Զի ընութեան⁵ հաւա-
քումն ի հասարակին ըստ զօրութեան և եթ-
է, անուամբ միայն նշանակեալ, իսկ յա-
ռանձնականումն⁶ ոչ ըստ զօրութեան, այլ
ըստ ներգործութեան և արդեամիք երե-
ւեալ⁷, վասն որոյ և առաջին և իսկագոյն
և մանաւանդ զսա անուանեցին գոյացու-
թիւն վեհագոյնքն⁸, և յորոց մերքն ընկա-

ընութեանն այն, յանպարիմանալի.

¹ Ա հաւաստ և յինքեան. ² Ի բնդ նմին.

³ Ա ու մէք. ⁴ Ա էրեւել. ⁵ Յ զի ընութեանն.

⁶ Ա իսկ առ յանձնականումն. ⁷ Ա էրեւեալ.

⁸ Ա զի այգոյնքն.

լան¹ զբանականութեանն վարժողութիւն,
զի ի սմա գտին և ծանեան որպէս դանուն
հասարակին, նոյնպէս և զիանն, և այս է
ոմնն, որ և սոյն սա անուանի և դէմ և
անձն և երեք², և որ այլ ինչ նմանու-
նակ³, զայսոսիկ, որով իւիք առանձնանայ
ի հասարակէն յատուկն։ Յաղագս այսորիկ
և սուրբ հարքն, որք յաստուածայնոյն⁴ էին
զօրացեալք հսգւով, և վարժք և հմուտք⁵
կատարելապէս բանականի հանճարեղու-
թեանն, նոյնաձևապէս որ ինչ յաղագս
դիմին և բնութեան բանք իմաստաօիրեալք
գտանէին, և որ ի սուրբ Երբօրդութեանն
աստուածաբանութիւն, նովին վարելով մոա-
ծութեամբ։

Յորժամ զմի ոք ի նոցանէ յիշէին
զհայր կամ զՈրդի կամ զսուրբ Հոգին;
զդէմն առանձնակի գիտելով, ի նորուն վեռ
բայ⁶ բոլորապէս և զբնութեանն առնուին
զանուն, Աստուած, Արարիչ, Ամենակալ, և
որ սոցին աղգակիցք. և որպէս զանունն⁷,
բատ նմին և զիանն առ նմա տեսանէին։ Եւ
ոչ եթէ մինչ առ միումն այսոքիկ, յայլոցն

¹ Ա որոց մերքն ընդալան զբանականութեան.

² Բ երեք. ³ Ա նման ունակ, զայսոսիկ.

⁴ Ա Բ յաստուածանոյն. ⁵ Ա հմուտք.

⁶ Ա վերա. ⁷ Ա զանուն.

սոքա բարձեալ լինէին, այլ որպէս մինչ
ընդ սոքօք ստորանկեալք¹, ըստ նմին և
այլքն։

Եւ այսպէս խւրաքանչիւր ոք ի նոցանէ
իւրումն ասելով յատկութեան, հասարակին
լինել հազորդ, և ի հասարակէն ոչ մասունո
ինչ իլր ի բոլորէ իմերէ² յինքեան բաժառ
նելով, օմինուկ իմն, ի ծովէ ջուր բառնահաւ
լով ամանօք, յնուշ ամանոցն, և ծովոն ոչ
նուազանալ և կամ թէ պակասիլ յորմէ
առեալն եղի։ Եւ այսպէս ասի սուրբ Եր-
րորդութիւնն բաժանիլ անբաժանաբար և
միաւորիլ որոշմամրի։ Արդ բաժանի³ ըստ դի-
մաց և միաւորի ըստ բնութեանն, ոչ բա-
ժանելն⁴ գոտարութիւն բերելով, և ոչ միա-
ւորելն ընկղմումն կամ շփոթումն⁵, այլ
որպէս որոշելով դիմացն երեխն⁶ յատկու-
թիւնք՝ միաւորելովն հասարակութիւն բնու-
թեանն և կոչմանցն⁷։ Մովին այսու օրինա-
կաւ և ի վերայ տնօրէնութեան Փրկչին
գտանին խմառատիրել սուրբ հարքն, տաե-
լով սմն ի նոցանէ։ «Ի միաւորութիւն եկին
բնութիւնքն, և առանց խառնակութեանց

1 Ա սօքօք ստոր անդեալք։ 2 Ա իմէքէ։

3 Ա բարժանի։ 4 Ա բարժանելն։ 5 Ա բնող-
մումն կամ շոթումն։ 6 Ա էրեխն։ 7 Թ կողմանցն։

Եկաց մնաց միաւորութիւննա[†], Զնոյն ինքն զբանն Աստուած առ իւրն մարմին ասացին և միաւորեալ և անշփոթ մնացեալ, որպէս ինչ ումանց թուեցաւ ասել, զմինն դիմին տալով, և զմիւսն բնութեանն, այլ միաւորութիւն անշփոթաբար[‡] ասացին գոլ զբանն Աստուած առ իւրն[‡] մարմին, զոր ի Կուսէն[‡] Եւ նմին ինքեան Աստուածն Բանի և իւրումն մարմնոյ որպէս բնութիւնն ընտանենայ[§] հասարակական, ըստ նմին և յատկական գէմն, և նոյն ինքն բոլորն իմանի միացեալ և անշփոթ մնացեալ։ Եւ զի միաւորեալն մի է և ոչ ևս երկու, մին միաւորեցելումն ոչ զանգիտէին[‡] հարքն մի անուանել դէմ՝ մի և բնութիւն։ Բայց էր երբէք ուրեք, որ և կրկին, կամ թէ և երկու զնոյն դաւանելով բնութիւնս։

Ոչ եթէ յորժամ կրկին ասէին, զմիաւորութիւնն եղծանէին ինչ ի նմա զհրաշալին խորհուրդ, և ոչ յորժամ մի ըստ միաւորութեանն ասէին, զգոյացութեան ինչ պակառեցուցանէին զկատարելութիւնն, յԱ-

† Ա անշփաբար։ 2 Բ «առ» չունի։

3 Ա բնդանենա, Բ բնդ անինայ։

4 Բ ոլ զոնգիտէին։

† Նոյն վկայութիւնը աեւ ՕՃ. Արեւոթ. հառի մէջ եր. 52։

տուծոյ բանէն՝ ասեմ և ի նորին մարմնոյն,
ոյլ կացեալ ի նմին ասէին որ էնն, և միաշ-
ցեալ անքակութեամբ և անշփոթութեամբ
ի վեր քան զմիտս եղելոցս, կացեալ ի նմին
զնանն Աստուած և զպատուական իւր մար-
մինն ասէին, և զնոյն, և ոչ այլ ինչ, անշփո-
թաբար և անքակաբար միացեալ դաւանէին.
զի ի բանումն և յիւրօւմ մարմնում տե-
սանէին և զդէմն առանձնական և զբնու-
թիւնն հասարակական. զի թէ դէմ է, այն
է, որ զբովանդակն յինքեան երևեցուցանէ
զբնութիւնն, և եթէ բնութիւն² է, այն է՝
որ բոլորապէս յառանձնեցելումն երևի³
գիմիւ Եւ յաղագս սորին այսորիկ սուրբ
հարքն խոստովանէին զծէր մեր Յիսուս
Քրիստոս մի բնութիւն և մի Որդի Աստու-
ծոյ։ Եւ համայն մի բնութիւն և մի գէմ
ասելով ի Քրիստոս, ոչ ըստ համագոյութեան
ասացին Բանին և մարմնոյն, կամ ըստ յեղ-
ման և շփոթութեան, և կամ գարձեալ ըստ
յատկան գոյացութեան, այլ ըստ անճառ և
անպարհմանալի միաւորութեան Բանին առ-
իւրն մարմին, զոր յանարատ⁴ յարգանդէ
սրբոյ Կուսին առանձնացոյց ինքեան զոչ յա-
ռաջագոյն⁵ գոյացեալն և յետ այնորիկ իբր

¹ Բ բանին. ² Ա բնութիւնն է. ³ Ա էրևի.

⁴ Բ անարատ. ⁵ Բ զոչ առաջագոյն.

ի տաճարի բնակեալ, զի սյս պպա ոչ ասի
ծնունդ Որդւոյն Աստուծոյ, այլ ծնունդ այ-
նորիկ, որ նախակաղմեալն եղեւ յարգանդիւ-
Այլ յորմէ հետէ խոնարհեցաւ մարդասի-
րաբար յարգանդի կուսին, զգենուլ¹ ասեւիք
կամ թէ միացուցանել ինքեան մարմինն Եւ-
ընդ ձեռն այնուիկ ասացեալ² եղեւ ի սուրբ
հարցն մի դէմ և մի քնութիւն մարդացե-
լոյ Աստուծոն Բանին. ոչ ըստ համագոյրա-
թեան, և ոչ ըստ պատուոյ արժանաւորու-
թեան, այլ գոյսութեանցն, ասեմ, ասուրա-
ծայնոյ և մարդկայնոյ, և որ մանաւանդ, որ
անձառն և գերահրաշն է միաւորութիւն, և
սորին աղագաւ ասին աստուածայինքն մարդ-
կայնք, և մարդկայնքն աստուածայինք-
Զի որ անտեսանելին և անշօշափելին է
քնութեամբ, առ շօշափականսն՝ մարդկային
մարմինսն, տեսաւ և շօշափեցաւ առ ի մէնջ-
եւ որ յերկրէ բոււսեալն եղեւ սակա առ ի
յերկնայինն միաւորութեան, ի յերկնից ա-
սի³ իջեալ. և զի ընդարձակագոյնս ասացից,
զի որ ըստ քնութեանն⁴ Բանն էր անմահաշ-
կան, ըստ միաւորութեանն⁵ անօրէնութեան
յանձն էառ և զմեռանելին⁶, և զբնութեամբ

1 Ա սղենուլ, 2 Ա տսացել. 3 Բ ասէ.

4 Բ բնութեան. 5 Բ ըստ միաւորութեան.

6 Բ և զմեռանիլին.

Դմահկանացու մարմինն իւր արար ընդ-ձեռն առ ինքն միաւորութեանն անմահ և անապական։ Եւ որ անրովանդակելին էր ըստքնութեան Բանն Աստուած, բովանդակեցաւ¹ առ իւրն ի մարդկանէ միաւորութեամբ մարմինն, ե. զրովանդակելին² լնութեամբ մարդկայինն առ իւրն մարմին միացուցանելով ինքեան, և անրովանդակելոյն³ իւրում արար հազորդ զօրութեան։ Ոչ ըստ փոփխման կամ այլայլութեան⁵ զայսոսիկ այսպէս ստհմանելով, այլ ըստ անձառ և անհատանելի միաւորութեանն։ Եւ զի արտաքոյ է բանի և մատածութեան առառուածահրաշն այն միաւորութիւն, մի բոնադատեացուք զսոյն բանիւ և մտածութեամիւ ըստվանդակել։⁶ Զի ոչ յարմարի նմին՝ անմահական Բանին և՛ մեռ անել և՛ անմահ մնալ, ե. մահկանացուի մարմնոյ նորո՞ մահկանացու գոր և. կինագործ, և կամ անչարչարական⁸ Բանին, անչարչարելի մնալ և ընդունել չարչարանս, և չարչարականի նորա մարմնոյն՝ չարչարելի միանդամայն և.

1 Ա բաւանդակեցաւ. 2 Ա զրոանդակելին.

3 Ա անրաւանդակելոյն. 4 Բ զօրութեանն.

5 Բ այլայլութեանն. 6 Ա ըստանդակեալ. 7 Բ ըստվանդակեալ. 7 Ա յարմարին մին անմահական.

8 Բ անչարչարական.

անչարչարելի գոլ, եթէ ոչ ամենայն հարակաւորութեամբ ընութեանն և միաւորութեանն Բանն առաջնորդեսցէ մեզ։ Զայսայսպէս խոստովանիմք զմինն ասել ըստ ընութեանն, և զմիւմն ևս զհետ բերել ըստ միաւորութեանն։

Արդ՝ այսպէս Բանին՝ որ ըստ միաւորութեանն՝ ասի չարչարելի, և եթէ ոք դիցէ զայն նմա ըստ ընութեան գոլ, Արփոսի ամենայնիւ և ամենայնի այնպիսւոյն ձայնակցեսցէ։ Նոյնպէս և մարմնոյ նորա զասելին ըստ միաւորութեանն անչարչարելի, եթէ ոք դիցէ զայն նմա ըստ ընութեան¹ գոլ, Յուլիանիտ է արդարեւ, որ այնպէսն ամբարըշտեսցէ։ Դարձեալ և զմիաւորութիւնն, եթէ ոք ըստ արժանաւորութեանն, այլ ոչ ըստ ընութեանն ասասցէ գոլ, ընդ նեստորայինսըն ի հարկէ դատապարտեալ նզովեսցիւ Նոյնպէս և ըստ ընութեամբ միաւորութիւնն՝ եթէ արտաքոյ դիցէ դիմի և անձնաւորութեան, ընդ² այժմուցս հաւասարեսցի՝ նոռըագոյն բուսեալ անպարշտութիւնս։ Ըստ նմին այսմիկ և զմինն ասել՝ և զերկուս ընութիւնս ի վերայ միոյ Քրիստոսի, եթէ ոք զմի բնութիւն ըստ ընութեան³, այլ ոչ ըստ միաւորութեան ասասցէ գոլ ի Քրիստոս։

1 Բ ընութեանն, 2 Բ ըստ, 3 Բ ընութեանն.

կամ եղիցի Արիոսի համաձայնեալ՝¹ ստացական ասելով զԲանն և զմարմին Բանին, հարկաւորեցաւ ասել մի բնութիւն զմարդկայինս, զկապակցութիւն հոգւոյ և մարմնոյ յօրինակ առնելով, և կամ Եւտիքենիտ² և Մանիքեցի, որ անստացական ասելով զԲանն և զմարմին Բանին, յանդգնեցաւ ասել մի բնութիւն Բանին և մարմնոյն։ Դարձեալ զերկուս բնութիւնսն, եթէ ոչ ըստ բնութեան³ և յօրոց եղեն նշանակելով և միայն մտածութեամբ, այլ ի միաւորութեանն զայն ասելով և բաժանաբար⁴, գտանի ասացեալ ընդ⁵ Պողոսի Սամաստացւոյ և ընդ Դիոգորի Տարսոնացւոյ մարդ տկար զՔրիստոս, միայն մերձաւորութիւն առ Բանն ունելով և յարելութիւն։ Սապէս և վասն կրկին ասելոյն ի Քրիստոս կամս և ներգործութիւնս, եթէ ըստ բնութեանն ոք զայն ասիցէ գոլ, ոչ արտաքոյ ճշմարտութեան գտանի ասացեալ, զի մի ընդ Դայիխոսի և Թէսդոսի ամբարըշտելով, անզգայ⁶, աններգործական և անկրական զմարմինն տէրունական զոր ի Կուսէն առեալ, դժոխաբանիցէ։ Իոկ թէ ըստ

1 Ա համաձայնել բստացական, բ բստացական.

2 Ա ետքենիտ. 3 Բ բնութեանն. 4 Ա և բարձանաբար 5 Բ ըստ Պողոսի. 6 Բ անսգայ, Ա անոգա.

միաւորութեան և նմին ինքեան¹ միաւորեցելումն ժպրհեսցի տալ երկուս կամս և երշկուս ներդործութիւնո, ամեննեին հեռի ի ծշմարտութենէն, և Մաքսիմոսի իներքոյ անկեալ սխալանօքն² գատավարութեացիք Քանզի ուր ապա այնուհետեւ երեւեսցի³ վեհագունին յաղթել, թէ զամենայն որ ինչ միանդամ գոյացութեանցն առ ի կատարելութիւն սրոշարար և առանձին գիտեցինք Զի թէպէտ և է ծշմարտութեամբ կատարելական և ոչ անկատար առ ի մէնջ փրկչականն առեալ մարմին, այս է հոգի, մարմին, միոս համայն գտանելով միացեալ առ Բանն Աստուած, թէ մարմինն⁴ է՝ յորում ներդործել և կրելն բնաւորեալ Բանին մարմին, և թէ միաքն՝ յորում կամելն և խորհելն բնաւորեալ փրկչական մարմնոյն⁵ միտք և ոչ ուրումն մարդոյք Զի ոչ եթէ նախկին սմին գոյացեալ համբակ յարդանդի և ապա յարակցեալ⁶ ի Բանն, այլ Բանին Աստուածոյ մարմին ընդ ուրում միացեալն եղեւ, և ոչ այլոյ ուրուք մարմին։ Եւ զի այսպէս այսպիկ ապա և ներդործելն և կրելն, որ ի մարմնումն բնաւորեալ⁷ է, որոյ մարմինն

¹ 7 Բ ինքեանք, ² Ա սղալանօքն, ³ Ա էրեւեսցի,

⁴ Բ մարմին է, ⁵ Բ մարմին, ⁶ Ա արակցեալ,

⁷ Բ բնաւորեալն է.

է, այսինքն Աստուածն Բանի մարմնացելոյն,
Ներգործելն և կրելն¹, նոյնպէս և կամելն
Բանին Աստուածոյ ասի, որ առ անքակաբար
մարդկային էր² միացեալ միտք։ Զի ինքն
Բանն Աստուած զմարդկայինն իւր մնաց
ուղղէր զկամն և ինքեան ազդմամբն զմարմ-
նոյն իւրոյ շարժէր ներգործութիւնս և կիրս,
որպէս և երաշխտականն գործի ի յերաժը-
տապետէ անտի գհնչելն և զնուագելն։ և
այս է վեհագունին յաղթելն։ Զի ամենայն
որ ինչ միանգամ և տեսանի ի տէրունական
մարմինն³, Աստուածոյ Բանին անուանեցի
դոլ և ոչ այլոյ⁴ ուրուք, ապա ուրեմն և
ներգործելն և կրելն, այլ և կամելն Բանին
Աստուածոյ, և ոչ մարդոյ ուրուք առանձինն
տեսեցելոյ⁵ ի նմանէ ասացին։ Եւ արդ մինչ
այս այսպէս, որպէս ճշմարտութեանն և ինձ
թօւին, ոչ ոք մեղանչիցէ զնոյն յեղանակ և
ի վերայ դիմի մինն անուանեցելոյ պահել,
որ զբնութիւնն յինքեան երևեցուցանէ, և
ի վերայ բնութեան՝⁶ որ ի դիմումն երևես-
ցի⁷։ Զի եթէ զներգործութիւն⁸ և զկիրս

1 ♂ ներգործիլն և կրիլն. 2 ♂ մարդկայինն էր
միացեալ. 3 ♂ մարմնին. 4 ♂ այլոց.

5 և տեսեցելոյ ի նմանէ ասացին, 6 ♂ բնութեանն.
7 և էրևեսցի. 8 ♂ զներգործութիւնս.

ի մարմնում ասացաք բնաւորեալ, իսկ զիսորհեան և գկամելն յոգւոջ բանականի, և հոգի և մարմին ոչ այլ ինչ են, այլ դէմն՝ որ ի բնութենէ բացորոշեալ. և սոքին այսոքիկ ասացեալքս հոգի և մարմին և միտք ամենայն երգը և բնութիւն ունին և զմարդկային։ Ապա¹ ուրեմն որպէս ճշմարտեցաք մին գոլ ներդործութիւն և կամն ի Քրիստոս, յանձառ և ի վեր քան զմիտս եղելոյ ի միաւորութէնէ² անտի, ըստնմին և զդէմ և զբնութիւն, յորս բնաւորեալ են ներդործելն և կրելն և կամելն. մի, և ոչ ասել երկուս բնութիւն³ և անձնաւորութիւն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ոչ ըստ էութեան, այլ որպէս ասացաք, յանձառ միաւորութենէ անտի, և ի յաղթելոյ և ի հնագանդեցուցանելոյ վեհագունին զնուաստագոյնն⁴: Եւ թէպէտ⁵ և են արդարե⁶ կատարեալ ըստ ինքեանս և Աստուածն Բանն և կենդանարարն իւր մարմին, համայն ոչ որպէս համագոյս և համապատիւս⁷ զկատարեալ առ կատարեալ մերձեցուցանելով, այլ որպէս զարարշականն ընդ արարածականումս միացեալ գոյացու-

¹ Ա ապայ. 2 Բ ի միաւորութիւն. 5 Բ բնութիւնս
4 Ա զնուաստագոյնն, Բ զնուաստագոյն.

⁵ Բ թէպէտ. 6 Ա արդար և. 7 Ա հոմագոյս և
հոմապատիւս.

Թիւն։ Սորին աղագաւ ապա¹ մի, և ոչ երկուս պատացի² կատարեալ Քրիստոս Աստուած մեր, միանալով և ընկղմելով արարաժականին յարաբչականումն կատարելութեան³։ Հատ նմին այսմիկ և եթէ բնութիւն⁴ իցէ մարդկային ի Քրիստոս և եթէ գէմ, միանալով և ընկղմելով⁵ յաստուածայնումն դիմի և բնութեան՝ մի ասի բնութիւն⁶ և գէմ ի Քրիստոս, և ոչ երկու, և յաղագս սորին այսորիկ Երրորդութիւն Երրորդութիւն և ոչ չորրորդութիւն, և միայնակ աստուածութեանն բնութիւն մի, և ոչ երկու բնութիւնք։ Զի թէ այսպէս բարեպաշտաբար և որպէս պահանջէ ուղղապաշտութիւնն զմիաւօրութեանն ամբողջ պահեսցես իՔրիստոսու զխորհուրդ, մնայ⁷ արդարեւ նոյնպէս Երրորդութիւնն Երրորդութիւն նովին միով պատուածային բնութեամբն։ Զի որպէս խոսառպահնիմք զԲաննն, որ յԱստուծոյ Հօրէ, բնութիւնունելով աստուածային՝ ունել⁸ նման և գէմ աստուածային. սապէս և ի մարմնումն նորա, որ առ ի մէնջ, տեսանի բնութիւն մարդկային, տեսանի և գէմ մարդկապյին, մանաւանդ թէ նոյն ինքն անձնաւու

¹ Բ ապայ. ² Բ ասացի. ³ Բ կատարելութեանն.

⁴ Բ բնութիւնն ⁵ Ա բնդղմելով. ⁶ Ա բնութիւնն. ⁷ Ա մնա. ⁸ Ա ունիլ.

բեալն դէմ բնութիւն, և կամ թէ ի բնու-
թենէ, և կամ ի բնութեանց, որոց ոչ է
հնար ոչ գոլ և ոչ ասիլ բնութիւն, որպէս
բազում անգամ ասացաք։ Զի թէ զդէմն
ասասցես գոլ ի բանումն՝¹, որ յԱստուծոյ
Հօրէ, և ի մարմնումն նորա, որ ի մէնջ՝ ա-
սացեալ լինիս ընդ նմին կամ թէ զնոյն և
բնութիւն աստուածային, բնութիւն և մարդ-
կային։ Իսկ եթէ բնութիւն անդէմ և անդոյ
ասասցես գոլ, կամ զԲանն կամ զառ ի
մարդկանէ զմարմին նորա, գտանիս ասա-
ցեալ և ոչ ինչ, ոչ գոյ՝ և ոչ բնութիւն։ Զի
և այսոքիկ այսպէս, զինչ արգելու զմեղ²
ձայնակցեալ սուրբ հարցն ասելով՝ մի դէմ
Քրիստոսի ըստ միաւորութեանն, մի և բնու-
թիւն ի նմա ըստ անեղ³ և անշփոթ խառն-
մանն, և զայս ոչ ըստ համագոյութեան⁴, այլ
որպէս ասացի. ըստ որում ուսուցին զմեղ
սուրբ հարքն, խառնիլ և ընկղմիլ⁵ մարդ-
կայնոյն յաստուածայնումն։ Արդ՝ եթէ ասէի⁶
զմիաւորութիւնն գոլ ի Քրիստոս ըստ պա-
տուոյ միայն և փառաց և ճոխութեան և ար-
ժանաւորութեան, ոչ կարէի ասել Քրիստոսի
մի բնութիւն, որպէս ոչն կարէ ասել նես-

¹ Բ ասասցիս գոլ ի բանում. 2 Բ զմինչ.

³ Բ ըստ յանեղ. 4 Բ ըստ համագոյութիւն.

⁵ Ա ընկղմիլ. 6 Ա ասէր.

տորիոս և նորին համախոհքն։ Եւ դարձեալ
եթէ ասէի ըստ համագոյութեան, այլ ըստ
ոչ միաւորութեան զմինն ի Քրիստոս, ոչ
կարէի ասել զիանն Աստուած մարդ լեալ
ի Կուսէն ճշմարտապէս և անյեղաբար¹, ըստ
Եւտիքեայ և Յուլիոսի։ Եւ արդ զի ցուցաք²
զասելն սուրբ հարցն, և որպէս ասացին ու-
նել միոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ միոյ
բնութեամբ, բաւական է այսքան, որ լսե-
լոցն՝ լսւիցէ և որ արհամարհելոց իցէ՝ ար-
համարհիցէ³։

Սակայն մեք յառաջ քան զայս յիշեցաք
և զայն ևս, թէ տէրունական մարմինն ըն-
կալաւ ընդ ձեռն միաւորութեան Բանին
որպէս զգոյանալն, նոյնպէս և զակիզբն և
ձեւ և կերպարան և անձնաւորութիւն⁴։ Ընդ
նմին ասացաք և զայս ևս, եթէ են ոմանք,
որ ըստ բնութեան գտանին ասացեալ ի վե-
րայ Փրկչին և են որ ըստ միաւորութեան,
ընդ ձեռն որոյ և աստուածայինքն⁵ ասին
մարդկայինք և մարդկայինքն աստուածա-
յինք։ Ընդ սոքաք եղաք և զայն ևս, եթէ
կենսատու մարմին Աստուածն Բանի՝ յար-

1 Ա անյեղաբար ըստ Եւտիքեա, Բ յանեղաբար
ըստ Կտիքեայ, Բ շվոթուած է անշուշտ. 2 Ա ցուցուք.
3 Ա «և որ արհամարհելոց իցէ՝ արհամարհիցէ» չունի.
4 Ա անձնաւորութիւնն. 5 Ա աստուածայինք.

գանդէ և ցիւաչն և մինչև յաւիտեան ասի
շարչաբնլի և մահկանացու ըստ բնութեանն,
և անշարչարելի և անմահկանացու ըստ միա-
ւորութեանն։ Այլ թերեւ տարակուտեսցի
ոք, թէ երկողունց սոցա ի վերայ միոյն միան-
գամայն ի միասին և ի միում ժամանակի
հանգիպել ոչ է հնար. յաղագս այսորիիկ
փոքր ի շատէ ինչ և հարցցուք, եթէ շարչա-
րանքն և մահն, որ վասն մեր ընկալաւ
ծէրն, աստուածային ասին այսորիկ, եթէ
մարդկայինք։ Այսպէս հաւանեալ եմք, եթէ
և՝ աստուածայինք ասին և՛ մարդկայինք, զի
զոր օրինակ մարմինն տէրունական բնու-
թեամբ է մարդկային, իսկ միաւորութեամբ
աստուածային, այսպէս ապա և շարչարելին
և մահկանացուն, և անշարչարելին և ան-
մահկանացուն յարմարեսցին ի վերայ միոյն
միանգամայն գոլ, ոմն ըստ բնութեան, և
ոմն ըստ միաւորութեան. բայց զի յայտնա-
գոյն ևս ասացից ² երկրորդեսցուք զեռյե
վերստին այսպէս և ըստ այսմ օրինակի-
նայց նախ տեսցուք ³ եթէ մարմինն ծեառն.
և Աստուծոյն մերոյ, զոր օրինակ, ի մարդ-
կանէ և մարդկային գոյ, ըստ ³ նմին և բնա-
կան մարմին ասի, ունելով յինքեան զբնա-
ւորականն, եթէ ոչ։ Արդ՝ եթէ ոչ է բնա-

¹ Ա թէրեւ. ² Ա ասացիս. ³ Ա նախատեսցուք.

կան՝ ապա և ոչ մարդկային¹, այլ երկնային մարմին, իսկ եթէ մարդկային, ապա և բնական մարմին, և եթէ բնական, յայտ է թէ գոյ ի նմա և բնաւորականքն, այս է հոգեկանքն, և մարմնականքն. հոգեկանքն արտամութիւն, երկիւղ, բաղձանք, ցասումն, անդիտութիւն. իսկ մարմնականքն, քաղց, ծարաւ, աշխատութիւն, քուն, և գլխովին իսկ շարշարական գոյ և մահկանացու։ Արդ՝ Բանն Աստուած զգենլով մարմին անձնաւորական բանական ի սրբոյ² Կուսէն, ոչ ապաքին բանական զգենու³ մարմին և հանգերձ բնաւորականօք։ Եւ որպէս ոչ երարձ⁴ կամ փոխեաց Աստուածն Բան զկնի անքակ միաւորութեանն զմարմինն, ըստ նմին և զբնաւորականսն ոչ երարձ⁵ յիւլմէ մարմնոյ, զոր ի Կուսէն։ Բայց ոչ եթէ վասն զի բնականի արարաք յիշումն տէրունական մարմնոյն, նորին աղադաւ և զառ ի յերկակացն շամբշացեալ⁶ ոք ի ներկս մղեսցէ ծնունդ ըստ Աղքիսնի աղքատ մտածութեան. օ՞ն անդր, մի եկեսցէ երբէք և ի միտս ուրուք այսպիսի անտեղի մտածութիւն⁷, զի միայն ի Հոգւոյն սրբոյ և ի Կուսէն

1 Ա մարդկաին. 2 Բ ի սուրբ. 3 Ա սգենու.

4 Ա էրարձ. 5 Ա էրարձ. 6 Ա շամբշտացեալ.

7 Բ մտածութիւնն.

եղեւ գոյացեալ ոչ նախկին, քան թէ Բանին
միաւորութեամբ զգոյացութիւն ընկալեալ¹։
Եւ վասն զի Բանիւն և նոյն ինքն Բանն
եղելութիւն մարմնոյն իւրոյ զոր ի Կուսէն,
յաղադո այնր ապա ինքեան զօրութեամբ
զհամայնսն որ² ի մարմնումն զբնաւորակա-
նացն ընդունակս ուղղէր և կառավարէր։
Ոչ փոխանակ գոյլոյ բնականի մարդկային³
մտացն Բանն Աստուած, քաւ լիցի, պապան-
ձեսցի աստանօր Ապօղինար, այլ միջնորդե-
լովն մարդկայնովն վարեցեալ մտօք Բանն,
զբոլորսն մարմնոյն իւրոյ մասունս իւրում
աստուածային հնազանդեցուցանէր կամաց։
Այսպէս և ըստ այսմ օրինակի բնական են
ի մարմնի աչքն, և բնաւորեալ են ի նոսա
տեսաւորութիւն, իսկ Բանն Աստուած, որ
և ընդ զգալոյն⁴ էր անքակաբար միացեալ
և ընդ իմանալոյն, առաջնորդական գոլով
բոլորիցն մարմնոյն մասանցն առ ի զերկա-
քանչիւրսն շարժեալ, այս է՝ աչացն զտե-
սանեն, լեզոյն զբարբառելն. այսպէս և
լելեացն և չօշափելեացն, ևս և ճաշակե-
լեացն⁵ և գլխովին իսկ մտացն առ ի յի-
մաստիցն յարձակմունս, ոչ գատարկս և

¹ Ա ընդակալեալ. ² Ա զհամայն այն որ. ³ Ա բնա-
կան ի մարդկային. ⁴ Ա սգալոյն. ⁵ Ա «և չօշափե-
լեացն» ևս և ճաշակելեացն» բառերը չունի.

անգործս թողլով զնոսա յանցնիւրոցն¹ ներգործութեանց, այլ նոքումք զգայական մարմնոյն մասամբք և մտօք իմացականօք գաստուածային զօրութեանն ի գործ արկանէր զարուեստ։ Եւ յաղագս այսորիկ և ընդձեռն այսգունի անճառ միաւորութեանն, մոռանայր մարմինն զբնականն իւր շարժմունս, զի յաստուածայնումն է ծածկեալ և ընկղմեալ զօրութեանն², ոչ ի բաց բառնալով զնոսա Բանն Աստուած յիւրմէն մարմնոյն, զի և ոչ զմարմինն՝ յորում նոքայն, այլ յաղթելով վեհագունին, ոչ տայր թոյլ մարմնոյն զիւրն բողբոջել զբնաւորականսն։

Եւ թէպէտ և կրեաց ի մարմինն իւր Բանն Աստուած, յորժամ կամեցաւ, զշարչաբանս և զմահ ճշմարտութեամբ, համայն յիւրմէ³ անբաւ միաւորութենէն ոչ առնելով զնաթափուր, չմերկանայր ինմանէ և՛ զանմահութիւնն իւր և՛ զանշարչարութիւն, և նորին աղագաւ և մեռեալ ըստ բնութեան և կենագործող ըստ ոչ բնութեան⁴ փրկչականն հրաշագործիւր մարմին, և այս է զոր ասէաքն⁵ զոմանս զբիստոսէ ասացեալսն լինել ըստ բնութեան։

Արդ՝ յանձն առնոյր Փրկիչն տանել ի

1 Ա. և Բ. յանցն իւրոցն. 2 Ա ընդզմեալ զօրութեան

3 Բ. յիւրմէն. 4 Բ ըստ բնութեանն և կինա-

գործող ըստ ոչ բնութեանն. 5 Բ տսիւքն.

մարմին իւր զհարուածս և զվերս և զմաքդ-
կային ըստ մարդկան, այս է՝ ի հարուածոյն՝
և ի բնեռելոյն՝ վիրաւորելն։ Եւ թէպէտ
այսպէս ըստ կամելութեան թանն Աստուած
կրեալ² զայսոսիկ ի մարմինն իւր, այլ ոչ
եթէ ընդ ձեռն սոցա և միաւորութեանն
լուծեալ անլուծանելի կապարան, այլ նոյն-
պէս որպէս նախքան զվերսն և առ վիրօքն
և զկնի վիրացն անանջատակի կացեալ, մնա-
ցեալ միաւորութիւնն ։ Աշխատէր⁴ Փրկիչն
ի մարմինն իւր մարդկարար, որպէս. և ա-
սացին հարքն, այսինքն տալով ժամանակ
բնաւորականին զիւրն կատարեալ ի մարմին,
և այն՝ յորժամ կամեցաւն, և ոչ որպէս
ասացն Սևերոս, եթէ ոչ կամելով և յիւրում
և եթ սահմանել ժամնւն, այլ ըստ պիտոյն
պահանջելոյ, և հանապազօր ի հարկի կա-
ցեալ մարմնոյն բնաւորականացն ի ծննդենէն
մինչեւ ի գերեզմանն և ցյարութիւնն,³ յոր-
մէ գտանի ասացեալ զմարմինն փրկչական
փոփոխելի և ապականակիր և յանկատարե-
լութենէ եկեալ ի կատարելութիւն։ Երկե-

1 Բ «ի հարուածոյն՝ ցաւոյն զգացումն եւ ի խո-
ցուածոյն և ի բիեռելոյն»—չեղագրով բառերը
Ա չունի, ներմուծուած ենք համարում.

2 Ա և Բ կրել. 3 Բ միաւորութիւն.

4 Ա և Բ աշխատիր. 3 Ա դյարութիւնն.

չէր և արտմէր մարդկօրէն Տէրն ի մահ
խաշին գոլով, հանդերձեալ ազդելով մարդ-
կայինն ¹ իւր ոգւոյ զիւրսն կատարեալ բնա-
ւարական հաւասստեաւ. Ոչ թէ միայն բանիւ
անօրինեալ զայնոսիկ ² կամ թէ նմանու-
թիւն գործոյ և ոչ գործ ճշմարտութեան
ցաւցանել, որպէս և թուեցաւ ամիարշտել ³
Թրակացւոյն Եւտիքեայ և նորուն ծննդոցն:
Ընդունի զքաղցնուկն ի մարմին իւր Տէրն և
զծարաւելն, ոչ օտար ինչ յեղանակու ձևա-
ցուցեալ, այլ մարդկօրէն և ճշմարտութեամբ
կատարելով. այս է՝ բնականի կերակրողա-
կան մասինն կամեցեալ ընդունել տալ զպա-
տահումն: Բայց օակայն ընդ ձեռն միաւու-
րութեանն որպէս կոչի մարմինն աստուա-
ծային, այսպէս և կիրքն մարդկայինք կոչին
աստուածայինք, յաղագս որոյ և Աստուածն
Բան ասի համբերեալ կրից մարդկայնոց մարմէ-
նականաց և հոդեկանաց ⁴, ոչ ըստ բնու-
թեան ⁵, այլ ըստ անճառ միաւորութեանն,
և զի անճառ է և գերահրաշ, ապա և ճա.
ռելն անկարելի ⁶, բայց այնքան, որքան հա-
մարձակեսցի ոք երևելեզրս ձգտել ⁸ յանե-

¹ Բ մարդկախն. 2 Բ զայսոսիկ

³ Բ ամբարշտիլ. 4 Ա հոդէկանաց.

⁵ Բ ըստ բնութեանն. 6 Ա անկատարելի.

7 Ա յայնքան. 8 Ա ձկտել, Բ ձգտիլ.

բեսյթան, և զգալի լուսովս զիմանալին քատակել լոյս։ Զի որպէս վայելեցուցանէր զմարմինն իւր Բանն Աստուած յաստուածային բնաւորականսն, ընդունէր և ինքն ի բնաւորականաց անտի մարմնոյն իւրոյ, զի որ անտեսանելին¹ էր ըստ բնութեան և անշօշափելին, եղեւ ի միաւորութենէ անտի ականատես մարդկան, և ի ձեռաց մարդկան գտաւ չօշափեալ, և զօրմէ ասէր մարդարէն։ «Աստուած յաւիտենական ոչ քաղցիցէ և ոչ վաստակեացի» †, ընդ ձեռն միաւորութեանն ընկալաւ² զքաղցն և զծարաւն և զվաստակելին, և որ անքուն ակամի պահէր զիսրայէլ, ըստ բնութեան ննջէր, ընդձեռն միաւորութեանն անչարչարելին և անմահն չարչարի և մահու համբերէ չարչարելովս և մահկանացուաւն իւրով մարմնովս։ Ըստ սոցին այսոցիկ և իւրումն հազղորդ առնելով զմարմինն իւր բնաւորականաց Բանն, տեսանելին կարողութիւն ոււնելով և աներևոյթ՝ չօշափելին ըստ բնութեան լինէր երբէք, որ և ոչ ոք կարէր արկանել ի նա ձեռս. ունողն³ ընդդիմահարական բնութիւն զգեցեալ լինէր և աստուա-

1 Բ անտեսանելի. 2Ա ընդալաւ. 3 Բ ունօղն.

† Ես. Խ. 28:

ծական¹ անընդդիմահարութիւն կնքելոյ
գերեզմանին ներքուստ արտաքս ելանելով,
և արտաքուստ իներքս մտանելով դրօքն փա-
կեցելովք, զբաղցականն և զծարաւականն²
ըստ բնութեան իւրում հաղորդ առնելով
աստուածային անկարօտութեանն, մահկա-
նացուն կենդանի և կենդանարար, երկրա-
յին և երկնային, և յարդանդէ ելեալն մօր՝
նստեալ ընդ աջմէ մեծութեան ի բարձունս.
և այս այսպէս Բայց եթէ զիարդ նոյն ինքն
ճառելին և ի ճառելն մերում զնա յան-
ճառութեան և յանսահմանութեան ելանէ
սահման, ասասցուք դուզնաքեայ ի վերայ
այսորիկ, որքան ասել հրամայէ Բանն, յա-
զագս որոյ բանս, և զի ի վերուստ սկսայց՝
առնելով աստուածաբանութեանս առաջար-
կութիւն։

Խոստովանելն մեր Հայր անսկիզբն գոլ՝
զի ոչ⁵ յումերէ, և զՈրդի և զՀոդի ոչ ան-
սկիզբն՝ զի ի Հօրէ է, այսոքիկ ճառելիք մեզ
եղեն։ Իսկ զիարդ ոչ երիցագոյն⁴ Հայր,
յորմէ Որդի և Հոգի, և կրտերագոյնք⁵, որ
ի նմանէ, և թէ որպէս ոչ երեք⁶ անսկըզ-
բունք, որովհետեւ անժամանակարար ընդ

1 Ա զաստուածական. 2 Բ զծարաւական.

5 Ա «ոյ» չունի, ուստի և անմիտ.

4 Ա էլիցագոյն. 5 Բ կրտերագոյն. 6 Ա էրեք.

սկզբանն Ուղի և Հոգի, այսոքիկ ամենեքեան
անճառելիք մեզ և անհետազօտելիք:

Դարձեալ՝ ասեմք ծնող գոլ զՀայր Որդ-
ւոյ, և առաքող¹ Հոգւոյ, բայց թէ ընդէք
մի և նոյն սկիզբն² ոչ նմանապէս և նոյն օրի-
նակ երկոցունց գոլոյն պատճառ, և թէ Յ
ընդէք վասն զի երկոքինն ի միոջէն՝ գմի ոչ
ունին զյատկութեանն զանուն և զկիր, կամ
որդիք երկոքին և եղբարք, և կամ թէ
երկոքին հոգիք, անհասանելիք մեզ սռա և
յոյժ լուելիք:

Խոստավանիմք դարձեալ՝ առաքեալ
զԲանն Աստուած յԱստածոյ Հօրէ և իջեալ
յարդանդ սրբոյ Կուսին Մարիամայ՝ լինելով
ի նմանէ մարդ ծշմարտապէս և անյեղաբար⁴.
և թէ զիարդ զհայրականն ոչ թափուր թագ-
լով զփառաց աթոռ, գտանիւր նոյն ինքն
լիապէս և յարդանդի Կուսին, և զայս ոչ
ունիմք ասել և ոչ միավ ինչ իրօք:

Միանալ ասեմք դարձեալ բնութեանըն⁵
անստացականի և ստացականի յարդանդի
Կուսին անշփոթաբար և անբաժանապէս⁶,
ոչ զմիաւութիւնն շփոթութիւն, և ոչ զան-
շփոթութիւնն բաժանումն⁷ ինչ իշխեմք ա-
սել կամ խորհել:

1 Ա առաքօղ. 2 Ա սկլիսբն. 3 Ե թէ. 4 Ա անյեղաբար. 5 Բ բնութեանց. 6 Ա անբարժանապէս. 7 Ա բարժանումն

Առ այսպքիւք խոստովանիմք զՈրդի
ծնեալ մարմով ի կուսէն, զկուսութիւնն ոչ
լուծանել զծնողին, և համայն ոչ վատն կու-
սութեան ։ ծնողին գնչմարիտն նորա ու-
րանալ կարիցեմք զծնունդ, և ոչ յաղագս
ծննդեանն ճշմարտութեան ։ կուսութեանն
լուծումն իշխիցեմ ասել ծնողին ։

Ասացաւ դարձեալ ի գիրս իւղով և
մեղաւի ։ սնուցողացն սնանիլ ձեռաց զՓըր-
կիչն ։ և ի ստեանց մօրն լինել կաթնաբոյժ,
այլ և ճաշակելով ուրեք երբէք ընդ աշա-
կերտան իւր. իսկ զոչ գրեալսն և զոչն յու-
մեքէ ճառեալսն, որք զկնի սոցա պատահեն,
և ոչ ճառել մեզ իրաւացի է։

Նոյնպէս և զարգանալն ի հասակ մարմ-
նոյ ասսացին զնմանէ գիրք, իսկ զսորին հա-
կառակն ոչ իշխեմք ի ներքս ածել զնուա-
զութիւնն, զոր օրինակ, և ոչ առ եղելու-
թեամբն զապականութիւնն, զի ոչ գրեցան։
Պատմեցին աւետարանագիրքն զնմանէ և
քաղցնուլն և ծարաւելն և ննջել ։ և ար-
ասասուել և աշխատել և տրոմել և զայ-
քանալ և երկնչել և անգիտանալ, յաղա-
գս որոյ ճառելիք մեզ և հաւատալիք առ

1 Բ կուսութեանն. 2 Բ ճշմարտութեանն.

3 Ա ծնողին. 4 Ա և Բ մեղւի. 5 այսպէս երկու
ձեռագլուխն էլ. 6 Ա աւետարանգիրքն. 7 Բ ննջելն.

ի նոցանէ պատմեալքն։ Իսկ զիարդ կամ որպէս ի կրելն զմարդկայինսն և մարդկաբար նոյն ինքն և գեր ի վերոյ մնայ՝ աստուածաբար կրիցն, այլ և զառ ի կրիցն զօրացուցիչ զվտանդեալմն, լուռ լինել, զոչ կարելիսն² չճառել իրաւացի է, քան թէ ճառել։ Զարչարեցաւ ճշմարտութեամբ Փըրկիչն և մեռաւ, դրեալ է. բայց թէ որպէս չարչարեալն և մեռեալն զմերն խափանեաց իւրովս զչարչարանսն և զմահ, և կամ թէ զիարդ նոյն ինքն և՛ չարչարեալ և՛ անչարչարելի մնացեալ և անմահ մնալովս մեռեալ, անճառելիք մեզ այսոքիկ և անասելիք, համայն որպէս ճառելովս պատուել կարծիցեմք զՓրկիչն, ևս առաւել յանճառելիսն լուռ լինելով բարեպաշտել համարեսցուք։

Եջ ի դժոխս և եղաւ ի գերեզմանի, և զի պարծէր բանսարկուն դժոխոց ի ներքոյ արկանել⁵ և ապականութեամբ զմերս ծախել զբնութիւն, Եջ ի նոսա Տէրն, զի զրոնաւորին շիջուսցէ զալարծանս, և յարդելարանացն վերածեսցէ զարդելեալմն։ Եջ առ նոսա՝ ոչ մերկ աստուածութեամբն, զի մի իշխանութեան գործ համարեսցի յաղթութիւնն, այլ հանդերձ երկակօքն՝ հոգւով և

1 Ա մնա. 2 Ա զոչ կարելիցն. 5 Բ անկանիւ.

մարմնով, զի ցուցցէ բանսարկուին անպարտելիս և անըմբոնելիս նոցա ի Սաեղծողէն ստեղծուածն և զօրութեամբ տիրել կարացեալ։ Այլ ի ատունկանելոյ անտի ձգտել մինքն՝ զիշխանութիւն¹, լինքն կարծելոյ իշխանին, և ի ձեռն յանցանացն ընկղմել ի գժոխս պատկերին և յապականութիւն։ Իսկ նախատպին զգեցեալ և անարատ ըստ առաջնոյն ցուցեալ ոչ թէ միայն յազթել արար այնմիկ, որ յազթելն համարէր, այլ և էլոյծ զօրութիւն մահու, զդժոխոց և զապականութիւն մահու։ Իսկ թերեւս հարցանել ումէք² կամք իցեն, թէ ընդէր ոչ զի զմահն էլոյծ Տէրն, որպէս և զդժոխս և զապականութիւն մահուն հաղորդ լինելով երարձ³ ի մէնջ, իսկ զդժոխս և զապականութիւն միայն երարձ⁴ և խրամատեաց, ոչ ևս յանձն առեալ ընդ նոքօք լինել։

Ասել պատրաստ եմ զօրացեալ յԱստուծոյ. բայց նախկին տեսցուք զայս, զի ամենայնքն, որք միանդամ տնօրինեալք եղեն ի Տեառնէ ի մարդիկ, յերկուս բաժանքն⁵, ի կրական և ի ներդործական. կրականք են զորս յանձն իւր ընկալեալ⁶ տարաւ

1 Ա զի իշխանութիւն. 2 Ա ումէք. 3 Ա երարձ.

4 Ա էրարձ. 5 Ա բարժանին. 6 Ա ընդալեալ.

Փրկիչն զհոգեկան¹ և զմարմնական կարիսն²,
որը մարդկայնոյս են բնութեան պատահ~
մունք, որով մարդասիրաբար կարեկցեալ³
մեզ Տէրն, և ընդ ձեռն նոցուն և զմարդե~
ղութեան իւրոյ հաստատէր զճշմարտութիւն,
այլ և վարդապետէր նոյնգունակ մեզ առ
ի յօգուտ⁴ միմեանց նոքիմք բարեձեանալ
կրիւք։ Ե միւս ևս այլ ի փրկչական կրիցն,
որք ոչ մարդկային բնութեանցս բերք, այլ
պատուհաս ընդ յանցանացն յԱրաշէն մեզ
եղեալ եղե՛ մահն, զոր ոչ ոք յերկրածնացս
քակել զնա կարաց ի բնութենէս, մինչ ոչ
արարչական ձեռն, որ կապեաց զնա ի մեզ,
եկեալ ինքեամբ⁵ արձակեաց, յինքն առնե~
լով զկապանան մահու։ Խսկ ներգործականք
են, որ յայլմէ առ այլս ի զօրութենէ նոցունց
անցանէ օգտութիւն⁶, որպէս կոյրքն գոր~
ծով ի հրամանէ Տեառն ընկալան զտեսա~
նելն⁷, և այլքն մի ըստ միոջէ։

Արդ՝ զայսոսիկ, զոր ասացիս, յառաջ
քան զկամաւորաբարն իւր մեռանել⁸, կա~
տարեաց ի մարդիկ Տէրն, խսկ զապականու~
թեանն⁹ բարձումն և լուծանելն զդժոխ,
զկնի մահուն ի բնութենէս խափանեաց, ի

1 Ա զհոգէկան։ 2 Բ կարիսն։ 3 Ա կարէկցեալ։
4 Բ առ ի օգուտ։ 5 Բ ինքեամբք։ 6 Ա աւկտութիւնն։
7 Բ տեսանեն։ 8 Բ մեռանիլ։ 9 Ա զապականութիւնն։

գերեզման իշանելով՝ զապականութեանն քակեաց զբնութիւն, և այս յուսով և յապառնիս¹ ունի զեղոցեալն², և երթալովն ի դժոխս՝ զդժոխոցն ամրութիւնս քակեաց։ Բայց թէ Էր աղագաւ վասն նորա ասացաւ շթողանիլ ոգի նորա ի դժոխս և ոչ մարմնոյ նորա տեսանել զապականութիւն †, այլ զիհաղցաւ ի նոսա, ոչ եթէ սակս ընդ նոքօք զիւրն արկանելով մարմին և անձն, քաւ լիցի, այլ առ ի թափել և ազատել ի նոցանէ զծնունդս առաջնոյ Աղամայ³։ Եւ այսպէս գտանին երկոքեան ճշմարտեալք ի վերայ Փրչին մերոյ ասացեալքն. մերձեցաւ ի տեղին ի ձեռն ծածկութին՝ և ազատեաց ի ձեռն ամենակարող⁴ ինքեան զօրութեանն, և ոչ միայն այս, այլ զի և յայլն մի ըստ միոջէ ի տնօրինականսն զումանս աստուածապէս և զոմանս մարդապէս կատարելով։ Յղացեալ եղեւ յարդանդի կնոջ ինն ամսեայ⁵ ըստ օրինի մարդկան իսկ ի կուսէ և թարց մերձաւորութեան առն, ոչ մարդկօրէն, այլ ըստ աստուածային զօրութեանն։ Ծնաւ ի

1 Ա ապառնիս. 2 Երկու ձեռն..ն էլ այսպէս, տես նաև Հայկազ. բառ. եր. 656. 3 Ա Աղամա.

4 Բ ամենակարող. 5 Ա ինն ամսեա.

ինոչէ ըստ կարգի ծնիցելոցն ի մարդկանէ, խակ զինի ծննդեանն կոյս պահել գծնողն¹ և կաթնաբուխ ունել առինս, ոչ ևս ըստ մարդկան, այլ աստուածային այս հրաշա- ժառութեան դործ, զեզերութիւն և զահումն հասակի յանձն առնելով տնօրինաբար, խակ գնուազութիւնն և զապականութիւն ոչ ընկա- քաւ² աստուածավայելլաբար, մեռու զմարդ- կայինն և ըստ մարդկային, և զմահ մե- ռոյց³ ըստ ինքեան անմահական զօրութեանն։ Բայց խնդիր էր այս, թէ յազագս որոյ պատ- ճառի զմահն, որ⁴ ապականութեան պառաջի գնէր մեզ, յանձն առնելով⁵ անցոյցն զնա- ի մէնջ Տէրն, իսկ ապականութեանն և դժու- խոցն՝ միայն երթալովն ի տեղիսն⁶ հրաման- տուեալ բառնալ։ Նախ առաջին՝ զի ոչ էր ապականութիւնն և դժոխք մասն մարդկայ- նոյս⁷ բնութեանն, զորս և ոչ ընդունել առ- ինքն իրաւացոյց, մարդ եղեալ վասն մեր Աստուածն Բան։ Այլ և ոչ մահն ըստ բնու- թեան⁸ տնկեալ ասեմք ի մեզ Ատեղին⁹, թէպէտ և ի սահման մարդոյն զսա շարաւ- բերեալ կամք եղեն արտաքնոցն մակացա-

1 Բժնողն։ 2 Առջ ընդպալաւ աստուածավաելլաբար։

3 Ա մեռուց։ 4 Ա զմահն նորա ապականութեանն։

5 Բ առնլով։ 6 Բ ի տետիսն։ 7 Ա մարդկանոյս։

8 Բ բնութեանն։ 9 այսպէս իրկու ձեռ։ Էր.

մանացն, այլ պատուհաս ընդ յանցանացն,
ոք իրաւագէս դառէր զմարդն ի վերտյ ըն-
գից¹ ընութեանս:

Արդ՝ թէպէտ ամենեքեան սորա, որպէս
ամենեցուն քաջայայտ է, ի մեղացն յառաջ՝
եկեալ երեւեցան, սակայն անուն մահուն և
նախ քան զմեղսն յԱրարչէն յիշեցեալ² եղեւ.
վասն էր արդեաւք, զի երկիւղն³ սորա իբրեւ
ամրագունիւ պարսպաւ օրինադրեալն մարդ
աղանդանեսցի, որպէս զի զարհուրեալ ի
ազաւնալեաց մահուն՝ անպարտելի⁴ ի դժրաւ-
նաց թշնամնոյն եղիցի, և այսպէս ահարկուս
այս անուն եղիցի նմա պատճառ զանմահա-
կանն գտանել կեանս: Արդ եթէ էր զդաս-
մացեալ երկիւղիւ⁵ համբաւուն, զարդեանց
իրիս ոչ էր ընկալեալ⁶ զփորձ, այլ զի բանիւն
ծչ դաստիարակեցաւ նախ քան զյանցանսն,
ընկալաւ⁷ իսրատ զկնի մեղացն ի գործոց
ամսաթիւ:

Արդ՝ նոյն սա մահս յառաջնում կեն-
ցաղին պատրաստեցաւ լինել ի ձեռն համ-
բաւոյն իւրոյ մարդոյ օգտակարութեանն⁸

¹ երկու. ձեռն..ն էլ այսպէս. 2 Ա յիշեցել.

3 Ա արդեաւք զի էրկեղն, 4 արդիօք . .

4 Բ անպատրելի. 5 Ա էթէ էր սդաստացեալ

երկեղիւ. 6 Ա ընդալեալ. 7 Ա ընդալաւ.

8 Ա օկտակարութեանն.

պատճառ, իսկ յերկրորդումն գործն առ Ենմանէ ածէր զմարդն յուղղութիւն։ Եւ անդիսուսափելն¹ ի մահուանէ տայր զյաղթեանն² նպատակ, իսկ աստ զառ ի մահն ունելով բաղձանս. զի անդ մեղքն զմահ ծնանին և ի մահուանէն լինէր կենացն լուծումն, իսկ աստ ի մահուանէ անտի մեռանին մեղքն և կենացն անլուծից սկիզբն եղանի, այլ և հանդերձ գերազանցութեամբ, վասն զի անդէդիս հողածինն զմահ, իսկ աստ³ երկրորդն մարդ ճաշակեաց զնա Տէրն յերկնից⁴ եկեալ։ Արդ՝ այսպան և այսպիսի իրօք յառաջնումն և յերկրորդումս սա զօգնականութիւնս մատուցանէ մերում բնութեան, իսկ ապականութեան և դժոխոցն վայր ոչ մի յայնպիսեացն մեզ ոչ եղեալ սպասաւոր, այլ և հակառակ բնութեանս ընդդէմ շարժեցեալ։ Վասն որոյ զմահն, զոր⁵ հնարեցաւ ճարտարապետն բնութեանս կենաց մերոց կազմել դեղ, էարբ անդուստ և ինքն։ Եւ այսէ ասացեալն՝ թէ վասն մեր մելս արար†, այսինքն վասն զմերոց յանցանացն պարտիս իւրովն հատոյց անմեղութեամբն առ Հայր,

¹ Ա խօսափելն. ² այսպէս երկու ձեռքն էլ.

³ Բ իսկ ապա երկ ... ⁴ Բ երկնից.

⁵ Ա զմահն նոր հնար ...

† Բ. Կողմթ. Ե. 21.

և զի վասն մեր և ոչ ընդ անձին առ յանձն
զկամաւորն մահ։ Ասացաւ զնմանէ, թէ
մեղս ոչ արար, և զի յաղագս զմեզ փրկելոյ
և ոչ զինքն ընդ նորօք արկանելոյ սակա էջ
ի տեղի դժոխոց և ապականութեան, ասա-
ցաւ⁴ զնմանէ թէ՝ ոչ ոգի նորա թողաւ ի
դժոխա, և ոչ մարմին նորա² ետես զապա-
կանութիւն⁵։ Արդ այսոցիկ այսպէս առ
ի մէնջ, մանաւանդ թէ ի հանոր բարե-
պաշտաց խոստովանելոց։

Ասացուք գոյզն ինչ և առ այնոսիկ, որ
տարակուսին և ասեն, թէ մինչ կատարեալ
ասեմք ի Քրիստոս ըստ ամենայնի զմարդ-
կայինն, որպէս և զաստուածայինն, զինդրդ
և ոչ երկու գոյացութիւնք ասին ի Քրիս-
տոս, առանձին և զատաբար գոյացութիւն
մարդկային զինի անճառ միաւորութեան։

Ո՞վ դուք, զսր օրինակ մարդկայինս մեր
հոգի միաւորեալ ի մարմնի, ոչ փոխէ զնա
յանմարմնութիւն, այլ և ոչ ինքն ի մարմնի
փոխեսցի, և համայն ոչ ասին երկու գոյա-
ցութինք, այլ մի գոյացութիւն և մի մարդ,
այսպէս իմասցիս և ի վերայ Քրիստոսի։ Զի-
պահելով Աստուածն Բան զմարդկայինն կա-

4^թ զասացաւ. 2^թ նորայ. 5^թ զապականութիւնն.

† Սաղմ. ԺԵ. 10, Գործք առ. Բ. 31.

տարելապէս, մնաց և ինքն նոյնպէս։ որպէս
և էրն, այլ միացուցանելով առ ինքն անճա-
ռապէս զմարմնոյն իւրոյ գոյացութիւնք և
ոչ անձնաւորութիւնք երկու։ Ոչ եթէ
նուազեալ ինչ՝ կամ ծախեալ յաստօւածայ-
նոյն մարդկային իբր գոյզն ոք գոլորշիք²
երկրի յարեգական ճառագայթից, այլ վե-
հագունին յաղթելով և ծածկելով յինքեան
զնուաստագոյնն։ Եւ զոր օրինակ, հուր մեր-
ձեցեալ յերկաթ³ ոչ ի բաց բառնայ Յ զբնու-
թիւն երկաթոյն, այլ ներսամտեալ խառնի
հրոյն որակութիւն առ բոլոր որակութիւնն
երկաթոյն։ Եւ զի հրաշափառագոյնս ասա-
ցից, ոչ փոխէ զերկաթն հուրն, և ոչ փոխէ
առանց յերկուանալոյ, զի որ թուխն էր և
ցուրտ յառաջագոյն, լինի այնուհետեւ ի հրոյն
յաղթմանէ ջերմ և լուսատեսիլ, ըստ նմին
օրինակի թէպէտ և կատարեալ ասեմք
զՏէրն մեր ըստ ամենայնի, այսինքն աստուա-
ծութեամբն և մարդկութեամբն, համայն
յանասելի և ի գերահրաշ միաւորութենէն
մի ասի կատարեալ և մի անձն Տէր մեր
թիսուս Քրիստոս Զի Բանն Աստուած առաջ
նորդէր իւրոյ մարդկային մարմնոյ մտաց, և
առ իւր աստուածային կամացն լրումն յար-
մարէր⁴ զմարդկային կամացն յարձակումն։

1Ա և ոչ. 2Ա զորշիք. 5Ա բառնա. 4Բ յարմարէ.

Եւ յայսմիկ ինքն վկայէ Տէրն. «զանձն իմ, ասէ, ոչ ոք կարէ բառնալ յինէն, այլ ես կամօք իմովք դնեմ զնա, իշխանութիւն ունիմ դնել զնա և իշխանութիւն ունիմ միւս անդամ՝ առնուլ զնա» †։ Եւ որպէս ունէր իշխանութիւն իւրն մարդկային հսգւոյ առ ի դնել զնա և առնուլ¹ միւս անդամ՝ այսպէս և բնաւիցն անձնականացն մասանց իշխանութիւն ունէր խոնարհել տալ յանցնիւրսն բնաւորականսն կիրաւ Իշխանութիւն ունէր դարձեալ միւսանդամ մոռանալ տալ զայնոսիկ, այս է՝ զցասումն և զարտամութիւն և զերկիւլզ²։ Սովին օրինակաւ և ընդ մասանցն իւրոյն մարմնոյն միացեալ Աստուածն Բան ընդ ձեռն բանականի չնչոյն, յորժամ և ուրանօր և որբան կամէր, ազդէր անցնիւրոյն սգալ կարեացն, քաղցոյն և ծարաւին, ննջելոյն և աշխատութեանն և չարչարանացն, և յորժամ ոչ լինէր, կամ արգելոյր զ զայնոսիկ յիւրմէ մարմնոյն, բայց լինէր այս ըստ հինգ յեղանակս, և կամ թէ ըստ յոլովս խոնարհել մարդասիրաբար Փրկչին ի մարդկայինս մարմին կամ առ ի յախտակցեալ կամ առ

¹ Այսունուլ. ² Ա զերկեղ. ³ Բ արգելոյն։

† Յովհ. Ճ. 18.

վարդապետել կամ առ շահել կամ առ ի
ճշմարտել կամ ընդդիմամարտաբար. և սու-
ցա իւրաքանչիւր ոք յայտնի և բացորոշա-
բար բերէ և՛ զգէմ և՛ զիրն և՛ դտեղին և՛
զպատճառն և՛ զյեղանակ և՛ զժամանակ¹,
և որպէս չէր հնար Փրկչական մարմնոյն Բա-
նին Աստուծոյ ազդեցողութեան յիշել զիւր-
սըն, զի և ոչ թափուր երբէք ի նմանէ, ըստ
սմին այսմիկ և ոչ գոլ կարէ կամ ասիլ
գոյացութիւն առանձնապէս կամ կատա-
րելութիւն յատկական կամ որոշակի ունել
միտս առաջնորդականս և կամ բաժանա-
բար² բերել անձնիշխանական կամս, քանզի
առ ինքն ամենեքումքը այսոքիւք զմարդկա-
յինն³ խառնեաց և միացոյց Աստուածն Բան-
Յաղագս որոյ և ի Բանն Աստուած ամե-
նայնքն⁴ վերաբերին՝ և՛ աստուածայինքն և՛
մարդկայինքն, և նորա են՝ եթէ կիրքն մարդ-
կայինք⁵, և եթէ աստուածային սփանչելիք.
զի Բանն Աստուած ծնաւ ըստ մարմնոյ ի
կուսէն, սակս որոյ և Աստուածածին սուրբ-
կոյսն և ծնեալն ի նմանէ Աստուած ճշմա-
րիտ։ Բանն Աստուած խաչեալ և մեռեալ
մարմնով վասն մեր, յաղագս որոյ մահուամբ

1 և ժամանակ. 2 և բարժանաբար.

3 և զմարդկախնն. 4 և ամենեքեանքն.

5 և մարդկախնք. 6 մարդկայինքն.

Որդւոյն Աստուծոյ եղաք փրկեալք և ազա-
տեալք։ Բանն Աստուած եղեալ ի գերեզ-
մանի ի ձեռն մարմնոյն, և ի դժոխս իջեալ
ի ձեռն իւրոյ¹ մարդկային հոգւոյն, յաղագս
որոյ և լուծեալ յաղթութիւն մահու և
դժոխոց² խայթոցն³ փշրեալ։

Բանն Աստուած առաքեալ ի Հօրէ ան-
մարմնաբար և վերացեալ՝ առ Հայր հան-
դերձ մարմնովն, յաղագս որոյ՝ նոյնպէս
որպէս էրն, կացեալ, մնացեալ Երրորդու-
թիւն նովին միով բնութեամբ Աստուածու-
թեան, Եւ այսպէս ասի միւնոյն Տէր մեր
Յիսուս Քրիստոս Աստուած, միանգամայն և
մարդ։ Նմա միայնոյ կրկնի⁵ ծունը Երկնա-
ւորաց և երկրաւորաց, և ամենայն լեզու
խոստովան լիցի, թէ Տէր Յիսուս Քրիստոս
ի փառս Աստուծոյ Հօր։ Զի Յիսուս Քրիստոս
Երէկ⁴ և այսօր, նոյն և յաւիտեանս ամէն։

1 Ա իւրոյն. 2 Բ դժոխոցն. 3 Ա միայն որ կրկնի.

4 Ա Զի Քրիստոս Յիսուս էրէկ. 5 .. Երեկ ..

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ռ Ո Ր Դ

Յաղագս¹ թէ պարտ է զմարմինն
Տէրունական համագոյ ասել Աստուածն
Բանի; Լամ թէ² մարմնոյն և բնն և մի
բնութիւն ասել, եթէ ոչ.

Եթէ Բանին Աստուծոյ համագոյ ասեի
Փրկչականն, ապա գտանի եղեալ Հօր և
Հոգւոյն համագոյ՝ այլ և նորին բնութեամբ:
Պի հոմագոյնքն պարտին և հոմարուն³ իրեւ-
րաց գոլ: Զի հոմագոյն և հոմարունն⁴, այլ
առ այլ ասացեալ լինի, որ է ոմն առ ոմն;
յորմէ նշանակեալ լինի և յատկութիւն ա-
ռանձնաւորութեանցն⁵ և հասարակութիւն
բնութեան: Եւ այս լինի ոչ այլ ինչ, թէ ոչ
մի բնութեանն⁶ չորք առանձնաւորութիւնք:
Եւ զի անտեղի և աննման զայս այսպէս
իմանալ ի վերայ առաջնոյ պատճառին, ապա
և զասելն⁷ օտար և ամբարիշտ համարիմ:

¹ Ա «Յ» գլխատառը չէ գլուած. ² Բ «Թէ» չունի.
³ Բ զի համագոյնքն ... համարուն. ⁴ Բ համագոյն
և համարունն. ⁵ Բ առանձնաւորութեանցն.
⁶ Բ բնութիւնն. ⁷ Բ «և» չունի.

Այլ ասեն, զի մրդ գտանի ասացեալ
ժբկականն աստուածային և երկնային, ան-
ժահարար և կենագործական և որ ինչ սոյն-
պէս անուանք, որ յարարչականութիւն սահ-
մանին առեալ լինին բնութեան։

Առ որ ասեմք, այսոքիկ անուանք զմարդ-
կայնոյն¹ յաղագս առ Բանն Աստուած ասա-
ցեալ լինին միաւորութեան, ոչ զէակցու-
թիւնն², այլ, որպէս ասացի, զմիաւորեալ
մարմնոյն առ Բանն Աստուած նշանակեն։
Իսկ գոյակից և բնակից և անեղ և անսկիզբն
առմանոյն իրօք զբնութիւն³ բացայացտեն։

Այլ ասեն, ոչ ասեմք զհամագոյն ըստ
կոյնութեան իսկութիւնն⁴, այլ ըստ եղելու-
թեան⁵։

Առ որ ասեմ, թէ եղելութիւնն ի հո-
մանականունցն անտի է, զի են ոմանք, որ յան-
գոյից ի գոյ ածան, յոլով եղեալք ասին, որ-
պէս ինչ ասացան զհանուր էակացս։ Եւ է
որ ձնեալն ի ծնողէն ասի եղեալ, որ զհա-
մարակականն⁶ և զյատկականն միանգամ⁷
յինքեան բերէ. և է որ ի նիւթէ իմէքէ
անօթ ինչ յօրինեալ⁸ եղեալ ասի, որ նիւ-

1 Բ մարդկանոյն. 2 Բ զէակցութիւն.

3 Բ զբնութիւնն. 4 Բ իսկութեանն.

5 Բ եղելութեանն. 6 Բ հասարակականն.

7 Բ միայնգամ. 8 Բ օրինեալ.

թոյն բնական է, և զանուն և զձեւ այլ ընկալաւ և զներգործութիւն, և է որ յուրուք խառնութենէ¹ յայլ փոխայեղեացի և անուամբն և որակութեամբն, որպէս ինչ հնարեցան ի ձեռն մակարդից ոմանց ստեղծանել ի կաթանէ զպանիր կամ զեղ. և է որ ընդձեռին իրերաց զանցնիւրսն լուծանէր, որպէս ի վերայ խոնաւից է տեսանել, որք են առ իրեարս և ոչ են սեռաբար յերկաքանչիւրսն, և է որ երկակաց ոմանց էակաց ի միասին գոլով, յաղթեսցէ վեհագոյնն վատթարագունին՝ հաղորդ եղեալ զօրութեանն². Զոր օրինակ հուր մերձենալով յերկաթ³ փոխէ զորակութիւնսն և ոչ փոխէ զէռութիւնն, զիւրոյն ի նմա տրամադրելով զէռութեանն⁵ պատահմունս, կամ սպիտակութիւն գեղման ներկեալ գունով ծիրանւոյ և անուանել ծիրանի, և համայն զորոյնն⁴ զիւր ոչ կորուսանէ։ Արդ ամենեքեան այսոքիկ նշանակեալքս համանունաբար եղեալք ասին, որոց⁵ պայման եղելութեանն յոյժտարբեր է ի միմեանց։

Համայն և ոչ զմի ոք յայսցանէ յանութբնիմ օրինակել առ որս բանս։ Զի ոչ յանգոյից սահմանել իշխեմք կամ զԲանն

¹ Ա խառնութէնէ. ² Ա զօրութեան.

³ Բ զէռութիւնն. ⁴ Բ զորոյն. ⁵ Բ որոյ։

Աստուած կամ զմարմինն իւր, որ ի մարդկանէ¹, այլ որպէս Բանն ի Հօրէ զիւրն ունի գոյութիւն, այսպէս զմարմնոյն իւրոյ ի Մարիամայ² սրբոյ Կուսէն գոյացոյց զէութիւն:

Այլ և ոչ ըստ երրորդի նշանակութեանն, զոր ծննդոյն շնորհեն ծնողքն՝³ ասի եղելութիւն, զի ոչ յաստուածայնոյն՝⁴ հայթայթէ քնութենէն Բանն իւր մարմին, այլ ի մարդկանէ, և ոչ ինքն առ ի Մարիամայ՝⁵ առեալ սկիզբն, այլ յԱստուծոյ Հօրէ ծնեալ անժամանակաբարբ:

Դարձեալ և ոչ ըստ երրորդին ասի եղելութիւն, զի ոչ Որդին Աստուծոյ այլ ինչ ի մարմնանալն գտաւ ընկալեալ, քան թէ գոլով նոյն ինքն Որդի Աստուծոյ, այլ և ոչ զմարմնոյն իւրոյ զէութիւն կամ զանուն փոխեաց, այլ զնոյն զմարդկայինն արար արժանի լինել ինքէն մարմին:

Այլ և ոչ ըստ չորրորդին բաժանակութեան՝⁶ եղելութեանս օրինակն, զի ոչ հոգեկանն՝⁷ իւր և մարմնականն ծնունդ ընդձեռն միջնորդի իրկը երթեալ ծանուցաւ, այլ ի Հօրէ. առանց միջնորդի և անժամա-

1 Բ իւր ոք ի մարդկանէ. 2 Ա ի Մարիամա արբոյ կուսէն Բ... կուսին. 3 Ա շնորհել ծնողքն, Բ... ծնողքն. 4 Բ աստուածայնոյն. 5 Ա ի Մարիամա... սկիսբն. 6 Ա չորրորդին բարժանակութեան. 7 Ա Բ հոգէկանն.

նակաբար ըստ էտթեան նորա, և ի մօրէ
անմիջնորդաբար տնտեսութեանն յետ ժա~
մանակի ծնունդ։

Եւ ոչ հինգերորդ նշանակութիւնն՝ գե~
ղելութիւնս օրինակեալ տպաւորէ, զի անշր~
փոթաբար մարմնացաւ և առանց այլայլելոյ:

Ի սոցանէ ամենեցունց նշանակեցելոցս
ի վերջինս², և որպէս և յայլոց ոմանց իմաս~
տասիրեցաւ, որ զիրկչական տնտեսութեանն
օրինակէ խորհրդոյն յեղանակ, զի որպէս
տեսանեմք զերկաթ առ հուր մերձեցեալ
զբոլորն յինքն ընդունի զհրոյն պատահմունս՝
իւրոյն արտաքոյ լինելով որակութեանց, և
համայն ոչ հրոյն յերկաթոյն յեղափոխել
եղե գոյացութիւնն³ և ոչ երկաթն ի հրոյն,
այսպէս և զԱստուածն Բան ի մարդեղու~
թիւնն իմանալ պատշաճ է, որպէս և յու~
մեմնէ իմասաասիրել⁴ եղե ի հարանցն Կա~
ցեալ, ասէին, մինն որ էնն և միացեալ ան~
քակաբար և առանց շփոթութեան և ի վեր
քան զեղելոցս մտածութիւն։ Եւ այլ ոմն †,
թէ միութիւն խոստովանիմ և ոչ քայքա~
յումն⁵ իմն և լուծումն այնր բնութեան⁶
յայս, և կամ այսր յայն⁷։

1 Բ նշանակութեանն. 2 Ա վեջինս.

3 Բ գոյացութիւնն. 4 Ա իմաստ սիրել.

5 Ա քայքաումն. 6 Բ բնութեանն. 7 Բ այն.

† Ոսկերերան, ? համեմ. Օձ. եր. 52.

Դարձեալ յիշեն ընդդիմադրութեան աշպատ զառաքելոյ՝¹ բանն, «յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեար»[†], ասելով, «և ոչ միով իւկը որոշեալ դտանիմ՝ ի սահմանականն բնութեանըն բանէ» Աստուածն ասելով, սակա որոյց ցատ այսմիկ ապա և ոչ մեղանչեցուք և համագոյանել զփրկչական մարմինն Բանումն Աստուծոյ»:

Առ որս ասեմք, Եթէ² ամենեքին այսպիսաբար ասացեալք ի սրբոցն զՔրիստոսէ, ոչ առ մարմին տանի զասացելոյն ակնարկութիւն, այլ առ Բանն Աստուած, որ մարմնացաւ վան մերոյ փրկութեան՝, զի և ոչ իսկ հետեւի զմարմին ըստ մարմնոյ ասել ի Հրէիցն»:

Դարձեալ տարակուսեն՝ ասելով, «Քրիստոս ասացեալ եղեւ ի Պողոսէ³ և ոչ Բան, և Քրիստոս ի վերայ Երկելոյն⁵ ասի և ոչ ի վերայ աներելոյն»:

Առ որս ասեմք, Եթէ այսպէս բարժանաբար զՔրիստոս անուանելդ⁶, Երկուս տայ ասել⁷ Քրիստոսս և Աստուածս Երկուս, յօրմէ և ապա⁸ Երկու⁹ որդիքք: Եւ այսպէս հետեւի լինել յանյաւելուած Երրորդութիւնն՝

1 Բ զառաքելոյն. 2 Ա էթէ. 5 Բ փրկութեանն.

4 Ա ի Պողոսէ. 5 Բ էրևելոյն. 6 Ա անւանելդ.

7 Բ ասիլ. 8 Ա ապայ. 9 Բ Երկուս.

† Հռովմ: Թ. 5:

չորրորդութիւն եկեալ յարեսցի, և համագոյ
ասել աստուածութեանն զտէրունական մար-
մինն։ Եւ մանաւանդ զի այսպիսին ի պար-
զամտածաբար խոստովանութեան¹, մեծա-
պէս իմն ընդարձակէ զօձտող² ճշմարտու-
թեան զբերանս, յերկնից և կամ յաստուա-
ծութենէն բերել ասել տալ զմարմինն և
կամ յեղմամբ և փոխմամբ իմանալ զմիա-
ւորութեանն յեղանակ և կամ ըստ մարմ-
նոյն և կամ զԲանն ի ստացական իջուցա-
նել բնութիւն։

Դարձեալ ընդդիմադրեն այսպէս, «թէ
մինչ հոմագոյ և հոմարուն³ ոչ ասի տէրու-
նական մարմինն, և ոչ աստուածութեանն⁴
և ոչ դարձեալ իսկս բնութեան և անեղու-
թեան Բանին գտանի եղեալ հաղորդ, զիարդ-
յարմարեսցի խոստովանել մի բնութիւն Բա-
նին մարմնացելոյ»։

Առ որս ասեմք, թէ ասէի Յ Բանին և
մարմնոյն մի բնութիւն, ասացեալ լինէի
և ընդ ձեռն այսորիկ և համագոյս իրերաց
զԲանն Աստուած և զմարմինն իւր, որպիսի
ինչ օրինակաւ ասասցի սուրբ Երրորդու-
թիւնն համագոյք իրերաց հանդերձ երիւք

1 Բ խոստովանութենէ։ 1 Բ զօձտող։

3 Բ համագոյ և համարուն։ 4 Բ աստուածութեան։

5 Բ ասէին։

յատկութեամբք. Այլ զի սահմանեմք Բանին մարմնացելոյ մի դոլ բնութիւն, արտաքոյ ամենայն իրաք գնէ համագոյականին զմերն բան և ըստ միաւորութեանն ուսուցանէ զմին ասել բնութիւն։

Դարձեալ տարակուսին, թէ «ապա ուշեմն ծչ ապաքէն նովին միաւորութեամբ բանիւ, որպէս զմին ուսաք խոստովանել բնութիւն Բանին մարմնացելոյ, խոստովանեսցուք լինել և հոմագոյ¹ Բանին զմարմինն իւր։»

Առ որս ասեմք, թէ միաւորութեանս բան ի հոմանուանց անտի է և եղելութեանն տան, յաղագս որոյ զանց առնելով զայլօվք նշանակութեամբք, զվերջինն զնուրայն իրաւացի է և սմա յարադրել նշանակութիւն, զի մնալով անծախաբար յորոց, որք են ըստ նախասացելոյ բանին, յաղթեսցէ ամենայն իրօք զօրաւորագոյնն տկարագումին։ Օրինակ իմ՝ որպէս ծածկեալ լինին աստեղացն պայծառութիւնք ի մեծապայծառ արեգականն լուսոյ, մինչ զի թէ որք ենն, որպէս թէ ոչ իսկ իցեն ի տուընջեանն²։ Եւ յաղագս այսորիկ ոչ ասին⁵ միւանգամայն ի միասին երկու բնութիւնք տիւն, այսինքն արեգականն կամ աստեղք

1 Բ համագոյ. 2 Բ տւնջեանն 5 Բ ասին.

կամ օր և գիշեր կամ՝ լոյս և խաւար, այլ
որք միանգամ հետեւին անուանք արեգա-
կանն, նորումք¹ անուանեսցի տիւն. այսպէս
իմասցիս և զմիաւորութեանն բան Աստուածն-
Բանի մարմնացելոյ, զի թէպէտ և իցեն ան-
բառնալիք ի մարմնի կացեալ, մնացեալ մարդ-
կայինքն, այսինքն բնութիւն և կերպարան
և դէմ և ևս առ այսոքիւք և բան և միտք
և իմաստութիւն և զօրութիւն և կենդա-
նութիւն և որ ինչ սոյնպիսիք, համայն ոչ
ասին սոքա առանձնաբար ի վերայ մարմ-
նոյն, այլ յատուկն Աստուածն Բանէ կոչ-
մանց անուանեսցին ամենեքին ասացեալքա,
զի յաղթեսցէ ամենեկին ամենայն իրօք վե-
հագոյնն նուաստագունին: Եւ յաղագս այ-
սորիկ թէե անմեկնելիք մշտնջենաբար ընդ-
Աստուածն Բանում միացեալք մարդկային-
քըն, համայն անյեղիք և անայլայլիք ի
յաղթողէն և յանյեղագունէն պահեալ եղեւ
ստացականն, և համայն ոչ են ըստ այնմիկ,
որ զգեցեալն եղեւ, ևս առաւել ըստ առո-
ղին. վասն զի զգեցողին ճոխութենէ նախ-
ասացեալքն ամենեքին անուանեսցին:

Ասի մահկանացու մարմինն ըստնախա-
գոյակ իւրոյ բնութեանն², և ոչ ասի մահ-

1 Ա նորումք. 2 Յ բնութեան.

կանացու, զի անմահագունիւն ներկեալ եղե
արմատով և է ամենելին անմահարար և
կենդանացուցիչ, գոյ արդարեւ յԱստուածն
Բանում նկարագիր մարմնոյն իւրոյ բնու-
թեան և ոչ ասի ի նմանէ ուրոյն բնութիւն,
զի յԱստուածայնումն ծածկեալ և ընկղմեալ¹
եղեւ բնութեանք Եւ յաղագս նորին ասի մի
բնութիւն ունել Տէր մեր Յիսուս Քրիստոս,
ոչ անմարմին, այլ զմարմնացեալն², զի և
ոչ իսկ յարմարեացի յատուկ առ ինքն, միոյն
ասիլ³ մի, այլ առ այն՝ որ ընդ նմա⁴ և ի
նմա միացաւ և խառնեցաւ անքակարար,
ոչ ի միաւորութենէ համագոյ և կամ միոյ
բնութեան ասել զԱստուածն Բան և զկեն-
դանարարն իւր մարմին, և ոչ յանփոփոխն
գոլոյ զբաժանումնեւ զերկմտութիւն դաւանել,
ոչ ի կենդանին և ի բանաւորն և մտաւորն
խոստովանել զփրկչականն մարմին, երկուս
ասելով անքարշատել կենդանիս, և կամ եր-
կուս բանականս և մտականս երկուս և ոչ
ի մինն դաւանելոյ կենդանի բանական և
մտաւոր, համագոյութեան⁵ տալ կարծիս
Աստուածն Բանի և մեղսաքաւիչն իւր մարմ-
նոյ:

Արդ այս մեզ իմաստասիրեալ եղե

1 Ա ընդղմեալ. 2 Բ զմարմնացելն. 3 Բ ասեն.

4 Բ ընդ նմայ. 5 Բ համագոյութեանն.

յաղագս թէ ոչ է պարտ համագոյ ասել
զտէրունական մարմինն աստուածութեանն,
ոչ հոմաբուն և ոչ անսկիզբն յաղագս միա-
ւորութեան, ոչ անեղ, ոչ անբովանդակելի,
և ոչ որ ինչ սորին ազդակից անուանք իսկ
եթէ ոք ժպրհեսցի հրաշացուցանել ա-
նուամբքս այսոքիկ, այսպիսեացն ի վերայ
յարուցեալ և առ ի նզովել և առ ի քակտել
զաղանդն՝ Մեծն Աթանասիոս Աղեքսանդրա-
ցի¹ հայրապետն, որ առ Էպիկտիտոն թուխ-
թըն է² †.

Յուրոց հեռի արասցէ Հոգին սուրբ ի
նորայն դատապարտութեան³ բանիցն, շնոր-
հելով մեղ անբիծ դաւանութեամբ կալ
յաստիսս և հանդերձելոցն հասանել բա-
րեաց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում
փառք յաւիտեանս ամէն⁴.

— • • —

1 Ա Աղեքսանդր. 2 Բ Թուխտն է.

3 Բ դատապարտութեան. 4 Բ ոյաւիտեանս
չունի.

† Թուղթ առ Եպիկտետոն եպիսկոպոս. Ս. 1
Թանասի Աղեքսանդրոյ Հայրապետի Շառք, Վեն
տիկ, 1899, եր. 324.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Առ 1 այնոսիկ որ յերկուս զմարդ-
կային 2 անջատեն 3 բնութիւն, այլ գոլ
ասեն յառաջ քան զյանցանսն 4 և այլ
գինի յանցանացն:

ԵՌԱԿԻ տրամատի ամանակացն զա-
նազանութիւն, ի ներկայս, յանցեալն, յա-
պառնին, և ի սոցանէ 5 ներկայն ի զգայու-
թենէ և և ի գիտութեան 6, իսկ ապառնին
թէպէտ և ի գիտութեան դուզնաքեայ 7 ինչ,
այլ ի զգայութեան 8 ամեննեին ոչ, իսկ ան-
ցեալն՝ մօտաւորն ի զգայութեան 9, այլ ոչ 10
և ի գիտութեան, իսկ հեռաւորն մասնա-
ւոր ինչ ի գիտութեան, այլ ոչ և ի գիտու-
թեան։ Արդ՝ զի՞մրդ դուք վասն անցելոց
հեռաւորացն ամեննեին զձեզ ի գիտութիւն
գոլ խօստովանիք և ասէք. «Թէ մի և նոյն
բնութիւն նախաստեղծին յերկուս բնու-

1 Ա «Ա» գլխատառը չէ գրուած. 2 Բ զմարդկա-
-ինքն. 3 Ա անանջատեն. 4 Ա զանցանսն.

5 Բ և ի սոսան է. 6 Բ և ի գիտութենէ.

7 Ա դուզնաքեա. 8 Ա ի սգայութեան ամէննեին ոչ.

9 Ա ի սգայութեան. 20 Ա «այլ ոչ» չունի.

թիւնս զանազանեալ գտաւ, այլ բնութիւնն
ունել նմա յառաջ քան զյանցանսն և յայլ
փոխել յետ յանցանացն, ասելով, յառաջ
քան զյանցանսն անմահ էր և անապական
և ամենայն կրից և կարեաց մարդկայնոց¹
անընդունակ, զի այնք ամենեքին յետ մե-
ղացն ի նա չար յաւելեալ եղեւ»:

Ապա ուրեմն, որպէս դուք ասէք, գտա-
նի նա և երիցն² անբաժ եղեալ հոգեկա-
նաց³ մասանցն, զցանկականն ասեմ և
զցասմնականն և զիսոհականն⁴, Եւ ոչ միայն
այս⁵, այլ և՛ զգայականի զօդութեանն ար-
տաքոյ եղեալ և՛ բանականին ի ձեռն այ-
սորիկ, զի ցանկականն և ցասմնականն զգա-
յականին⁶ յարեանայ, զոր օրինակ խոհա-
կանն բանականին, ընդ ձեռն որոց ոչ ելոյ⁷
բնաւորականացս այսոցիկ. այս է՝ ցասմնա-
կան⁸ և ցանկութեան և խոհականութեան,
ոչ կարեն դոլ և այնոքիկ, յորս սոքայն իցեն
բնաւորեալք, զգայականն⁹ ասեմ և զբա-
նականն:

Եւ զիանրդ զգայութեան¹⁰ ընդունակ

1 Բ մարդկայնոյ. 2 Ա և յէրիցն.

3 Ա հոգէկանաց. 4 Բ խոհականն.

5 Բ և միայն այս. 6 Ա սգայականին.

7 Ա որոց ոչ ելո, 8 որոյ ոչ ելոյ. 8 Ա ցասմնա-
կան. 9 Ա զսգաականն. 10 Ա սգայութեան.

ասինախասաեղծն, անզգայ⁴ ըստ ձեզ եղեալ,
և կամ բանական՝ անբան. և զի բանական
նպաս՝ յօրէնսդրութենէ² անտի է յայտ,
այլ և ի հարցմանցն և ի պատասխանեացն առ
միմեանա։ Եւ զգայութեանցն⁵ առհաւատ-
չեայ տաւնին հրաժարեցուցեալ, որոյ պտուղ
առ ընդ զգայութեամբ⁴ ստորանկեալ եղե
նոցա, թէ բանական աղենայն բնակող⁵
և պահապան, որով զգայութեամբ զգալին⁶,
և ընդ զգալովն⁷ մարմին՝ և մարմնովն կիրք
և կրական մարմին. և ի վեր⁸ հանելով զբա-
նըս ի բաց բարձեցելոյ կրիցն, բարձեալ լի-
նի կրականն մարմին, և ի նմանէ զգալոյն
զգայութիւնն⁹, ի նմանէ բանականն, ուստի
և մարդն։ Բայց ոչ ամենեքին այսք ասա-
ցեալքս խոտորման¹⁰ նմա առիթ, զի անձն-
իշխանութեամբն ճոխացեալ և զդուշացեալ
պատուիրանաւն, կարելի էր նմա ոչ միայն
պիտակացն ոչ տալ թոյլ հպել առ քնու-
թիւնն, այս է՝ մեղացն մահուն ապականու-
թեան, և այլ բնականացն ունել իշխանու-
թիւն սաստել և հնազանդեցուցանել և ուղ-

4 Ա անսգամ. 2 Բ յօրէնսդրութեանն.

5 Ա սգայութեանցն.] 4 Ա սգայութեամբ ստո-
րանգեալ. 5 Բ բնակող. 6 Ա սգայութեամբ
սգալին. 7 Ա սգալով, Բ զգալովն. 8 Ա և վեր.
9 Ա սգալոյն սգայութիւնն. 10 Բ խոտորմանն.

դել զնոսա առ սպասաւորութիւն հաճոյիցն
Աստուծոյ և ոչ լինել տղախին հեշտասիրու-
թեանն ^{1:} Եւ զի ի կամս ինքնիշխանութեան
թողեալ էր ձգել նմա զմեղսն կամ հալա-
ծել, վկայէ պատուիրանն, «յորում աւուր ու-
տիցէք, ասէ, ի նմանէ, մահու մեռանիցիք»[†],
ուստի յայտ է, թէ մեղօքն, որ զպատուի-
րանն ուսոյց քամահել, քարշեցաւ մարդն ի
մահ և յտպականութիւն։ Զոր օրինակ, զօ-
րականն, որ ի հանդիսին ^{2:} ունէր տեղի, վա-
հանընկեց լինելով, մասնեցաւ ի ձեռն ա-
խոյեան թշնամւոյն, այսպէս և մարդն ինք-
նապատիրութեամբ ի մեղս հակամիտելով
գտաւ եղեալ ծառայ մահու և ապականու-
թեան։

Ընդ որով և զայս ասելի է, ի չորս բա-
ժանի ^{3:} կենդանական զօրութիւնն. ի ծնըն-
դական, մննդական, յաճելական ^{4:} և ի
տեղափոխելականն։ Ոմանկք յասացելոցս և
յանմարմնականացն յարմարեսցին ^{5:} գոլ, իսկ
մարմնական կենդանիքս ընդ բոլորինքս են-
թակայեալ է ^{6:} Արդ յայտ է, թէ ծնանելի
ունէր բնութիւն մերն նախահայր, վասն որոյ

¹ Բ հեշտասիրութեան. 2 Ա որ զհանդիսին.

³ Ա բարժանի. 4 Բ յաճեական. 5Բ յարմարեսցեն.

⁶ Ա ենթակաեալ է, Բ ենթարկեալ է.

և հողածինն անուանի, որ ի հօգոյ զանակեալ լինի յԱրարէէն։ Նոյնպէս և աճեցականն, ըստ սրում ի դոյզն կողէն առ սակաւ սակաւ ի վեր տանելով աճմամբ, զմերն կատարելագործէր նախամայր Ստեղծին։ Իսկ զկերակրողական ունել զօրութիւն նուցա, ամենազան պտղովք դրախտին ճանաչի, զոր նախախնամողին յամենից նմանրամայեալ ուտել, իսկ միայն միայնոյ անճաշակ լինել ի ծառոյն դիտութեան բարւոյ և շարի։ Իսկ տեղափոխն լինել, ի հպելոյ առ հրաժարեցուցեալ պտուղն և ի թագչելոյն² յայտնի եղեալ ճանաչի³։ Արդ ուրեմն ճշմարիտ որպէս ներդործողքն, սոյնպէս և ներդործեալքն ի նոցանէ, ևս առաւել ճշմարիտ և որ պատմէ վասն նոցա։

Եւ սակայն ոչ վասն գոլոյն ի նախաստեղծեցեալսն⁴ բնաւորականացն կրից, ընդ նմին և զմեղսն ի նոսա բնաւորականս ասելի է, ոչ է այս, և մի լիցի ասել զայս այսպէս, որք ոչ իցեն. Հեռի յԱստուծոյ, զի ոչ եթէ էութիւն ինչ ըստ ինքեան է մեղքն, և ոչ մասն ինչ ի մարդկային ստեղծուածիս

¹ Ա վասն որոյ և հոգածինն, ² վասն ոյոյ և հոգածինն. ³ Բ և ի թաքչելոյն. ⁵ Բ ճանաճի.

⁴ Ա նախաստեղծիցեալսն.

հաստատել զնա Ստեղծողին, այլ ի մերմէ¹ ընկալաւ² ոորա սկիզբն ծուլութենէ և կամակորութենէ³ և ի չարին պատրանաց զօրացեալ և ի բանսարկութենէ⁴: Եւ ոչ դարձեալ զի օտար սա բնութեանս, թափուր յաղագս այսորիկ բնութիւնս և ի կրից անտի բնաւորականաց, ոլարտ և արժանն է զէն ասել, և զոչ էն ոչ սահմանեալ՝ և մի սուտ կարծեօք սակս երկոցունց ստել և մեղանչել:

Բայց հարցաքննելի է այս, թէ էր աղագաւ առեղծանել⁵ ձեռնարկեցին որդիքն թէլիարայ⁶ զաստուածային սուրբ դիրս և առիւրեանց կամակորեցին կորուստ անձանց. զի ոչ կարացին պարզաբար մարտնչել ընդաստուածախօննակ արանցն⁷, որ յաղագս փրկչական տնօրէնութեանն բանկ, օրինակ իմն, որք որպէս յանդիման ական ունել ոչ զօրէն, որոգայթիւ⁸ հնարին զմահն ի վերայ ածել: Այսպէս և նոքա՝ զորոց բանս խարդախելոյ, յանդիմանեալք յԱստուծոյ, ասացին, թէ Քրիստոս զնախաստեղծին⁹ ունէր բնութիւն զանկիրընդունակն և զառանց

1 Բ ի մերմէս. 2 Ա ընդալաւ. 3 Ա կամակորութէնէ. 4 Ա և ի բանսարկութէնէ. 5 Բ առեղծանիլ. 6 Ա թէլիարա. 7 Ա աստուածախօննկարանցն. 8 Ա օրոգայթիւ. 9 Ա նախաստեծին.

կարեացն, ոչ զայս՝ որ ընդ կարեաւքս է ոտու-
րանկեալ¹, որով իւիք առ մահն և ապակա-
նութիւն երթեալ կօրծանիմք։ Եւ զայս ա-
սելով՝ կարծեցին ընդ ձեռն տարացուցին
առ աչօք զմարդկայինն ցուցանել կրել
Քրիստոսի կիրս, որպէս զի և մարդեղու-
թիւն² նորա կարծեաւք և երեսութիւն³ գտա-
նիցի ըստ Մանեայ մոլորութեանն։

Արդ եթէ⁴ յադամային մարմնում հո-
գեկանքս⁵ և մարմնականքս ոչ էին բնաւու-
րեալ կիրք, յայտ ուրեմն է՝ թէ Քրիստոս
կրելովն զայսոսիկ, ոչ էառ զադամայինն
մարմին, այլ զմերս՝ որ ընդ մահուամբն և
ապականութեամբ եղեւ ստորանկեալ։ Իսկ
եթէ զնախաստեղծին ունէր բնութիւն՝ զա-
ռանց կրիցն և զանմահականն, սուտ ապա⁶
ըստ ձեզ եղ ի բաց երեսոցելն՝ զկիրս և
նորուն աշակերտացն վերաձայնէ կրիցն։
Դարձեալ՝ թէ յաստուածաստեղծեցելումն
ոչ էին հոգեկան⁸ և մարդմուական կիրքս,
աիրելի եղեւ Քրիստոսի ոչ զիւր զառանց
կրից ստեղծեալն, այլ զմերն ընդ ձեռն յան-
ցանացն զգենուլ⁹ կիրընդունակ եղեալ

¹ Ա ստորանգեալ. ² Բ մալդեղութեան.

³ Ա և երեսութիւ. ⁴ Ա էթէ. ⁵ Ա հոգեկանք. ⁶ Ա ապայ.

⁷ Ա եղի բաց երեսոցելն, ⁸ Իդ ի բաց երեսոցելն։

⁸ Ա հոգէկան. ⁹ Ա սգենուլ կիր բնդ ընդունակ.

ստեղծուած։ Մեք ուրեմն ապա ընդ ձեզ
յաւէտ գեր զնա գեղեցկակերտեալ և կա-
տարելագործեալ գիտացաք յանցմամբն զբլ-
նութիւնս, որ թէե նմա եղեւ ընտրելի և
փափագելի ¹։

Արդ՝ զի՞ ևս յերկրաձգեցից զնոցայն
զուտապատիր ցնորմունս և զառասպելա-
կան բաջաղանս, այսուհետեւ զմերն և որ
զշմարտութեան է ² իմաստասիրեցից բանս

Ոչ է, ով գուք, մարդկայինք ³ յերկուս
բաժանեալ բնութիւն ⁴, այլ մի և նոյն յիս-
կըզբանն ստեղծեալն իւր լուսափայլող ⁵
պատկեր, որ ի մեղացն դուաւ շաղախեալ,
զգենլով ⁶ վերջին աւուրս ստեղծիչն վերաս-
տեղծեալ, զի ամենայնիւ որպէս, գրեցաւ ⁷,
նմանեալ մեզ թանց մեղաց, և նովին կա-
տարեալ բնութեամբս, զոր էառ ընդ մեր
և վասն մեր մեղաց, պատերազմել ընդդէմ
մարդկախոշոշ պատերազմողին։ Ենաւ ի Կու-
սէ և առանց սերման, զի ցուցցէ ⁸, թէ ծնա-
նելի էր հաստատեալ բնութիւնս, և այնպի-
սաբար ⁹ թանց զուգակցի էր կարողութիւն
ծնանել, և կացեալ, մնացեալ ի պատուիրա-

¹ Ա ընդրելի և ... Բ .. և փափագելի. ² Ա և որ
զշմարտութենէ իմաստ ... ³ Ա մարդկայն.

⁴ Բ բնութիւնն. ⁵ Ա լուսափայլող. ⁶ Ա սգենլով.

⁷ Բ գրեցաւն. ⁸ Ա ցուցէ. ⁹ Ա այնպիսիաբար.

Նապահութեանն։ Մննդեան և կերակրոց
վարեցաւ պիտաւորութեամբ, յայտ առնե-
լով մննդական և կերակրողական գոլ զմարդ-
կային¹ բնութիւն։ Զարդացումն աճմամբ
հասակի ընկալաւ², աճելական ծանուցանելով
զբնութիւնն։ Համօրէն կիրս մարդկայինս՝³
զհոգեկանս և զմարմնականս՝ յիւրումն բա-
ցերեւցոյց մարմնում, որքան կաֆեցաւ և
երբ և ուրբ Եւ յաղագս որոյ, զի նոյնագոյ
և ազգակից զիւրն առաջնոյն բացայայտեսցէ
երկրորդն Աղամ⁴, և զի ցուցցէ, թէ ոչ ի մե-
զացն սակս ընդ բնութեանս այսոքիկ շարա-
կապեալ եղեն, այլ յարատեռողութեան վասն
և բնաւորաբար յօդնութիւն մեզ սոքա⁴ ի
Ստեղծէն պարգևեցան։ Մեռաւ և թաղե-
ցաւ և ի դժոխս էջ անըմբոնելին նոցա,
զի յերկաքանչիւր⁵ տեղեացն զկամօք ի նո-
սա ընկղմեալն⁶ ազատեսցէ՝ կամօք ազատ
մնացեալ Տէրն, և զի ցուցցէ բռնաւորին,
թէ ինքնակամութեան և հաւանութեան⁷
դործ, և ոչ զօրութեամբ քո բռնազրօսել
պատկերս ի ծառայութիւն։ Յերկինս⁸ համ-
բարձաւ նստեալ ընդ այմէ մեծութեանն

1 Բ զմարդկայինս. 2 Ա ընդալաւ. 3 Ա մարդ-

կաինս. 4 Ա սօքա, 5 Բ երկաքանչիւր.

6 Ա ընդդմեալն. 7 Բ ինքնակամութեանն և հա-

ւանութեանն. 8 Բ յերկինք.

ի բարձունս, որպէս ի դէպ է ասել, թէ և
բոլորումն առաջի կայ ստեղծուածոյ զկնի
յանդմանն կիսադրեալն հանդիսի զաստուա-
ծայինն ժառանգել փառաց աթոռ։

Այսոքիկ մեզ իմաստասիրեալ եղեն յա-
ղագս յանդիմանելոյ զմոլորութիւն Մա-
նեայ¹, և որք ի նմանէ չար արմատոյ չա-
րագոյն շառաւիղք, զՅուլիանայ² ասեմ, և
զԵւտիքեայ³ զառաջնոյն և զվերջնոյն, և
զՅուլիոսեայ⁴ Ղկառնասացւոյ և զնորուն
ծննդոց Որ և զմեզ պահեսցէ պահպանող⁵
ձեռն Արարչին ի նոցա սպանող⁶ և ի կո-
րուսիչ բանիցն, շնորհելով մեզ լինել⁷ ա-
ւանդապահ առաքելական աւանդիցն ի
Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք
յաւիտեանս⁸։



¹ Ա անմանեաց, ² Մանեաց, ³ Ա զՅուլիանամ,

⁴ զՅուլիանա. ⁵ Ա զԵւտիքեա, ⁶ զկատիքեա.

⁷ Ա ՔՅուլիոսեայ զկառնասացոյ.

⁸ Բ պահպանող. ⁹ Բ սպանող. ¹⁰ Բ լինիլ.

¹¹ Բ հյաւիտեանս չունի։

Գ Լ ՈՒ Խ Խ Զ Ո Ր Ռ Ո Ր Դ

Առ 1 այնոսիկ որ տարակուսին ի
վերայ փրկչականն կրից մարդկայնոց 2,
թէ բնական պարտ է ասել, թէ ան-
բնական:

Նախադիք բանից առ Անանաս Անոքիստաղի

Ո2 այնքան ծարաւեալն կարօտասցի
աղբերն, որքան ուսումնասէրն ինդրէ գտա-
նել զայնոսիկ, առ որս գիտութեան իցէ
մացեալ նշխար, որպէս և դու, ով այրդ
Աստուծոյ, միանդամայն և հայր բազմաց
ի միաբանութիւն եկելոց առաքինասիրաց
անձանց, ինդրեցեր առի մէնջ գիտել զպատ-
ճառս, որով իւկը տարակուսին բազումք ի
վերայ փրկչական կիրընդունակութեանցն
մարդկայնոց, թէ բնական պարտ է զնոսա
ասել, թէ յանբնականաց, և մանաւանդ զի
ի գիրս զերկոսին գտանեմք ասացեալ ի սուրբ
հարցն,

Արդ կրկին իմն սահմանեցան անուա-

1^ն գլխատառ «Ա» չէ գրուած. 2^ն մարդկանոց.

նիլ բնական այս ձայնք ի վերայ մարդկային
կազմածիս. մի՛ զոր Ստեղծողին ընդ ստեղծ-
անելն¹ անկեալ է ի ստեղծուածին, առանց
որոյ և ոչ բնութիւն կարէր բաղկանալ, և
միւսն, որ յախտասիրութենէ իւրմէ զկնի
գոյանալոյն գտանելոց էր մարգն, զոր և
գտեալ խառնեաց և բնաւորեցոյց ի բնու-
թեանս, ընդ ձեռն որոյ՝ մեղաց և ապակա-
նութեան՝ մարդկային բնութիւնս² թեքե-
ցաւ³ լինել ծառայ, այս զոր և ասե-
լըս կամիմ։ Ծնանելն բնութեանս են
բերք և ընկալեալք յԱրարչէն առ ի մար-
դեղութիւնս ի բազմամարդութիւն հնարել,
որ և բնականք են սոքա ի մեզ, իսկ զանաս-
նականն և որ ընդ ձեռն երկակաց խառնից
և խտղումանց⁴ գտաք, մեք զնեմք հիմն
մերոցս լինելութեան, որ և սա բնական ա-
նուանի։ Զայս ոչ ի տնկագործողէն, մար-
դատունկս յինքենէ բերէ յադահութեան
յագահութենէ⁵, յանբանից առ ինքն ձգել
ընդ կազմածիս պատուաստեաց։ Որպէս և
Սևերիանոս ասէ՝ Դաբաղայ եպիսկոպոս⁶.

1 Բ ստեղծանիլն. 2 Բ «ընդ ձեռն որոյ մեղաց
և ապականութեան մարդկային բնութեանս» խօս-
քերը լուսանցքում յետոյ աւելացրած. 3 Ա թէքեցաւ.
4 Բ խտ դամանց. 5 Ա յագահութեան անյագութենէ.
6 Ա Էպիսկոպոս.

«Հոգի և մարմին ծառայ են կարեաց, որ ի
մեղմն տանիցին՝¹, և այնց կարեաց, որ ար-
տաքոյ քան զմեղան իցեն»։ Եւ յառաջ մա-
տուցանելով զբանն ասէ. «թէ Տէրն կրեաց
զմարդկայինն՝ զհոգեկան՝² և զմարմնական
կիրս, զայն որ արտաքոյ՝³ մեղացն իցէ»։⁴
Զնոյն և Գրիգոր Նիւսացի, յօրինակ՝⁴ առն-
լով քաղցնելոյ՝⁵ Տեառն զտակառապետացն
հնարս, ասէ. «նոքա⁶ ի պարզելն զդինին,
զմաքրականին աղէտս ոչ անարդեն, իսկ
զաւելորդ զխառնեալն ընդ նմա զփոշին՝ քա-
մեն և ի բաց ընկենուն»։

Արդ և դու, ով սիրելի և ծաղկահաւ-
առք, ցանկացողդ՝⁷ լինել հոգեկանացդ՝⁸ ճա-
ռից, ասասցես ընդ սրբոց հարանցն աներ-
կեան սրտիւ ստորասութեամբ և բացասու-
թեամբ զերկոսին ի մեզ և մի շփոթեացես
և խաթարեացես զլուսաւոր քո սիրտդ, այլ
միայն ի միտ առեալ ծանիցես, ըստ որում
իմիք յեղանակի յիւրեանցն շարադրութիւնսն՝⁹

1 Ա. տանեցին. 2 Ա. զհոգէկան. 3 Ա. արդաքոյ.

4 Բ. օրինակ. 5 Ա. քաղցնլոյ. 6 Բ. նոքայ.

7 Ա. ցանկացողդ. 8 Ա. հոգէկանացդ.

9 Բ. շարադրութիւնսն.

† Նոյն վկայութիւնը բերում է և Օձնեցին
Երեսութ. ճառ. եր. 71—72. Համ: Սեբերիանոսի
Եմեսացւոյ Գարազացւոց եպիսկոպոսի Ճառք. Վե-
նեսիկ. 1830, եր. 12:

Ներածեալ իցէ երջանիկ հարանցն զունակութեան և զպակասութեան բան լինել ի մարդկային կազմածիս, յորոց ի միոյն հրաժարեալ և զմիւսն ընդունել գաւանեցին զՔրիստոս առաք մերոյն փրկութեան։ Ողջ լեռ։ —

Դլուխ աստուածային ժողովրդեան, հովիւ քրիստոսեան բանաւոր հօտի, հայր մեծ, ի մեծագունի աթոռն նստեալ առաքելոյն Պետրոսի՝ Աստուածապատիւ Տէր Աթանաս պատրիարք¹ Անտիոքու մեծի, Խոսրովի նուաստ ծառայից։

Տէր իմ, Տէր։

Յիշես ապաքին, յորժամ հրամայեցեց² ի Դերայիգրոշտադ² եպիսկոպոսացն Թէոդոտութեայ և Աթանասի հարցանել զիս վասն հաւատոյ։ Տէր Աթանաս լոռութեամբն զժամանակարկեաց, և որ արդարն է և որչափ ինչ կացին առ նման, հանապազ բարեպաշտութեան բանս⁵ լսեցուցանէր ինձ, և ոչ զյետին ինչ։ Իսկ Թէոդոտութեայ⁴ ոչ միայն թէ հարցանելով ոչ էհարց զիս, այլ և զիւրն, զոր երկիէրն, ոչ սակաւ սակաւ, որպէս օրէն է խոհեմագունից, այլ միանդամայն և ի միասին է

1 ԱՅ պատրիարք. 2 Ա ի դիբայ ի դրոշտադ...;

2 իշերայիգրոշտադ է եպիսկոպոսաց.

3 Ա բարեպաշտութ ի անբանս. 4 Ա Թէոդորիութեան.

բայց թափեաց, զոր խորհէր զբանն, ոչ ու-
ղեղս, այլ առաւել թիւրս և հակառակ սուլբը
հարցն խոստովանութեան։ Զհայհոյութիւնն
ոչ գովեմ, բայց զպարզամտութիւնն և որ
առանց ստութեան զիւրն յայտնեաց խոս-
տովանութիւն, որչափ ինչ արժան իցէ, չնոր-
հակալ պարտ է լինել նմա. զի թշնամու-
թիւն յայտնեալ, զգուշանալ հրամայէ, իսկ
ընդ կեղծաւորութեամբ մտանել, յանդէտո
դաւաճանէ։ Եւ երանի թէ էր ժողովոյն
վնոյնպէս արարեալ¹, երկոքին կողմանքս ի
չարէ նորա աստուստ զերծեալ լինէաք, ոչ
նու² նենդաւոր և ոչ մեք նենդեալ գտա-
նէաք։ Այլ անտի լուութեան պարսպի զինքն
դարձնեալ ծածկեաց և որպէս կարթիւ բե-
րանովք այլոց զմեղ որսալ կամեցաւ, որք
ամենևին անվարժք և անհմուտք էաք ստել
յաղագս առ Աստուած խոստովանութեան³,
ոչ գիտեմ զմեղ խարել խորհեցաւ, թէ զիւր
ինքեան անձն, դանդաղիմ ասել թէ զնոյն
ինքն յաղագս որոյ բանս։ Եւ են այսոքիկ,
զօրս ամբարշտեալ լսեցուցանէրն մեղ մի
ըստ միոջէ։ յերիս ժամանակս փոփոխումն
ընդունել ասէր զՔրիստոսի և առ սակաւ
սակաւ յառաջատրութեամբ⁴ և յաւելուա-

1 Ա. արարել. 2 Ա. նայ. 3 Բ. խոստովանութեանն

4 Բ. յառաջատրութեամբ.

ծով զբովանդակն¹ յետ յարութեանն² շնորհէր գտանել նմա փառս, զկատարելութիւնն և զանապականութիւնն³ Ասացից և ես ի վերայ⁵ այսորիկ, զոր ասէրն Երեմիաս⁴. «ով տայր զգլուխս ջրհոր և զաշտ աղբիւրս արտասուաց», և որ ի կարգին է †, Եւ զի՞արդասէր ինք զինքէնէ Քրիստոս առ աշակերտոն. «Ճեսէք զիս, զի ես նոյն եմ» ‡, պարտ էր ասել մի կարծէք զիս, որ յառաջն էի, զի փոխեցայ յապականութենէ յանապականութիւն և յանփառաւորութենէ ի փառս և յանկատարելութենէ ի կատարումն».

Զի՞արդ և Պողոս⁵ ասէր, թէ ոչ էր նոյն «Յիսուս Քրիստոս ի փառս երէկ⁶ և այսօր, նոյն և յաւիտեանս» * . Ընդէր Եսայի յառաջաճայնէր զծնեցելոյն⁷ իմմանուէլ⁸ և Աստուած հզօր և Հայր հանդերձեալ աշխարհին ** . զի ոչ էր հնար զանփառն և զանկատարն և որ ընդ ապականութեամբն էր անդեալ, Աստուած կոչել և հզօր և Հայր հանդերձելոյն».

1Ա զբաւանդակն. 2 Յարութեան. 5Ա ի վերա-

4 Ա Երեմիաս. 5 Պողոս. 6 Ա երեկ.

7Ա զծնիցելոյն. 8Ա իման ուէլ.

† Երեմ. Թ. 1:

‡‡ Ղաւկ. ԻՒ. 39:

* Երբ. ԺԳ. 8:

** ԵԱ. Թ. 6:

Դարձեալ թէ ոչ էր մարմին նորա, որ տեսանելին¹ և շօշափելին, Բանին Աստուծոյ փառացն և զօրութեանն և կատարելութեանն լեալ հաղորդ, զիմրդ ասէր Յովաննէս² զանմարմին Բանն, թէ տեսաք զնա և ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին կենաց⁺: Զիմրդ ինքն ցկոյրն ասէր, հարցելոյն նորա, թէ ով է Որդին Աստուծոյ, և տեսեր զննա և որ խօսին⁵ ընդքեղ, նա է^{††}. պարտ էր ասել, թէ այն է Որդին Աստուծոյ, որ դեռ չեւ ևս է միացեալ ընդ ապականացուիս և ընդ անփառիս և ընդ անկատարիս:

Ծանեայ և զայս ինմա, ով Տէր իմ, զի զորինչ ասէր, ոչ գիտէր սահմանել, այլ և անդրէն իւրովք ասացուածովքն ընդ ինքեան և ոչ ընդ ոսոխի ումեք⁴, մարտնչէր: Ասէր յարդանդի կուսին միաւորեալ⁵ զԲանն Աստուած ընդ իւրում մարմոյն, յաղագս որոյ և բնութիւն մի զՔրիստոս ասէր դոլ, և յառաջ մատշելով՝ զնոյն բաժանէր⁶ յայլանմանս և ի զանաղանս, որպէս յառաջն ասացի, զոմն ամենակատար և փառաւորեալ և անապական ասելով, և զմիւսն ոչ նոյնպէս:

1 Ա տեսանէլին. 2 Բ Յօհաննէս. 5 Ա խոսին.

4 Ա ումեք. 5 Ա միաւորել. 6 Ա բարժանէր.

† Ա. Յովհ. Ա. 1:

†† Յովհ. Թ. 36—39:

Եւ դարձեալ զայսպիսաբար բաժանելն՝¹ անկարգապէս միաւորէր ասելով. «Ես ի խաչին զնոյն ինքն զԱստուածն Բան ասեմ գեղարդեամբն խոցեալ և քենուեալ բենոքն», որ գտանի այս ի բերան այնոցիկ, որ շփոթութեամբն ժպրհեցան ասել զմիաւօրութիւն Բանին ընդ իւրում մարմնում, զոր սուրբ հարքն բարեպաշտաբար սակա նորին ուսուցին զմեզ խոստովանել ասելով. «Հանչարչարելին չարչարի չարչարելեաւն»[†], եթէ² անմահական և անչարչարելի Բանն իւրացոյց իւր ի մարդկանէ մարմին, որով կարելի և հնարաւոր էր չարչարել և մեռանելու Խակ ես զարհուրեալ ի չարաշար նորա հայութենէ բանից, կապեցի զլեզուս և արձակեցի զլսելիսս, միանգամայն թէ և կամեցայ³ զբովանդակն գտանել զնորա զամբարշտութիւն⁴: Խսկ վերջինն նորա էր այս, և չարաշար բաժանումն ասէր. թէ զմարմինն իւր Բանն Աստուած տարեւալ դնէ առաջի Հօր և Հոգւոյն զկնի թաղմանն իբրև զբեռն ինչ օտարոտի և աշխատաբարձ ասելով,

¹ Ա զայսպիսիաբար բարժանելն, 2 Ա էթէ.

³ Ա կամնցա. 4 Ք զամբարշտութիւնն.

[†] ՕՃՆ. Երութ. Ճառ Եր. 71, Համ. Սերերիանոս Եր. 12.

«Ես վասն զի մէկին և ոչ կարացի զմար-
մինս իմ ընդիս միաւորել և իմումն հաղորդ
առնել փառաց և զօրութեան, պահեցի զայս
ձեղ առնել, զի կրկին էք»։ Ի դէպ է ըստ
նման՝¹ ասել, թէ և առնուլ² Բանին զմար-
մինն առանց Հօր և Հոգւոյն կամաց, և ա-
հա թշնամութիւն զհետ երթայ³, յորս ան-
բաւահատիկն է սէր և խաղաղութիւն, որք
սիրոյն և խաղաղութեանն⁴ են աղբիւրք։ Եւ
ինձ մի ոք մեղադիր լիցի այսպէս զբազմա-
թիւր մտածութիւնն յեղյեղուլ էպերական
բանիւք, զի ի նշաւակել դիմաց վերայ⁵ ան-
դանի ամենայն⁶ պարսաւական բան։

Արդ եթէ⁷ որպէս ասեն և այնպէս է,
ոչն է այն, որ ոչ է այնպէս, աշակերտքն ի վեր-
նաւանն ոչ զկենդանարար և զմեղսաքաւիչ
մարմինն ճաշակեցին⁸, այլ զանկատար և
զանփառ և որ չե ևս էր զգեցեալ⁹ զանա-
պականութիւն¹⁰։ Իսկ եթէ ճշմարիտ է, որս
պէտք և են իսկ ճշմարիտ բանն Քրիստոսի,
որ զմարմինն յառաջ քան զյարութիւնն
անուանեաց նոր ուխտ և քաւիչ մեղաց և

1 Ա նմանմայ. 2 Ա յառնուլ. 3 Ա երթա.

4Բ խաղաղութեան. 5Ա վերա. 6Բ «ա մ.» յետոյ
աւելացրած տողի վերայ. 7 Ա էթէ.

8 Բ ճաշակեցի. 9 Ա սգեցնլ. 10 Բ «զապակա-
նութիւն», որ սխալ է.

կենաց տուող¹, ապա² յայտ է, թէ՝ նա է
սուտ ի սերմանել ի լսելիս հաւատացելոց
Քրիստոսի զմոլար վարդապետութիւնն։ Եւ
վկայ³ ածէր զփրկչականն բան իւրոյ բանին.
«Հայր փառաւորեա զիս առ ի քէն փառօք,
և թէ փառաւորեա զՈրդի քո, և թէ Յիւ-
սուս չև էր փառաւորեալ» †. աստի ասէր
յայտ, թէ ի յարութեանն զգենլոց⁴ էր
փառս և զանապականութիւն և զկատարե-
լութիւն⁵. Արդ ըստ նորա բռնադատելոյն
զմիտս բանիս՝ Բանն Աստուած փախեցաւ ի
հայրական փառացն ի լինելն իւր մարդ՝
«Թէ զոր ունէի առ ի քէն յառաջ բան զլիւ-
նելն աշխարհի», որովհետեւ լինի այս, թէ
Քրիստոսի մարդեղութիւն աշխարհի փրկու-
թիւն գործեաց⁶ և ինքեան անձին հասոյց
զրկանս և աղքատութիւն. իսկ զի՞նչ ասա-
ցեալն ի նմանէ ի վերնատանն, «այժմ փա-
ռաւորեցաւ Որդի մարդոյ» ‡‡, և կամ զհօր
զաղաղակելն յերկնից. «փառաւոր արտ-
րից» ‡‡‡, և այսոքիլ յառաջ քան զյարու-

1 Բ տուող. 2 Ա ապայ. 5 Ա վկա. 4 Ա սգենլոց էր.

3 Բ զկատարելութիւնն. 6 Ա գործեց.

† Յովհ. ԺԷ. 5, Յովհ. ԺԷ. 1, Յովհ. Է. 39.

‡‡ Յովհ. ԺԳ. 31:

‡‡‡ Յովհ. ԺԲ. 28.

Թիւնն: Այլ և զայն ասելի է ըստ նորա մտածութեանցն, թէ և Հայր կարօտ էր փառաց, զի զկնի ասելոյն, «այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ», ի վերայ բերէ, թէ «Աստուած փառաւորեցաւ ինմաս»։ Նոյնպէս և զառաքելոյն բանն¹ քարշէր իւլոց բանիցն ի վկայութիւն, զոր ի պրական իսկ է գրել, և զի ոչ ևս դառնալոց էր մարմին նորա յապականութիւն, դառնալ, յորումէրն, զայն ասէր։

Յարէր յասացեալս և զայն ևս, մի ձանձրանալ ի լսել, ամաշեմ, Տէր իմ, զոր լսեցայց² ինձ մի ըստ միոջէ Թէոդիտէ, զի և տուեալ իսկ է քեզ յԱստուծոյ ղերկայնմըստութիւն³ և զքաղցրութիւն, զի թէ թարդմանն առ ժամայն⁴ ոչ էր դնացեալ, անդրէն ի տեղոջն իսկ կամէի ընդ քեզ խօսել⁵ յանդիման նորա. և զի ասէր, թէ վասն զի անկատար և անփառաւոր և ապականացու եղաց, մնաց մարմինն Քրիստոսի ի ծննդենէն մինչեւ ցյարութիւնն, պարտ էր ըստ այսմիկ և զնա չարչարելի և մահկանացու ասել մինչեւ ցյարութիւնն. ոչ զայն ասեմ, ասէր, որ ի գերեզմանին և կամ որ ի մեղացն է, այլ

¹ Բ բան. 2Ա լսեցայց. 5Բ ղերկայնամառութիւնն.
2 Բ առ ժաման. 3 Բ խօսիլ.

որ ինչ միանդամ յիւրաքանչիւր կիրսն գտան
նի, ի հոգեկան՝ և ի մարմնական, զայն ըն-
դունել տաեմ Քրիստոսի ի մարմնն իւր-
Արդ տես, Տէր իմ, թէ օրպէս անպատկա-
ռաբար զաննման բանն բռնադատէ աննման
մտածութեամբք և ջանայ՝ զմարդարէին
զուղիղ՝ բանն, ոչ տացես սրբոյ քում տե-
սանել զապականութիւն՝, առ իւրն քարշել
թիւրել խորհուրդ, զի թերեւս կարանցէ ի
ձեռն այնորիկ զգեցուցանել՝ մարմնայն Քրիս-
տոսի զապականութիւն։ Եւ զմարդկային
զկիրս, որով զմերն բժշկեաց Տէրն, ապա-
կանութիւն անուանելով և ոչ կիրս փրկա-
կանս. զի ասաց, թէ դառնալ յայն ասէ՞,
որ էր յառաջ։ Եւ զոր՝ մարդարէն զբանն
ի հանդերձեալ ժամանակն հայեցուցանէ առ
որ ինչ լինելոցն է, սա զնոյն ի վերջ յան-
ցեալն դարձուցանէր ժամանակն։ Ոչ հեռք
և օտար է մարդկային բնութեանս զինք
մահուանն վերստին յառնել և ընդ լծակ
մտանել մահու և ապականութեան՝, զոր
օրինակ Ղազար և ըստ նմանքն՝, որ պքան-
չելքն Փրկչին յարեան և ի նմին հաստա-

1 Ա ի հոգէկան. 2 Ա ջանա. 3 Ա զուղիղ.

4 Ա սգեցուցանել. 5 Ա դառնալ յայնպէս, որ էր.

6 Ա որ. 7 Բ և յապականութիւն. 8 Ա և զազար և

† Սաղմ. ԺԵ. 10:

տեալ¹ կացին, մնացին յապականացու և ի
մահկանացու² կեանս:

Բայց արդ գարձեալ երթիցուք վերս-
ախն առ մարդարէական բանն և ի նաևնէ
իսկ առեալ պատճառ լուծանել զտարակու-
սանսն թէոդիտեայ³, թէ արդ արդեք⁴
իցէ ի գրայն դայթակղեն նորա և ոչ յին-
քեան կամակորութենէ և յամառութենէ, և
զի սովորութիւն է գրոց ոչ միայն թէ ի վե-
րայ նորին դիմի և ամանակի պահել զա-
ռաջարկութեան բանին հոլսվ, այլ է երբէք,
որ առ միմեանս փոփոխեալ լինին, որպէս
և ասէ ուրեմն Դաւիթ ի ձլջ սաղմոսին, «Առ
դետո Բարելացւոց» ևայն: Բանն ասացեալ
ցինէր առ Երտւապղէմացիս, որ հանդերձեալ
էին երթալ ի գերութիւն ի Բարիլոն⁵ ի նա-
բաւդողանսսրայ⁶, և մարդարէն զինքն ի
ներքս արգելեալ փակէ հանդերձ անցելօվն
մասմահակաւ: Եւ արդ զինչ զարմանք են,
եթէ առաքեալն յերկուս բաժանէ ամանա-
կըս զմարդարէին բան ի հրապարակախօ-
սութեանն իւրում, զմին բանն պատմած ի-

ըստ նմայքն. 1Ա հաստատել. 2Ա «և ի մահկանա-
ցու» կրկնուած է, բ «ի» նախդիրը չունի.

3Ա թէոդիտեան=թէոդիտեայ, բ թէոդիտեա.

4Ա թէ արդարեօք իցէ. 5Բ Բարիլոն.

6Ա ի նաբուգոնոսորան.

րաց մանր խոնարհեցուցանէ յանցեալ ամառնակն ասելով, զի յարոյց զնա ի մեռելոց. իսկ զմիւսն մարգարէական ձեռվ շարադրել յապառնիս հայեցուցանէր ասելով, «ոչ ևս դառնալոց է մարմին նորա յապականութիւն», որ յայտնապէս աստուստ բացափայլեալ ¹ բանիս հոլանիցին միտք, և յանդիմանեսցի Թէոդիտեայ ² տարակարծելի մոտածութեանն ձայն, յորժամ զերկսսեան առմին շարամանելով տապալումն ³ ներագրեացէ զբառս այսպէս ասելով ըստ անցելումն, և զի յարոյց զնա Աստուած ի մեռելոց, և ոչ դարձցի ⁴ մարմին նորա յապականութիւն և կամ ⁵ ըստ ապառնոյն այսպէս, և զի յարուցանելոց էր զնա Աստուած ի մեռելոց, և ոչ դառնալոց էր մարմին նորա յապականութիւն։ Արդ զայսիլոյս բերելի չնորհացՀոգւոյն սրբոյ և եղեալ առաջի աստուածանէր բարեբարոյից, որ ընդունելոց է ընկալցի, և որ արհամարհելոց է, արհամարհեսցի։ Բայց առ այսոքիւք ⁶ ասասցուք և զայսի թէ ցյարութիւնն ապականութեան ծառայեաց մարմինն Քրիստոսի և զինի յարու-

¹Ա բացափայլել. ²Ա Թէոդիտեա Բ Թէոդիտեայ.

³Ա տարպալումն. ⁴Բ և ոչ դառնալոց էր մարմին. ⁵Ա «կամ» չունի. ⁶Բ այսոքիւ.

թեանն փոխեցաւ յանապականութիւն¹, իւ
իւկը մեծացոյց զնա յառաջասացութիւն
ուսւրբ Հոգւոյն, և կամ որով իւկը առաւելեալ
դատաւ մարմնացեալ Բանն Աստուծոյ, որ ի
ծննդենէ մինչև ցգերեզման թաղեալ կան
յապականութեան և ապա յարութեամբն
զգենուն² զանապականութիւն։ Եւ դար-
ձեալ զկնի յարութեանն ի բաց բարձեալ ե-
ղեն ի փրկչական³ մարմնոյն անուանք մարդ-
կային բնութեանս, ընդէր ապա փախչի ի
Յուղիոմեայ Դիկառնացւոյ, զի երկրպին զմի
կարծիս ունին վասն մարմնոյն⁴ Քրիստոսի.
Նա ի ծննդեանն ոչ խոստովանելով զայսոսիկ
զանուանս, պարտաւորեցաւ առ աչօք ասել
զմարմինն Քրիստոսի, և սա զկնի յարութեանն
զայսոսիկ ի բաց բառնալով ի մարմնոյն Քրիս-
տոսի զանուանս. զնոյն խորհին վասն Քրիս-
տոսի; ոմն յառաջ և ոմն յետոյ համաձայն⁵
լինելով իրերաց, նոյնպէս երկրպին առ աչօք
գոտանին ասացեալ զմարմինն Քրիստոսի և
կամ յերկնից բերեալ Եւ դարձեալթէ որպէս
առեն զկնի յարութեանն լինել Բանին Աստու-

¹ Ա բառի երկրորդ վանկը ճնաշ՝ տողի վերայ,

² նոյն վանկը յետոյ աւելացրած. 2 Ա սգենուն

զան .. ³ «զանապականութիւն», ստորագծուած

վանկը յետոյ աւելացրած։ 3 Ա փրկչական.

⁴ Բ մարմնոյ. 5 Ա հոմաձայն.

ծոյ և մարմնայն իւրոյ միաւորութիւն, և ի¹ միաւորութենէ անտի մի ասել ի վերայ Քըր-րիպտոսի բնութիւն, ոչ կարէ հեռանալ² ի նեստորի մոլարութենէն, զի և նա զնոյնգ ա-սէք Ասկայն մի ինչ ի նա լաւութիւն գտա-նիքան ի սմա, զի նեստոր ի ձննդեան, որ ի կուսէն, մինչև ցյալիտեան երկոցունց բնու-թեանցն զմի պատիւ և փառս չնորհէր³, իսկ սա զօմն արժանի առնէ այնոցիկ և զոմն ինու-ցանէ զրկէ: Եւ նեստոր երկոցուն բնութեանցն մի դէմն խոստովանի զՔրիստոսի, իսկ սա մի բնութեանն⁴ երկուս դէմն որոշէ, զի զանա-զանութիւն դիմաց առաւել հետեւ, քան-թէ բնութեան⁵.

Արդ ոչ միայն թէ զանհաւանութիւն և զանհաւատութիւն ունին ասացեալքակիթեռզի-տեայ⁶, այլ առաւել ևս զսուտն⁷ յինքեան ըե-րէ, զի թէ ճշմարտեսցի ձննդեանն ասել զմաւ-նին ընդ իւրում մարմնայն զմիաւորութիւնն, ստեաց յազադս նորին յետ յարութեանն ասել զմիաւորութիւն, իսկ եթէ ճշմարտեաց զվեր-ջինս, ստեաց զառաջինն, զի եթէ⁸ դերկո-սին միանգամայն ի միասին կամ ճշմարտել կամ ստել, անտեղի ըստ նմին և զմի զբնու-

1 Ա զինի. 2 Ա հեռենալ. 3 Բ չնորհեր.

4 Բ բնութեան. 5 Բ բնութեանն. 6 Ա թէնդի-տեա, 7 ի թէնդիտեա. 7 Պ զսուտս. 8 Ա էթէ-

թեան ասել ի վերայ Քրիստոսի, թէ համա-
դայսւթեան բանին և մարմայն ասէ. այդ
ի Կարնթացիոցն յանգի՝ ¹ հերձուած. զորմէ
դրէ Աթանաս առ Էպիկտէ, «թէ որ դժոխք
դպայամցին ² ասել մի բնութիւն Բանին և
մարմայնա։ զիըստ համագոյութեան ասել ³
մի բնութիւն ի Քրիստոս, առնէ զերբորդու-
թիւնն չնրորդութիւն՝ և ոչ եւ Երբորդու-
թիւնն Ապօ եթէ ըստ միաւորութեան
ասէ զմի բնութիւն ի վերայ Քրիստոսի, ու-
շանօր զմիաւորութիւն ⁴ խոստովանի, ան-
շանօր ⁵ և զմիաւորութիւնն հարկաւոր է աւ-
սել ի վերայ Քրիստոսի և կամ ի ծննդեանն
և կամ յարօւթեանն։ Զի ի ծննդենէն և յա-
ռաջ մի ասել բնութիւն, և զմինն դարձեալ
յերկուս բաժանել որակութիւնս և գերկու-
սին ընդ զանազան կրիւք և ներգործու-
թեամբք արկանել; ոչ միայն թէ ստութիւն ⁶,
այլ ընդ սնութեանն և զանսւսումնութիւն ⁷
բերէ։ Եւ դարձեալ զի արդ. Աստուածածին
դիմէ ասել զսուրբ Կոյսն, զծնեալն ի նմանէ

⁴ Ա յանդի. ² Ա սգայուեցին. ⁵ Բ բոտ համա-
գութ՝ ի ասել. ⁴ Ա ուրանուր զմիաւորութիւն.

⁵ Ա անտանօր. ⁶ Ա ստարւթիւն բերէ.

⁷ Ա զանսւսումնութեամբ.

անհաղորդ լեալ ասելով աստուածային զօն
բութեանն և փառացն և անապականու-
թեան և կատարելութեան։ Որպիսի ինչ օ-
րինակաւ կարծեսցէ գոլ զծնեալն, ըստ նը-
մին անուանեսցէ և զծնողն. մարդ ասէ ըզ-
ծնեալն ի նմանէ՝ թափուր ի փառաց և ի
կատարելութեանէ և որ ոչ է զգեցեալ¹ զա-
նապականութիւն, ըստ այսմիկ արժան է
մարդածին անուանել զսրբուհին Մարիամ։
Գտանի այսպիսաբար² դաւանութեամբ գե-
րազանցեալ քան զնեստոր յամբարշտելն³,
զի նեստոր, որպէս յառաջն⁴ ասացի, եր-
կոցունց բնութեանցն զմի ունէր ասել զճո-
խութիւն և զփառս և զպատիւ, այսինքն է
աստուածայնոյն բնութեանն և մարդկայ-
նոյն⁵, իսկ սա զԱստուածն⁶ Բան ունող⁷
այսոցիկ ասէ գոլ, իսկ զմարմինն ամենեին⁸
անբաժ սոցա լինել⁹ ասէ մինչև ցյարու-
թիւնն, և ապա յետ յարութեանն Հօր և
Հոգւոյն ասէ վերաբերել զմարմինն ի փառա,
ի կատարելութիւն և յանապականութիւն,
և արժանի առնել այնուհետև աստուածա-
յին Բանին բնութեան հաղորդելոյ։ Եւ այս

¹ Ա սգեցեալ. ² Ա այսպիսիաբար. ³ Բ յամ-
բարշտեալն. ⁴ Բ առաջն. ⁵ Ա մարդկանոյն.
⁶ Բ ա ծն բան. ⁷ Բ ունող. ⁸ ամէնեին. ⁹ լինիլ.

վեր և վայր ուղղողի ստութեանն ¹, անդէն
ի նմին ընկղմեալ ² գտանի խոստովանու-
թեան ³. զԱստուածածին անուն դնէ ի վե-
րայ Կուսին և ծնանել ասէ գերեզմանի
զԱստուած, զամն անստամբ միայն պատուէ,
և զօմն արգեամբք. զմարդն կենդանի և
զբանականն և որ պատկերն է Աստուծոյ ոչ
համարի արժանի ծնող ⁴ գոլ Աստուծոյ, և
պանշտմնզ զգերեզմանն Աստուածածին անուա-
նէ. Եւ զնոյն ասէ և ոչ ասէ, բանիւ խոս-
տովանի զՄարիամ Աստուածածին, և զծր-
նեալն ի նմանէ զԻրիստոս Աստուած, և ⁵ ըզ-
ճմարտութիւն իրին յարութեամբն հաս-
տատէ. յորում տեղւոջ զբանն հաստատէ,
անտանօր ⁶ պարտ էր և զգործն հաստատել,
և կամ ուրանօր զգործն ⁷ ճշմարտէ, ճշմար-
տել և զբանն. Զի ամենայն իրի սահման
յերիցս յայսցանէ կատարի, ի մոտածութենէ
դոյին, և ի նոյն ինքն ի դոյին, ի տեսութենէ
և ի բառէն, որ սահմանէ ⁸ զիրն, որպէս որ
կամիցի զսահման մարդոյն բացայայտել ⁹.

1 Բ ստութիւն. 2 Ա ընկղմեալ.

3 Բ խոստովանութիւն. 4 Բ ծնող.

5 Ա «և» կրկին անդամ. 6 Ա Բ այսպէս.

7 Ա «հաստատել և կամ ուրանօր զգործն» բա-
ռերը չունի, ուստի և անկապ. 8 Բ սահմանի.

9 Ա բայցայայտել.

Նախկին յարձակի մոգքն սեստնել պմարդըն, և զնոյն գմնացն տես և ազացն¹ առաջի դնէ, և ապա բանիւ զնոյն սահմանէ առաելով՝ մարդ, կենդանի, մահկանացու, միւտաց և հանճարոյ բնդունակ։ Խոկ Թէոդիւ տէ ըստ իւրում պանծալի խմաստափրուս թեանն, զարծուին՝ արծուի ասէ գոլ, և պարագրէ² զնա հետևատի, չորքառանի, եղիներաբուս, կնշակաւոր, բչողական, որ զինի բնդաեռն պարագրութեանն արջառ ճշմարտութեամբ և ոչ արծուիւ Խոկ սուլինչ ժամանակի թողու զարջառոյն³ բան և ի վերայ բերէ զանարծուին։ Եւ այսպէս ինք իւր լինի հակառակ և ինքեան բանիւ զիւրն առեղծանէ զբանս։

Դարդիէլ հրեշտակագետ յաւետարանել սրբոյ կուսին ասաց. «որ ծնանելոցն է իքէն սուրբն է, և Արդի Առուծոյ կոչեոցի» † և Խոկ Թէոդիւէ ասէր. «ի Մարիամայ ծնեալն անափառաւր և անկառապ է և զաղականուս թիւն զեեցեալ⁴ և առա կեղծաւորի ասնլավ, «ի գերեզմանին զապականութիւն ոչ ասեմ ընդունել մարմնոյն Քրիստոսի»։ Օրինակ իմն որպէս ոմն յումեմն մեկնոցի հուր ծրարեւ-

1 Բ աշածն 2 Ա պապրէ. 3 Բ զառջառոյն
4 Ա սղեցեալ.

† Կուկ. Ա. 35.

րդի վերածոյնէ ոչ կիզալ մեկնոցին ի հրոց
անտիւ. և հնար իսկ ոչ է այսմ ոյսպէս լինել,
ոչ առենայնքս¹ ի մարմնականացս որ հան-
գերձեալ իցեն. զանապականութիւն² դդեռ-
նալ³, նախկի առատկանի գոյացեալ իրն,
որպէս Պօղոս⁴ իմաստասիրէ⁵ և ապա նորու-
դի անդուստ յանապականութիւն։ Այս ե-
թէ գերեզմանն եղե գգեցուցանող⁶ մարմնոյն
բրիտուսի, զանապականութիւն ասել պար-
ափա, թէ կամիս և թէ ոչ կամիս. նախկին
առականեալ դմարմինն ի գերեզմանին, որ-
պէս պահանջէ իրացն թէ ընութիւն, և
ոպա յետ այնորիկ փոխել նմա յապա-
կանութենէ յանապականութիւն։ Եւ ոչ մի-
ոյն այս, այլ ոչի ի սկզբան լինելութեանն
նորին օրինակաւ գայ ի գոյացութիւն, պատ-
ճառ գոյացութեանն նախկին լուծանի յիւր-
մէն պատճառէ, և ապա զկնի այսորիկ լու-
ծեալ և յապականեալ իրէն առնու սկիզ-
բըն լինելութեան⁷ գոյաւթեան, որպէս և
խաստասէրն ընութիւն զի սկիզբն զայն
անուանեած ասելով, սկիզբն շարժման և գա-
դարման, այսինքն, եթէ լուծանելով⁸ շաբա-

1 Ա. Բ ամէքս. 2 Բ զապականութիւն», որ հեղի-
նակի մտքին հակառակ է. 3 Ա սգենուլ.

4 Բ Պողոս. 5 Ի իմաստասիրի. 6 Գգեցուցանող.
7 Ա լինելութեանն. 8 Ա լուծանելով.

Ժեցաւ յայնմանէ, որ ինչ էրն և առնլով՝
զգոյացութիւն կատարման, դադարեաց։
Արդ ասա ինձ, ով Թէոդիտոն, զիանդ
երեր ընդիւր մարմինն Քրիստոսի զապակա-
նութիւն, զանփառութիւն, զանկատարու-
թիւն, պատճառ ոչ ունելով ի սկզբան լինե-
լութեանն, որ զայսոսիկ յապականելն իւ-
րում նուա երթեալ² մատուցանէր, «զի որ ի
նմայն ծնեալ է, ի Հոգւոյն⁵ սրբոյ է»†, ասաց
հրեշտակն առ Յովսէփի Եւ եթէ մարդկան
սերման էր բողբոջն Քրիստոս, հաւանէր ար-
գեօք և զպտուզն ըստ բնութեան քատա-
կել արմատոյն, իսկ եթէ ի Հոգւոյն սրբոյ է
ըստ հրեշտակապետին ձայնի Աստուած ծըն-
եալն, զի Աստուած ծնելութեան առիթ։
Աթանաս ասէ. «վասն զի մարմնանեալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն, զի ոչ կարէ բնակիլ մահ ընդ կեանս, և ոչ ապա-
կանութիւն⁴ ընդ անապականութիւն բնաւ կէ»։ Պօղոս ասէ. «առաջի մարդն յերկրէ հո-
ղեղէն, իսկ երկրորդ մարդն տէր յերկնից»։ ††

1 Ա առլով. 2 Ա ելթել. 5 Բ զի որ ի նմայն ծնեալ է հոգոյն սրբոյ. 4 Բ ապականութեան.

† Մատթ. Ա. 20.

† Ա. Կոր. ՓԵ. 47:

Ընդէր դու, ովք Թէոդիտէ, ի բաց բառնաս
և Տեառնէ զերկնայնոյն զմեծութիւն զօրու-
թեանն ¹ և ոչ տաս թոյլ յաղթել հզօրին
զտկարագոյնն և բարձրագունին ² զնուաս-
տըն, զօրմէ ասէ Գրիգոր աստուածաբան.
Ժխառնեցաւ ընդ. Աստուածութեանն ³ և ե-
զե մի, վեհագունին յաղթելով։ Արդ ոչ է
պարտ ժամանակի և գործոյ ծառայեցուցա-
նել զջէրն և զԱրարիչն ժամանակաց ⁴ և
գործոց, փոփոխէ զժամանակս ⁵ և զգործս
ըստ իւրոց կամաց, իսկ ինքն նոյնպէս կայ
մնար ⁶ անփոփոխելի և անայլայլելի։ Եւ
դարձեալ ⁷ ոչ է իրաւացի զերիս ⁸ զայսոսիկ
